


Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ



## ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ

*ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԵՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ*





Հ.Յ.Դ. Բիւրոյի  
Երիտասարդական  
Գրասենեակ

**ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ  
2023**



# ՄԵՐ ԽՕՍՔԸ

Յունիս 2023ին, ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակը նախաձեռնեց «Հայ ուսանողութիւնը Արցախի համար» խորագիրով ուսումնասիրութիւններու մրցանքի նախագիծին՝ նպատակ ունենալով համախմբել հայ ուսանողութիւնը Արցախի հիմնահարցին շուրջ, յատկապէս նկատի ունենալով 2020ի արցախեան պատերազմէն ետք Արցախի դիմագրաւած ճակատագրական ժամանակաշրջանը եւ անհրաժեշտութիւնը տեսնելով հայ ուսանողութեան մասնագիտական ներուժը ծառայեցնելու Հայ դատին եւ մասնաւորաբար Արցախին:

Ծրագրին հիմնական նպատակն էր մէկտեղել հայ ուսանողութեան կարողութիւնը՝ քաղաքական, տնտեսական, ընկերաբանական, իրաւագիտական, մշակոյթի եւ հետաքննական լրագրութեան բնագաւառներուն մէջ, ապա տրամադրելի դարձնել կատարուած ուսումնասիրութիւնները հայանպաստ գործունէութիւն ծաւալող ազդեցիկ հիմնարկներու՝ արդիւնաւետ օգտագործման համար: Երկարաժամկետ իմաստով նախաձեռնութիւնը կը միտէր նպաստել քննական մտքի եւ մօտեցումներու զարգացման, որ հիմնաքարն է հասուն քաղաքական մտքի եւ գործունէութեան: Աւելին, ուսումնասիրութիւններու ներկայացման պայմաններէն էր նաեւ ներկայացնել առաջարկութիւններ եւ գործունէութեան հեռանկարային առաջադրանքներ: Այս նպատակ կը հետապնդէր բարձրացել հայ ուսանողին ներդրումը եւ ներգրաւուածութիւնը ազգային կեանքին մէջ:

Ծրագրին աշխատասիրութիւն յանձնեցին 12 ուսանողներ եւ 1 ուսանողական խմբակ՝ Հայաստանէն, Արցախէն, Լիբանանէն, Իրանէն եւ Միացեալ Նահանգներէն: Ուսանողներու աշխատանքին հետեւեցան հանրայայտ եւ մասնագէտ խորհրդատուներ:

Փետրուարի 2024ին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ «Հայ ուսանողութիւնը Արցախի համար» ուսումնասիրութիւններու մրցանքի ամփոփիչ ձեռնարկը, հովանաւորութեամբ Արցախի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան: Ձեռնարկին ելոյթ ունեցան ծրագրին մասնակցող լաւագոյն ուսանողները՝ ներկայացնելով իրենց կատարած ուսումնասիրութիւնները, ինչպէս նաեւ վկայութիւններ տուին ուսանողներուն խորհրդատուները:

*Յաղթող ճանչցուեցան հետեւեալ ուսանողները.*

**– Առաջին մրցանակ**

Նիւթ՝ «Ազրալէյճանի յարաբերութիւնները Վրաստանի հետ», խորհրդատու՝ Աբրա-

համ Գասպարեան, «Ճենեսիս Արմինիա» կեդրոնի հիմնադիր տնօրէն, Հայաստան Ոսանողական խմբակ՝ Յովհաննէս Ղազարեան, Լիլիթ Եկմալեան եւ Լատուշ Սիմոնեան, Հայաստան

**- Երկրորդ մրցանակ**

Նիւթ՝ «Ազրպէյճանի խաւարային դիւանագիտութիւնը Եւրոպայի մէջ», խորհրդատու՝ Հեղինէ Էվինեան, ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի Գրասենեակի տնօրէնուհի, Պելճիքա Ոսանող՝ Նարօտ Նորամանեան, Հոլանտա

**- Երրորդ մրցանակ**

Նիւթ՝ «Ազրպէյճան եւ Իսրայէլ յարաբերութիւնները», խորհրդատու՝ Շահան Գանտահարեան, Պէյրութի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր, Լիբանան Ոսանող՝ Ժաննա Վարդանեան, Հայաստան

Յատուկ գնահատանքի արժանացան հետեւեալ երկու նիւթերը, որոնք իրենց կարելութեամբ եւ այժմէականութեամբ կը յատկանշուէին:

- Արցախի հոգեւոր ժառանգութեան պաշտպանութեան հիմնախնդիրը:

Խորհրդատու՝ Գարեգին վրդ. Համբարձումեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի ղեկավար, Հայաստան

Ոսանող՝ Վահագն Խաչատրեան, Արցախ

- Արցախի շրջափակման եւ բռնի տեղահանութեան կործանարար անդրադարձը Արցախի մանուկներու իրաւունքներու եւ հոգեվիճակին վրայ:

Խորհրդատու՝ Գեղամ Ստեփանեան, Արցախի Հանրապետութեան Մարդու իրաւունքներու Պաշտպան, Հայաստան

Ոսանող՝ Տաթև Դաւթեան, Հայաստան

Այս գրքոյկին մէջ տեղ կը գտնեն մրցանակի եւ գնահատանքի արժանացած ուսանողներուն ուսումնասիրութիւնները:

ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակը յանձնառու է շարունակելու այս ծրագիրը, հաւատալով անոր առաքելութեան՝ հայ ուսանողութիւնը հայանպաստ գործունէութեան մղելու եւ առաւելաբար այսօր Արցախի համար ու արցախահայութեան իրաւունքներուն պաշտպանութեան ի խնդիր:

**ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ, ԼԱՏՈՒՇ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ,  
ԼԻԼԻԹ Ս. ԵԿՄԱԼԵԱՆ,  
Երեւանի պետական համալսարան**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ԵՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵԻ.  
ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ  
ԱՌԿԱՅ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ**

Մրցանքին Առաջին կրթաթոշակին արժանացած ուսանողական խմբակի ուսանողներ **Յովհաննէս Ղազարեան, Լատուշ Միմոնեան եւ Լիլիթ Եկմալեան (ՀՀ) հետազոտութիւնը, նիւթ՝ «Ազրպէյճանի Յարաբերութիւնները Վրաստանի հետ», Խորհրդատու՝ Աբրահամ Գասպարեան, Ճէնէսիս Արմինիա կեդրոնի հիմնադիր տնօրէն, ՀՀ:**

**Լատուշ Անդրանիկի Միմոնեան** - Սովորել է Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւններ բաժնում: Ունի բակալարի եւ մագիստրոսի աստիճան միջազգային յարաբերութիւններում: Զբաղուում է ամերիկագիտութեան, միջազգային յարաբերութիւնների, հարակովկասեան տարածաշրջանային հարցերով: Հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է ԱՄՆ ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, ԱՄՆ քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում, ԱՄՆ-ՌԴ յարաբերութիւնները:



**Յովհաննէս Գեորգի Ղազարեան** - 2016–2022թթ. Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի բակալարիատ, որակաւորումը՝ միջազգային յարաբերութիւնների մասնագէտ: Աւարտական աշխատանքի թեման է՝ «ԻԻՀ դիրքորոշումը արցախեան հիմնախնդրում»: 2022-2024թթ. Երեւանի պետական համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի մագիստրատուրա, որակաւորումը՝ միջազգային յարաբերութիւնների մասնագէտ: Մագիստրոսական թեզի թեման է՝ «Հարակովկասեան երկրների հետ տրանսպորտային հաղորդակցութիւնների հիմնախնդիրը ԻԻՀ արտաքին քաղաքականութեան համատեքստում»:



Գիտական հետաքրքրութիւնների շրջանակը՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը, ՀՀ-ԵՄ փոխգործակցութիւնը, միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան խնդիրները, միջազգային հակամարտութիւնների կարգաւորումը, ՀՀ-ԻԻՀ յարաբերութիւնները, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը եւ շահագրգիռ երկրների դիրքորոշումը եւ հարակովկասեան տարածաշրջանի համար կարեւոր նշանակութիւն ունեցող միջազգային տրանսպորտային միջանցքները:

**Լիլիթ Եկմալեան** - 2017-2021թթ. սովորել ու աւարտել եմ Երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետի պատմութեան բաժինը: Նոյն ֆակուլտետի Համաշխարհային պատմութեան ամբիոնի մագիստրատուրան աւարտել եմ 2023 թուականի յուլիսին:

Այժմ աշխատում եմ դպրոցում, որպէս պատմութեան ուսուցիչ:



**Բանալի բառեր-** Ազրայէճան-Վրաստան ռազմավարական գործընկերություն, ազգային անվտանգության ռազմավարություն, Միացեալ ազգային շարժում(ՄԱՇ), Վրացական երազանք(ՎԵ), ազրայէճանական համայնք, հասարակական ընկալումներ, ազդեցության գործիքակազմ, «SOCAR»,

Դաւիթ Գարեջիի վանական համալիր, Քվեմո Քարթլի, Մաոնեուլի

## **Ներածություն**

Հարաւային Կովկասում աշխարհաքաղաքական յարաբերութիւնների խճճուած բնոյթը ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ քննութեան առնել Վրաստանի եւ Ազրայէճանի միջեւ յարաբերութիւնների խնդիրը: Այս երկու երկրների միջեւ յարաբերութիւնների տինամիքան, որն ամբողջանում է ռազմավարական գործընկերութեան եւ ռազմավարական կախուածութեան երկակիութեամբ, կազմում է մեր համապարփակ ուսումնասիրութեան էութիւնը: Սոյն յօդուածում քննարկում են Վրաստանում Ազրայէճանի նկատմամբ առկայ բազմակողմանի ընկալումները, բացայայտում են որոշակի բարոյշերտեր, որոնք որոշում են կամ ապագայում դեռ կարող են որոշել երկու երկրների յարաբերութիւնները: Յետազօտութիւնն ուղուած է Վրաստանում տարբեր շահագրգիռ կողմերի՝ հասարակութեան, պետական պաշտօնեաների, ընդդիմութեան գործիչների, ազդեցիկ վերլուծական կենտրոնների եւ առանցքային ազդեցութիւն ունեցող անձանց պատկերացումների վերլուծութեանը: Ուսումնասիրելով այս տարաբնոյթ տեսակէտները՝ մենք ձգտում ենք ամբողջական պատկերացում տալ Վրաստանում ձեւաւորուած ազրայէճանական կերպարի վերաբերեալ:

**Սոյն աշխատանքը կատարելիս անցկացրել ենք հարցազրոյց ոլորտի երկու փորձագէտների հետ (փորձագէտ 1 եւ փորձագէտ 2): Հարցազրոյցները նպաստել են ուսումնասիրութեան առաւել համակողմանի եւ ընդգրկուն իրականացմանը:**

**Մեթոտաբանութիւն.** Աշխատանքում օգտագործուել են պատմա-համեմատական, իրադարձային, բովանդակային, համակարգային վերլուծութեան մեթոտները:

**Ուսումնասիրութեան նպատակն է** բացայայտել Ազրայէճանի նկատմամբ առկայ ընկալումները Վրաստանում: Նպատակին հասնելու համար մեր առջեւ դրել ենք հետեւեալ խնդիրները՝

- Ուսումնասիրել Վրաստանի ռազմավարական փաստաթղթերը, որոնք սահմանում են արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները, եւ ընդգծել Ազրայէճանի դերը այդ փաստաթղթերում,



- Իրականացնել հասարակական կարծիքի վերլուծություն, ուսումնասիրել վրացական հասարակության տրամադրությունները Ազրպեյճանի նկատմամբ.
  - ♦ Ինչպես են հասարակ քաղաքացիներն ընկալում իրենց ազրպեյճանցի հարեւաններին:
  - ♦ Ինչ պատմական եւ քաղաքական գործոններ են ձեւաւորում այս ընկալումը:
  - ♦ Հարցումների, հարցազրոյցների բովանդակային վերլուծութեան միջոցով ամբողջացնել լայն զանգուածների տրամադրությունների առկայ պատկերը:
- Հետազօտել Վրաստանի իշխանութիւնների եւ ընդդիմադիր ուժերի մօտեցումները Ազրպեյճանի, նրա վարած քաղաքականութեան նկատմամբ,
- Բացայայտել Ազրպեյճանի կողմից ազդեցութեան տարածման հիմնական գործիքակազմը. հետազօտել Ազրպեյճանի իշխանութիւնների կողմից կատարուող աշխատանքը Վրաստանում Ազրպեյճանի նկատմամբ դիրքորոշումների ուղղորդման համար, բացայայտել այդ աշխատանքների արդիւնաւէտութիւնը,
  - ♦ Կարգ ընկալումներից բացի, մեր հետազօտութիւնն ուղղուած է Վրաստանում Ազրպեյճանի ունեցած շօշափելի ներկայացուածութեան, ինչպէս նաեւ Վրաստանի ինքնիշխանութեան, քաղաքականութեան մշակման եւ տարածաշրջանային դիրքաւորման վրայ ունեցած ազդեցութեան բացայայտմանը:
- Հետազօտել Վրաստանի եւ վրացիների մօտեցումները Վրաստանում առկայ ազրպեյճանական համայնքի նկատմամբ:

**Ուսումնասիրութեան նշանակութիւնը.** Վրաստանում Ազրպեյճանի ընկալումները հասկանալը սոսկ ակադեմական նպատակներ չի հետապնդում: Սոյն աշխատութիւնը կարող է դառնալ կարեւոր ձեռնարկ ինչպէս հասարակական-քաղաքական գործիչների, քաղաքագէտների, դիւանագէտների համար, այնպէս էլ այս ոլորտի վերաբերեալ հետազօտութիւններ, ուսումնասիրութիւններ իրականացնող անձանց համար: Քանի որ երկու երկրներն էլ կարեւորագոյն նշանակութիւն ունեն Հայաստանի համար, Ազրպեյճանը որպէս թշնամի երկիր, Վրաստանը որպէս Հայաստանը արտաքին աշխարհին կապող երկիր, եւ նրանց յարաբերութիւնների որակն ու մակարդակը մեծապէս պայմանաւորում են Հայաստանի մարտահրաւերներն ու հնարաւորութիւնները: Բացայայտելով Վրաստանի կողմից Ազրպեյճանի նկատմամբ ընկալումների բազմաբովանդակ բնոյթը, ռազմավարական գործընկերութիւնից ռազմավարական կախուածութեան տանող քայլերն ու դրանց պատճառահետեւանքային կապերը՝ մենք նպատակն ունենք մատնանը՝ շել ուղղութիւններ, որտեղ Հայաստանը, լուրջ աշխատանքների դէպքում, կը կարողանայ ազդել գործընթացների վրայ եւ ձեւաւորել սեփական շահերին համապատասխան միջավայր:

**Թեմայի արդիականութիւնը.** այսօր նոր զարգացումներ են տեղի ունենում Հարա-

ային Կովկասում, եւ այդ համատեքստում առաջնային է ուսումնասիրել Հայաստանի հարեւան երկու պետութիւնների միջեւ յարաբերութիւնները, քանի որ Վրաստան-Ազրպէյճան յարաբերութիւններում ցանկացած փոփոխութիւն կարելի է ազդեցութիւն է ունենում Հայաստանի անվտանգային միջավայրի վրայ: Կարելի է նաեւ նշել, որ տուեալ թեման ուսումնասիրուած չէ միջազգային եւ հայկական գիտական համայնքների կողմից, ուստի տուեալ հետազոտութիւնը իր մէջ նաեւ պարունակում է գիտական նորոյթ:

## **1. Ազրպէյճանը Վրաստանի ռազմավարական փաստաթղթերում**

### **Վրաստանի իշխանական եւ ընդդիմադիր շերտերի մօտեցումները Ազրպէյճանի նկատմամբ**

Ազրպէյճանի վերաբերեալ ընկալումները Վրաստանում հասկանալու համար, կարելի է ուսումնասիրել Վրաստանի ազգային անվտանգութեան ռազմավարութիւնները: Մինչ այժմ ընդունուել է ազգային անվտանգութեան 2 ռազմավարութիւն 2005 եւ 2011 թուականներին՝ երկուսն էլ Մ. Սասկաշվիլիի իշխանութեան ընթացքում:

2005 թ. Ազգային անվտանգութեան ռազմավարութեան մէջ Ազրպէյճանը նշում է որպէս Վրաստանի, ռազմավարական գործընկեր: Էներգետիկ, տրանսպորտային, հաղորդակցային նախագծերը նպաստում են երկու երկրների անվտանգութեանը եւ բարեկեցութեանը: Վրաստանը սերտօրէն համագործակցում է Ազրպէյճանի հետ քաղաքականութեան եւ անվտանգութեան, եւ Եւրամիութեան ինտեգրման ուղղութեամբ<sup>1</sup>:

Վրաստանի՝ 2011թ. ընդունուած ազգային անվտանգութեան ռազմավարութեան մէջ նշուած է.

• «Վրաստանն աւանդաբար բարի դրացիական յարաբերութիւններ ունի Ազրպէյճանի եւ Հայաստանի հետ: Վրաստանը կարծում է, որ տարածաշրջանի ապագայ զարգացման միասնական մօտեցման հաստատումը չափազանց կարելի է: Վրաստանը ձգտում է խորացնել գործընկերային յարաբերութիւնները եւ ընդլայնել առեւտուրը Ազրպէյճանի եւ Հայաստանի հետ»<sup>2</sup>:

• «Վրաստանի յարաբերութիւններն Ազրպէյճանի հետ վերածուել են ռազմավարական գործընկերութեան. համատեղ էներգետիկ, տրանսպորտի եւ կապի նախագծերը զգալիօրէն նպաստում են երկու երկրների կայունութեանը եւ բարեկեցութեանը: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագիծը առանքային է, քանի որ այն կը մեծացնի

---

1. Sputnik Грузия, Концепция национальной безопасности Грузии (2005 г) - полный текст, 5. Упрочение внешних связей, 5.4 Партнерство с Азербайджаном и Арменией, 09.05.2010, 23.10.2023).

2. საქართველოსეროვნულიუსაფრთხოებისკონცეფცია, საქართველოსსაგარეოსაქმეთასამინისტრო, საქართველოსუსაფრთხოებისპოლიტიკისძირითადიმიმართულებები, 6. თანამშრომლობასამხრეთკავკასიაში, (մուտք՝ 24.10.2023).



Վրաստանի և Ազրայեյնանի տարանցիկ դերը՝ դրանք լիովին միացնելով միջազգային երկաթուղային ցանցերին: Այս երկաթուղային գիծը կը նպաստի արեւելքի և արեւմուտքի միջև տնտեսական կապերի յետագայ խորացմանը և Վրաստանը կը մօտեցնի եւրոպական տնտեսական տարածքին: Կարելի է պահպանել այս տարանցիկ միջանցքի մրցունակութիւնը Ազրայեյնանի հետ համագործակցութեան միջոցով»<sup>3</sup>:

- «Տարածաշրջանային երեք կարելորագոյն էներգետիկ նախագծերը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Սուփսա նավթամուղերը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, ոչ միայն տնտեսապէս կարելոր են, այլև մեծացնում են կայունութիւնը տարածաշրջանում»<sup>4</sup>:

- «Վրաստանը նաև սերտօրէն համագործակցում է Ազրայեյնանի հետ քաղաքական և անվտանգութեան, ինչպէս նաև եւրաստլանտեան ինտեգրման հարցերում: Վրաստանի և Ազրայեյնանի միջև գործընկերութիւնը կարելոր է նաև ՎՈՒԱՄ-ի շրջանակներում (Վրաստան, Ոսկրանիա, Ազրայեյնան, Միլտովա)»<sup>5</sup>: Ազրայեյնանի մասնակցութիւնը

---

3. Տաթև Կարամյան, «Վրաստանի և Ազրայեյնանի տարանցիկ դերը», Վրաստանի և Ազրայեյնանի տարանցիկ դերը, Երևան, 2011 թ. հունիս:

4. Տաթև Կարամյան:

5. ՎՈՒԱՄ-ը, Ժողովրդավարութեան և տնտեսական արգացման տարածաշրջանային կազմակերպութիւն է, որը բաղկացած է չորս յետխորհրդային պետութիւններից՝ Վրաստան, Ոսկրանիա, Ազրայեյնան և Միլտովա: Կազմակերպութիւնը ըստեղծուել է 1997 թուականին՝ իր անդամ երկրների միջև և առևտրային, դիւանագիտական և ժողովրդավարական յարաբերութիւնները ներդաշնակեցնելու և ինտեգրելու նպատակով, կանոնադրութիւնը ընդունուել է 2001 թուականին:

Եւրամիութեան Արեւելեան գործընկերութեանը եւ ՆԱՏՕ-ի «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագրին նպաստում է անվտանգութեան շահերի ներդաշնակեցմանը եւ ռազմավարական տարբեր հարցերի վերաբերեալ ընդհանուր մօտեցումների մշակմանը»<sup>6</sup>:

Այս ամէնից հնարաւոր է եզրակացնել, որ Վրաստանի համար տարածաշրջանում կայունութիւնը առաջնային նշանակութիւն ունի, Վրաստանը միշտ ցանկացել է հասնել տարածաշրջանում գոյութիւն ունեցող հակասութիւնների յաղթահարմանը եւ ապագայի վերաբերեալ միասնական ընդհանուր տեսլականի ձեւաւորմանը: Սրանով է արտայայտուում Հայաստանի Հանրապետութեան եւ Ազրայէյճանի Հանրապետութեան միջեւ միջնորդական առաքելութեամբ հանդէս գալու<sup>7</sup> եւ խաղաղութեան ուղղուած ջանքերում բանակցութիւնների հարթակ տրամադրելու հանգամանքը<sup>8</sup>:

Վրաստանը, չնայած, դեռեւս 1990թ.-ից անցնելով բազմակուսակցական համակարգի<sup>9</sup>, այժմ մնում է առաւելապէս «երկկուսակցական ժողովրդավարութիւն»՝ իշխող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» (ՎԵ) եւ ընդդիմադիր «Միացեալ ազգային շարժում» (ՄԱՇ) կուսակցութիւններով:

Վրաստանի իշխանութիւնները, Իրակլի Ղարիբաշուիլիի՝ երկրորդ անգամ վարչապետ դառնալուց յետոյ, որդեգրել են Հայաստանի եւ Ազրայէյճանի նկատմամբ չէզոքութիւն պահպանելու կարգավիճակ եւ հանդէս են գալիս միջնորդական ջանքերով: Խօսքը «խաղաղ հարեանութեան նախաձեռնութեան» մասին է, որի մեկնարկը Վրաստանը ազդարարել է 2021թ. սեպտեմբերի 24-ին՝ որպէս Հարաւային Կովկասի տարածաշրջանում կայունութեան խթանմանը ուղղուած նախաձեռնութիւն<sup>10</sup>: 2023թ. նոյեմբերի 10-ին մասնակցելով Փարիզի խաղաղութեան 6-րդ կոնֆերանսին եւ ելոյթ ունենալով «Համագործակցութեան գաղափարները մրցակցութեան աշխարհում. խաղաղութեան հաստատում եւ աւելի անվտանգ աշխարհի կառուցում՝ Կովկասի օրինակով» քննարկմանը՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշուիլին նշել էր, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ազրայէյճանի եւ Հայաստանի միջեւ ձգձգուած հակամարտութիւնը Թբիլիսիի «մտահոգութեան առարկան է», եւ աւելացրել, որ երկու երկրների ղեկավարների հետ

---

6. საქართველოსეროვნულიუსაფრთხოებისკონცეფცია, საქართველოსსაგარეოსაქმეთასამინისტრო, საქართველოსუსაფრთხოებისპოლიტიკისძირითადიმიმართულებები, նույն տեղում:

7. President of the Republic of Azerbaijan, Joint press statements of President of Azerbaijan and Prime Minister of Georgia, 8.08.2023, , (մուտք՝ 28.10.2023).

8. Eurasianet, Georgia offers mediation between Armenia, Azerbaijan, 9.10.2023, , (մուտք՝ 28.10.2023).

9. Տետրաձէ Լ., Մելիքիձէ Գ., Վրաստանի բազմակուսակցական համակարգը. առանձնայատկութիւններ, մարտահրաւերներ եւ հեռանկարներ, Հայկական Քաղաքագիտական Հանդիս 1(5) 2016, էջ 116:

10. United Nations, Irakli Garibashvili: Prime Minister of Georgia, addresses the general debate of the 76th Session of the General Assembly of the United Nations, , 16:14 (մուտք՝ 12.11.2023).

իր շփումն ու կարծիքների փոխանակումը հիմնուած է ամուր վստահութեան վրայ: Սա, ըստ վրացական իշխանութիւնների, իրենց միջնորդութեան մրցակցային առաւելութիւնն է, քանզի իրենք եղբայրական յարաբերութիւններ ունեն են Հայաստանի, են Ազրպէյճանի հետ<sup>11</sup>: Չնայած դրան՝ Ազրպէյճանի նախագահի հետ ս. թ. Նոյեմբերի 24-ին Բաքում կայացած հանդիպման ժամանակ<sup>12</sup> նոյն վարչապետ Ղարիբաշուիլին Ազրպէյճանը որակում է որպէս ռազմավարական գործընկեր<sup>13</sup>:

Վրաստանում ընդդիմադիր ուժերի շարքում առաւելապէս յայտնի է «Միացեալ ազգային շարժում» (ՄԱՇ) կուսակցութիւնը: Վերջինս, վարդերի յեղափոխութեան արդիւնքում, 2004-2012թթ. կազմում էր երկրի իշխանութիւնը: ՄԱՇ-ի դիրքորոշումները Ազրպէյճանի նկատմամբ էական փոփոխութիւններ չեն կրել իշխանութիւնից ընդդիմութիւն անցման արդիւնքում: Կուսակցութեան նախկին առաջնորդ եւ նախկին նախագահ Միխեիլ Սաակաշուիլին, ով այժմ Վրաստանի գլխաւոր ընդդիմադիր գործիչն է համարում (անգամ գտնուելով անազատութեան մէջ), միշտ ունեցել է ընդգծուած ազրպէյճանամետ կեցուածք, որն արտայայտուել է նրա յայտարարութիւններում, քայլերում եւ պետական քաղաքականութեան մէջ: Նա մշտապէս սատարել է Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեանը՝ յայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ազրպէյճանին: Նրա այդ դիրքորոշումը մնացել է անփոփոխ, եւ անգամ 2020թ. 44-օրեայ պատերազմի ժամանակ նա, որպէս ընդդիմադիր գործիչ, յայտարարել էր, որ «Լեռնային Ղարաբաղը Ազրպէյճանի ինքնիշխան տարածքն է, եւ ոչինչ դա չի փոխի»<sup>14</sup>: Հակառուսական տրամադրութիւնների ֆոնին՝ նա Ազրպէյճանը ընկալում եւ ներկայացնում էր որպէս Ռուսաստանի զոհ, որին պէտք է աջակցել ու պաշտպանել<sup>15</sup>: «The Business Year» ամսագրի՝ Ազրպէյճանին նուիրուած յատուկ համարում հրապարակուած հարցազրոյցում Վրաստանի նախկին առաջնորդը երկու երկրների յարաբերութիւնները բնութագրել է որպէս ռազմավարական գործընկերութիւն՝ նշելով, որ «ով հակադրում է Ազրպէյճանին, նա Վրաստանի թշնամին է»<sup>16</sup>: Հենց Սաակաշուիլիի օրոք մեկնարկեց Բա-

---

11. Georgian PM at Paris Peace Forum: Georgia one of world's fastest-growing economies along with Armenia, (մուտք՝ 13.11.2023).

12. Georgia's PM Seeks Closer Relations with Azerbaijan and Central Asia, (մուտք՝ 02.11.2023).


13. Վարչապետ Ղարիբաշուիլին իր նախորդ ելոյթներում եւս Ազրպէյճանը որակել է որպէս ռազմավարական գործընկեր, ինչը համապատասխանում է նաեւ պաշտօնական Թբիլիսիի դիրքորոշումներին: Սակայն Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ հաւասարակշռելու փորձերը առնուազն նկատելի են:

14. Mikheil Saakashvili: Nagorno-Karabakh is Azerbaijan's sovereign territory and nothing will change it, , (մուտք՝ 12.11.2023).

15. Saakashvili: "Georgia should show solidarity with Azerbaijan today more than ever. "https://lurer.com/?p=101033&l=en, (մուտք՝ 30.10.2023).

16. Mikheil Saakashvili, President of Georgia, comments on ever warming relations between the Caucasian neighbors. , (մուտք՝ 04.11.2023).

քու-Թբիլիսի (Ախալքալաք)-Կարս երկաթուղային նախագիծը, որը ազդարարեց հարաւ կովկասեան տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոխակերպումների մասին, քանի որ ըստ Սաակաշուիլու՝ «բոլորովին նոր ռազմավարական կապ էր բացում ոչ միայն Վրաստանի, Ազրայէճանի եւ Թուրքիայի, այլեւ Կենտրոնական Ասիայի, Չինաստանի եւ Եւրոպայի միջեւ:



Հակաազրայէճանական լոզունգներով աչքի է ընկնում «Հայրենասէրների դաշինք» կուսակցութիւնը, որը պահպանողական խորհրդարանական ընդդիմադիր կուսակցութիւն է եւ հանդէս է գալիս Ռուսաստանի հետ յարաբերութիւնների վերականգնման, ինչպէս նաեւ ՆԱՏՕ-ին ինտեգրուելուց հրաժարուելու օգտին: Նրանք անգամ բողոքի ակցիա էին անցկացրել ընդդէմ Ազրայէճանի՝ «Դաւիթ Գարեջի-Գէորգի» կարգախօսով: «Մենք յարգում ենք ազրայէճանցիներին, մենք այդ երկրի նախագահին իմաստուն ենք համարում եւ կոչ ենք անում նրան լաւ հասկանալ մեր երկրում տիրող իրավիճակը: Վրաստանի ժողովուրդը չի պատրաստուում հրաժարուել Դաւիթ Գարեջիից», - իր ելոյթի ժամանակ յայտարարել էր կուսակցութեան առաջնորդներից Իրմա Ինաշուիլին<sup>17</sup>: Յատկանշական է, որ Դաւիթ Գարեջիի վանական համալիրի հետ կապուած Վակէի Մայր Տաճարի աւագ քահանայ Շալվա Կեկելիան յայտարարել էր, որ «Ազրայէճանը Վրաստանի նոյնքան թշնամին է, որքան օկուպանտ Ռուսաստանը»: Նա նաեւ յայտնել էր, որ չի պատրաստուում հրաժարուել իր երկրի տարածքներից յանուն Ազրայէճանի հետ յարաբերութիւնները չարելու եւ քննադատել էր նրանց, ովքեր այդպէս էին արտայայտուել<sup>18</sup>:

Դաւիթ Գարեջիի խնդիրը, չնայած առաջացել է դեռեւս ԽՍՀՄ փլուզումից յետոյ, այնուամենայնիւ, այժմ է արդիականութիւն ձեռք բերել, այդ իսկ պատճառով կարելի է վերհանել խնդրի էութիւնն ու պատճառները: Ազրայէճանը, որն իրեն փորձում է ներկայացնել որպէս «կովկասեան Ալպանիա» պետութեան իրաւայաջորդ, վանական համալիրը հռչակել է որպէս «ալպանական» ժառանգութիւն: Վրաստանն իր հերթին համալիրը համարում է վրաց ուղղափառ եկեղեցուն պատկանող եւ այդպիսով վրացական ժառան-

17. Tbilisi: Pro-Russian party supporters demand Azerbaijan cede claim to ancient border monastery, , (մուտք՝ 05.11.2023).

18. აზერბაიჯანისეთივემტერია, როგორცრუსეთი - მამაშალვაკველია, (մուտք՝ 09.11.2023).

գութեան մաս: Քանի որ ԽՍՀՄ փլուզումից յետոյ, երկու երկրներն էլ անելի լուրջ խնդիրներ ունէին՝ պայմանաւորուած Աբխազիայի, Հարաւային Օսիայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւններով, տուեալ պահին հարցը մեծ նշանակութիւն չստացաւ, կողմերն էլ չփորձեցին սրել այն: 1991թ. նրանք եկան ոչ պաշտօնական համաձայնութեան, որը թոյլ էր տալիս վրացիներին կամ Վրաստանի այցելուներին մուտք գործել Դաւիթ Գարեջի բոլոր հիմնական վայրեր, քանի դեռ հարցը վերջնականապէս չի լուծուել: Դրանից յետոյ, Վրաստանը առաջարկել էր իրականացնել տարածքների փոխանակում, որից Ազրպէյճանը հրաժարուել էր, քանզի գտնուելով նաեւ Հայաստանի հետ սահմանին՝ վանական համալիրը ռազմավարական նշանակութիւն է ձեռք բերել Ազրպէյճանի համար: **Այս հակասութիւնը ի յայտ բերեց այն, որ անգամ ռազմավարական գործընկերների միջեւ սահմանազատումը յղի է սրացումներով եւ հակամարտութեամբ, իսկ այս դէպքում գրեթէ 500 քմ. չսահմանազատուած սահման է առկայ Վրաստանի եւ Ազրպէյճանի միջեւ**<sup>19</sup>: Հարցը սրուեց 2019թ. ապրիլին, երբ ազրպէյճանական կողմը արգելեց վրացի ուխտաւորներին մտնել համալիր: Դրանից յետոյ Թբիլիսիում Ազրպէյճանի դեսպանատան առջեւ կազմակերպուեց հանրահաւաք, որտեղ հաւաքուածները նշում էին, որ Գարեջին ալբանական չէ, նրա միակ տունը Վրաստանն է<sup>20</sup>: Դրանից յետոյ նախագահ Սալուէ Զուրաբիշուվիլին անգամ ցուցադրական այց իրականացրեց համալիր, որը համաձայնեցուած չէր ազրպէյճանական կողմի հետ եւ յստակ ուղերձ էր նրանց համար<sup>21</sup>:

## **2. Ինչպիսին է հասարակական կարծիքը ազրպէյճանցիների նկատմամբ**

Հիմնուելով 2009 թ.-ին հաւաքուած Caucasus Barometer-ի տուեալների վրայ (անելի ուշ հաւաքուած տուեալներն այլեւս չեն ներառում այս հարցը), վրացիների 80%-ը հաւանութիւն է տալիս ազրպէյճանցիների հետ բարեկամութեանը<sup>22</sup>: Caucasus Barometer տուեալների բազայում կարելի է տեսնել, թէ վրացիներն իրականում ինչ են մտածում Ազրպէյճանի մասին: 2012թ. հաւաքագրուած տուեալներին համաձայն՝ էթնիկ վրացիների 74%-ը հաւանութիւն է տալիս ազրպէյճանցիների հետ բիզնես վարելուն, իսկ 21%-ը հաւանութիւն չի տալիս<sup>23</sup>: Հարցաթերթիկը տարբերակում է ընդհանուր առմամբ ազրպէյճանցիների եւ Վրաստանում ապրող ազրպէյճանցիների միջեւ: Մի փոքր անելի շատ վրացիներ (77%) հաւանութիւն են տալիս եւ 19%-ը հաւանութիւն չեն տալիս *Վրաստան*

19. Մտաւորապէս 300 քմ-ը արդէն համաձայնեցուած է, բայց դեռեւս վերջնականապէս սահմանազատուած ու սահմանազծուած չէ:

20. თბილისში აზერბაიჯანის საელჩოსთან გეგმიური შეხვედრა, (մուտք՝ 12.11.2023).

21. The Central Asia-Caucasus Analyst , Are Georgia-Azerbaijan Relations at Risk? , (մուտք՝ 14.11.2023).

22. Osepashvili I., The study of Georgians' attitudes towards Azerbaijanis Center for Social Sciences Foreign Policy & Security Program, Report 2013, էջ 2:

23. Businaze: Approval of doing business with Azerbaijanis, , (մուտք՝ 08.11.2023).



նում *բնակուող* ազրպեյճանցիների հետ համատեղ բիզնես վարելուն<sup>24</sup>: Արդեն 2021թ. տուեալներով վրացիների 75%-ն է հաւանութիւն տալիս ազրպեյճանցիների հետ բիզնես վարելուն, իսկ 23%-ը հաւանութիւն չի տալիս, իսկ *Վրաստանում բնակուող* ազրպեյճանցիների հետ համատեղ բիզնես վարելուն հաւանութիւն են տալիս 79%-ը, իսկ 18%-ը հաւանութիւն չեն տալիս: Հետաքրքրական է, որ 2019թ. երբ փոքր լարում էր նկատուել վրաց-ազրպեյճանական յարաբերութիւններում, այս հարցման պատասխաններում որոշակի տատանում է նկատուում, քանի որ այդ հարցումների համաձայն հաւանութիւն են տուել 71%-ը, իսկ 26%-ը դէմ են արտայայտուել<sup>25</sup>:

2009թ. տուեալների համաձայն՝ միայն 21%-ն է հաւանութիւն տալիս ազրպեյճանցու հետ վրացի կնոջ ամուսնութեանը: 2012թ. միայն 20%-ն է հաւանութիւն տալիս, որ վրացի կինն ամուսնանում է ազրպեյճանցու հետ, իսկ 22%-ը հաւանութիւն է տալիս, որ վրացի կինն ամուսնանում է Վրաստանում ապրող ազրպեյճանցու հետ: Յաջորդ տարիների ընթացքում այդ ցուցանիշը կտրուկ փոխուում է, 2019թ. արդեն ազրպեյճանցու հետ վրացի կնոջ ամուսնութեանը համաձայնուել է հարցուածների 35%-ը, իսկ 2021թ. 44%-ը:

Հարցին, թէ ով է Վրաստանի հիմնական բարեկամ երկիրը, Ազրպեյճանը նշել են 2012թ., 2019թ. եւ 2021թ. համապատասխանաբար 6%-ը, 7%-ը, 8%-ը: Այսինքն հասարակութեան մէջ Ազրպեյճանի նկատմամբ դրական վերաբերմունքը կայուն աճում է: Իսկ հարցին, թէ որ երկիրն է Վրաստանի հիմնական թշնամին, հարցուածներից 1%-ից էլ քիչն է Ազրպեյճանը նշել որպէս թշնամի պետութիւն<sup>26</sup>: Հետաքրքրական է, որ նոյն տա-

24. Businazg: Approval of doing business with Azerbaijanis living in Georgia, , (մուտք՝ 08.11.2023).

25. Businaze: Approval of doing business with Azerbaijani, , (մուտք՝ 08.11.2023).

26. Mainenem: In your opinion, which country is currently the main enemy of Georgia?<https://caucasusbarometer.org/en/cb2021ge/MAINENEM/>, (մուտք՝ 09.11.2023).



րիներին Թուրքիան որպես թշնամի երկիր առանձնացրել է հարցուածների 3-4%-ը:

2023թ. անցկացուած NDI-ի հարցումների ժամանակ հարցուած վրացիների միայն 10%-ն է նշել<sup>27</sup>, որ Վրաստանը ամենամօտ քաղաքական յարաբերութիւնները պէտք է ունենայ Ազրպէյճանի հետ, իսկ 12%-ը նշել է<sup>28</sup>, որ Ազրպէյճանի հետ Վրաստանը պէտք է ունենայ ամենամօտ տնտեսական յարաբերութիւնները: Մինչդէռ հարցուածների 71% եւ 70%-ը, համապատասխանաբար, չի համարում, որ Վրաստանը ամենամօտ քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները պէտք է ունենայ Ազրպէյճանի հետ: Համեմատութեան համար նշենք, որ հարցուածների 7%-ը կարծում է, որ Հայաստանի հետ Վրաստանը պէտք է ունենայ ամենամօտ քաղաքական յարաբերութիւնները, ընդ որում, հարցուածների 5-ական տոկոսն է նշել, որ ինքը էթնիկ հայ կամ էթնիկ ազրպէյճանցի է:

2013թ. արուած հետազօտութեան համաձայն՝ Մառնեուլիում ազրպէյճանական մեծամասնութեան կողմից հնարաւոր ինքնավարութեան պահանջները բացառելու համար Ջանդարա գիւղում բնակեցուել են լեռնային վրացիներ՝ սվաններ: Նրանց ներկայացուցիչներից մէկը՝ երիտասարդ տղամարդ, նշել է՝ «Ռուսթավի մօտ Ջանդարա գիւղում նոյնպէս ապրում են սվանները: Դա արուել է միտումնաւոր, նրանք ցանկանում էին, որ ազրպէյճանական մեծամասնութիւն ունեցող տարածքները, որոնք գտնուում են սահմաններին մօտ, բնակեցուեն վրացիներով, որպէսզի նրանք չկարողանան ինքնավարութիւն պահանջել: ( ... ) Ես սվան եմ եւ լսել եմ, որ սվանները բնակութիւն են հաստատել այստեղ, քանի որ նրանք յատկապէս դիմացկուն մարդիկ են: Թող Աստուած ազատի մեզ ինքնավարութեան պահանջից, հակառակ դէպքում մենք կանենք այն ամէնը, ինչ անհրաժեշտ կլինի»<sup>29</sup>: Ըստ երեւոյթին, առկայ են մտավախութիւններ, որ ազրպէյճանցիները ինքնավարութիւն կը պահանջեն: Յատկապէս 44-օրեայ պատերազմից յետոյ այս մտավախութիւնները աւելի են բարձրաձայնուում: Վրացի պատմաբան, պատմութեան դասախօս Բեքա Կոբախիձեն գրել էր, որ եթէ Հայաստանի նկատմամբ Ազրպէյճանի ագրեսիան անպատիժ մնայ, ապա յաջորդ թիրախը Վրաստանն է լինելու: Նա նաեւ նշել է,- «Հայերն ու վրացիներն ամենավատն են յիշում, ինչի է հանգեցնում ինչ-որ հարցի շուրջ ռուս-թուրքական պայմանաւորուածութիւնը»<sup>30</sup>:

27. Geecoaz: Which countries and unions should Georgia have the closest political cooperation with?- Azerbaijan, , (մուտք՝ 18.11.2023).

28. Geecoaz: Which countries and unions should Georgia have the closest economic cooperation with?- Azerbaijan nhttps://caucasusbarometer.org/en/nm2023ge/GEECOAZ/, (մուտք՝ 19.11.2023).

29. Osepashvili I., The study of Georgians' attitudes towards Azerbaijanis Center for Social Sciences Foreign Policy & Security Program, Report 2013, էջ 4:

30. Facebook, Beka Kobakhidze, 16.09.2023, րօցօրցնանս, րլսլոտոձալազձաֆրձաիլլանտանձարամձլլոմլլոնոնոձաոսնսնս, (մուտք՝ 10.11.2023).

Վրաստանի ինքնիշխանության դեմ Ազրպեյճանի ոտնձգությունների հետ կապուած մտահոգությունները որոշակիորէն սրուեցին 2017թ. Թբիլիսիում ազրպեյճանցի այլախոհ լրագրող Աֆղան Մուխթարլիի առեանգումից յետոյ: Ըստ BBC-ի՝ այն մեծ յուզմունք է առաջացրել Վրաստանի մայրաքաղաքի փողոցներում, քանզի վրացիները հպարտանում են իրենց ժողովրդավարութեամբ, իսկ այդ գործողութիւնը կոպտորէն խախտում էր մարդու հիմնարար իրաւունքները<sup>31</sup>: Human Rights Watch-ի Հարաւային Կովկասի հարցերով տնօրէն Գիորգի Գոգեան, յայտնի հեռուստահաղորդավար Գէորգի Գաբունեան, Հարաւային Կովկասում Amnesty International-ի տարածաշրջանային ներկայացուցիչ Լեան Ասատեանին եւ այլք իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել այս քայլի դէմ:

Վրացիները նաեւ յաճախ բողոքում են Վրաստանի խոշորագոյն հարկատու, Ազրպեյճանի պետական նաւթային ընկերութեան բոնապետական պահուածքից: 2021թ. այս ընկերութիւնը բազմիցս փորձել է միջամտել «Արցախի հետ միջազգային համերաշխութեան նախաձեռնութեան» աշխատանքներին: Վաշինգտոնի Բազմակողմանի դիւանագիտութեան ինստիտուտի Հարաւային Կովկասի գրասենեակի համակարգող Իրակլի Կակաբաձեն նշում է, որ «SOCAR»-ի ներկայացուցիչները զանգահարել են իրեն եւ իր գործընկերներին՝ սպառնալով «իրենց սոված թողնել», եթէ իրենք չհրաժարուեն միջոցառումից: «SOCAR-ն այստեղ մի քանի հազար «կեղծ գործարաններ» ունի: Մենք գիտենք, թէ որտեղ են նրանք գտնուում եւ ինչ գործունէութիւն են իրականացնում: Նրանք դրանով զբաղուել են պրոֆեսիոնալ կերպով՝ ծախսելով միլիարդներ»<sup>32</sup>: Կակաբաձեն նաեւ մտավախութիւն է յայտնել, որ «**Ազրպեյճանը Թուրքիայի հետ միասին աւելի ու աւելի է ընդլայնում իր ազդեցութիւնը Վրաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ**»:

### **3. Ազրպեյճանի կողմից Վրաստանում ազդեցութեան տարածման հիմնական գործիքակազմը**

Վրաստանում ազդեցութիւնը տարածելու տեսանկիւնից, յատկապէս, կարելոր են Ազրպեյճանի կողմից իրականացուած քայլերը, որոնք միտուած են ընդգծելու Վրաստանի՝ որպէս իրենց համար կարելոր նշանակութիւն ունեցող պետութեան դերակատարումը: Ազրպեյճանը, Վրաստանի հետ յարաբերութիւններում յատկապէս կարելորում է էներգետիկ ոլորտի եւ ենթակառուցուածքների զարգացումը: Ազրպեյճանի՝ 2007թ. ընդունուած ազգային անվտանգութեան ռազմավարութեան մէջ նշուած է. «Վրաստանի հետ համապարփակ համագործակցութեան եւ գործընկերութեան խթանումը մեծ նշա-

---

31. Afgan Mukhtarli: Did Georgia help abduct an Azeri journalist? , (մուտք՝ 11.11.2023).

32. Azerbaijan's oil company SOCAR threatening Georgians that stand in solidarity with Artsakh, (մուտք՝ 12.11.2023).



նակութիւն ունի ազրայէճանի Հանրապետութեան համար: Ազրայէճանի Հանրապետութիւնը սերտօրէն համագործակցում է Վրաստանի հետ երկու երկրների ընդհանուր շահերի, տարածաշրջանային էներգետիկ եւ տրանսպորտային նախագծերի իրականացման եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ ոլորտներում եւ կը շարունակի զարգացնել երկկողմ ռազմավարական համագործակցութիւնը»<sup>33</sup>:

Ազրայէճանը, որին այդ հարցում հովանաւորում էր Թուրքիան, կարողացաւ օգտագործել առաջին արցախեան պատերազմից յետոյ տարածաշրջանում հաստատուած ստատուս-քվոն, երբ Հայաստանի Հանրապետութեան հետ չկար որեւէ երկխօսութիւն եւ, օգտագործելով Վրաստանի հետ լաւ յարաբերութիւնները, այդ ամէնին տրուեց ռազմավարական նշանակութիւն՝ իրականացնելով այնպիսի նախագծեր, ինչպիսիք են՝ «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգիծը<sup>34</sup>, «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղը<sup>35</sup> եւ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նաւթամուղը<sup>36</sup>:

Ազրայէճանական կողմի արձագանքը 2008թ. ռուս-վրացական պատերազմին նոյնպէս կարեւոր քայլ էր իր կողմից վրաց հասարակութեան մէջ Ազրայէճանի վերաբերեալ նոր կարծիք, պատկերացում ձեւաւորելու համար: Պատերազմի ժամանակ Ազրայէճա-

33. Az.rbaycan Respublikasýnyn milli t.hlük.sizlik konsepsiyasýnyn t sdiq edilm si haqqýnda, Az.rbaycan Respublikasý Prezidentinin S r ncamý, Baký þ.h.ri, 23 may 2007ciil, (մուտք՝ 19.11.2023).

34. International Union of Railways, Heads of State inaugurate the Baku-Tbilisi-Kars Railway Project, 7.11.2017, , (մուտք՝ 20.11.2023).

35. US Energy Information Administration, Background Reference: Azerbaijan, 7.07.2019, , (մուտք՝ 22.11.2023).

36. British Petroleum, BTC Celebrates Full Commissioning, 23.07.2006, (մուտք՝ 24.11.2023).

նի ԱԳՆ խօսնակ Ղազար Իպրահիմը յայտարարել է, որ Ազրայեյճանը ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, եւ հակամարտությունը պետք է կարգաւորուի հենց այս սկզբունքի հիման վրայ: Նրա խօսքով միջազգային իրաւունքի համաձայն Վրաստանն իրաւունք ունի վերականգնելու իր տարածքային ամբողջականությունը, եւ ՄԱԿ-ի կանոնադրութիւնը դրա ապացոյցն է: «Վրաստանի գործողութիւնները համապատասխանում են միջազգային իրաւունքին», - նշել է նա<sup>37</sup>: Կարելոր էր նաեւ Ազրայեյճանի քուէարկութիւնը ՄԱԿ Գլխաւոր Ասամբլեայի թիւ 62/245 բանաձեւին. «Աբխազիայից (Վրաստան) ներքին տեղահանուածների եւ փախստականների կարգավիճակը» վերնագրով<sup>38</sup>, որտեղ նա կողմ արտայայտուեց այդ բանաձեւին, որով, կարծես թէ, Ազրայեյճանը ցանկանում էր շնորհակալութիւն յայտնել վերոնշեալ բանաձեւից երկու ամիս առաջ ընդունուած «Իրավիճակը Ազրայեյճանի օկուպացուած տարածքներում» բանաձեւում Վրաստանի դրական քուէարկութեան համար:

Ազրայեյճանի կողմից ցուցադրական քայլ էր նաեւ Ազրայեյճանի ԱԳՆ X բլոգում արուած յայտարարութիւնը 2022 թուականի օգոստոսի 8-ին: Յայտարարութեան մէջ նշուած է. «Ազրայեյճանը աջակցում է Վրաստանի անկախութեանը, ինքնիշխանութեանը եւ տարածքային ամբողջականութեանը միջազգայնօրէն ճանաչուած սահմաններում: Վրաստանը եւ Ազրայեյճանը վայելում են ռազմավարական գործընկերութիւն՝ հիմնուած միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունքների յարգման եւ հաւատարմութեան վրայ»<sup>39</sup>:

Բացի պաշտօնական այցերն ու յայտարարութիւնները, շատ կարելոր էր ուսումնասիրել Ազրայեյճանի ինստիտուտների աշխատանքը այդ ուղղութեամբ: Ազրայեյճանական «SOCAR» ընկերութիւնը լուրջ աշխատանքներ է իրականացնում: Նրանք 2015 թուականից ֆինանսաւորում են Վրաստանում գտնուող ուղղափառ եկեղեցիների, այդ թում հայկական եկեղեցիների ձմեռային ջեռուցման ծախսերը<sup>40</sup>: Սա շատ կարելոր քայլ էր տարբեր կրօնների միջեւ հանդուրժողականութիւնը ընդգծելու տեսանկիւնից, յատկապէս, երբ շեշտում էր, որ հայկական եկեղեցիների ջեռուցումը եւս ֆինանսաւորում է:

«SOCAR»-ը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաեւ սոցիալական ոլորտում, յատկապէս՝ կրթութեան բնագաւառում: 2008 թուականից ընկերութիւնը ֆինանսաւոր-

---

37. Today.az, Azerbaijani Foreign Ministry: “Georgia’s actions comply with international law”, 08. 08.2008, , (մուտք՝ 28.11.2023).

38. UN, General Assembly Adopts Resolution Recognizing Right of Return By Refugees, Internally Displaced Persons To Abkhazia, Georgia, 15.05.2008, , (մուտք՝ 26.11.2023).

39. X, Ministry of Foreign Affairs of Azerbaijan, 8.08.2022, , (մուտք՝ 27.11.2023).

40. Orthodox Christianity, Azerbaijan to warm Georgian and Armenian churches, 13.10.2015, (մուտք՝ 22.11.2023).

րում է Վրաստանում բնակուող ազրպեյճանցիների ուսման վարձերը, գերազանց սովորող ուսանողների համար սահմանում է կրթաթոշակներ: 2008-2022 թթ. ուսման վարձավճարի տեսքով ֆինանսական աջակցություն է ստացել շուրջ 4300 ուսանող<sup>41</sup>: Այդուհանդերձ, այս գործընթացը ինքնանպատակ չէ, նման մեխանիզմներով Ազրպեյճանը փորձում է իր «ներկայությունը» ունենալ Վրաստանի ներքաղաքական կեանքում՝ աջակցելով Վրաստանում բնակուող իր հայրենակիցներին՝ պաշտոններ զբաղեցնել տարբեր պետական, յատկապես՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, որտեղ մուսուլմանական համայնքը զգալի թիվ է կազմում: Վրացական կողմը բազմիցս բարձրաձայնել է, որ Ազրպեյճանը միջամտում է իրենց ՏԻՄ ընտրություններին<sup>42</sup>, դրանով՝ միջամտելով իրենց ներքին գործերին: Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այդ գործընթացում կրկին շրջանառուում է «SOCAR»-ի անուանումը, որը տարիներ շարունակ սոցիալական մեծ աջակցություն է ցուցաբերում Վրաստանին: Չնայած «SOCAR Energy Georgia» ընկերութեան գործադիր տնօրէն Մահիր Մամեդովը յայտարարել է, որ SOCAR-ի ղեկավարությունը Մառնեուլիում<sup>43</sup> կայացած հանդիպմանը չի շօշափել քաղաքական ընտրությունների հարցեր<sup>44</sup>, բայց Վրաստանում գործող Ազրպեյճանի երիտասարդական միութեան ղեկավար Լեյլա Մամեդովան նշել է, որ «SOCAR»-ի այցերը տարածաշրջան կարծես համընկնում են ընտրությունների հետ: «Ինչո՞ւ է SOCAR-ը յիշում տարածաշրջանի խնդիրները միայն ընտրությունների ժամանակ», - գրել է նա ֆեյսպուքեան գրառման մէջ<sup>45</sup>:

Հիմնադրման օրուանից «SOCAR»-ը Վրաստանի մի քանի գիւղերում կառուցել է նոր մայրուղիներ, միւսներում վերանորոգել է ճանապարհները, բազմաթիւ գիւղերում եւ քաղաքներում իրականացրել դպրոցների, հիւանդանոցների եւ մարզահրապարակների հիմնանորոգում: Լուրջ աշխատանքներ են իրականացւում նաեւ երկրի գիւղատնտեսութեան ոլորտին օգնելու նպատակով, տրամադրւում են գիւղատնտեսական տեխնիկաներ եւ այլ միջոցներ, որոնք հեշտացնում են այդ ոլորտում բնակչութեան գործունէութիւնը:

---

41. Socar.az, Social projects in Georgia, , (մուտք՝ 26.11.2023).

42. EurasiaNet, Georgians allege Azerbaijan interfering in their local elections, 15.05.2019, , (մուտք՝ 29.11.2023).

43. Մառնեուլին բնակավայր է Վրաստանի հարաւում, որտեղ գերակշռում են ազրպեյճանցի բնակչութիւնը: Այնտեղ հերթական ՏԻՄ ընտրությունների նախօրէին (2019 թուականին) տեղի է ունեցել հանդիպում Վրաստանի իշխանութիւնների ներկայացուցիչների եւ Վրաստանում Ազրպեյճանի դեսպանի, SOCAR-ի գործադիր տնօրէնի եւ այլ պաշտօնեաների մասնակցութեամբ: Հենց այս հանդիպումն էլ դարձել է մի շարք տարակարծութիւնների առիթ:

44. Musavat, M.mm.dov Mahir: “SOCAR r.hb.rliyi Marneulid.ki görüşd. seçki v. siyasi seçim m.s.sin. toxunmayýb”, (մուտք՝ 30.11.2023).

45. Facebook, Leila Mamedova, (մուտք՝ 30.11.2023).

Ազրայեյճանական կողմը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաեւ փորձագիտական դաշտում: Վրաստանում գործող ուղեղային կենտրոններում ընդգրկում ազրայեյճանցի փորձագետներ, եւ այդ ճանապարհով Վրաստանի փորձագիտական դաշտում առաջ են քաշում նարատիւներ, որոնք նպատակ ունեն հիմնաւորել Ազրայեյճանի պատօնական տեսակէտը Վրաստանում՝ կապուած տարածաշրջանային կարեւոր հիմնահարցերի հետ: «Georgian Foundation for Strategic and International Studies» ուղեղային կենտրոնում Ազրայեյճանցի փորձագետ Ֆարիտ Շաֆիւելը հրապարակել է փորձագիտական զեկոյց, որով առաջ է քաշում այնպիսի նարատիւներ, որոնցից մէկի համաձայն հայկական կողմը 1987-88 թթ. շրջանում աջակցութիւն է ստացել Արեւմուտքի եւ Ռուսաստանի լիպերալների կողմից, որի համար հիմք է եղել այն, որ Հայաստանը քրիստոնեայ երկիր է<sup>46</sup>:

#### **4. Վրաստանի եւ վրացիների մօտեցումները Վրաստանում առկայ ազրայեյճանական համայնքի նկատմամբ**

Ազրայեյճանի նկատմամբ Վրաստանի մօտեցումները գնահատելու տեսանկիւնից կարեւորում է Վրաստանում ապրող ազրայեյճանցիների գործօնը: Ազրայեյճանցիները Վրաստանում ամենամեծ էթնիկ փոքրամասնութիւնն են եւ իրենց տեղն ունեն վրաց-ազրայեյճանական յարաբերութիւնների օրակարգում:

Ազրայեյճանցիները, համաձայն 2014թ. մարդահամարի, կազմում են Վրաստանի բնակչութեան 6.3%-ը (մօտ 233.000)<sup>47</sup>, եւ ամենամեծ թւով ազրայեյճանցիներով բնակեցուած Վրաստանի շրջանը Քուեմօ Քարթլին է (տեղի բնակչութեան 41.75%): Իսկ քաղաքային մակարդակով ազրայեյճանաբնակ տարածքներ են Մառնեուլին (83.77%), Դումանիսին (65.46%), Բոլնիսին (63.38%), Գարդաբանին (43.53%)<sup>48</sup>: Համաձայն վրաց հեղինակների՝ ներկայիս մուսուլմանական բնակչութեան ձեւաւորման սկիզբը եղել է 17-րդ դ., երբ Շահ-Աբասը 1604թ. Դեբետ գետի հովիտը բնակեցրեց բորչալու անունը կրող թուրքական ցեղերով<sup>49</sup>:

Վրաստանի անկախացման գործընթացի ժամանակ տարածաշրջանում տիրում էին

---

46. Shafiyev F., Georgian Foundation for Strategic and International Studies, Peace negotiations between Armenia and Azerbaijan, , (մուտք՝ 28.11.2023).

47. First Census in 12 years revealed: Three million people live in Georgia - 15% less than 2002, Agenda.ge, Tbilisi, 28 Apr 2016. (մուտք՝ 19.11.2023).

48. Kazumov O., Rustaveli S. և ուրիշներ, What we should know about Azerbaijani fellow citizens, Tolerance and Diversity Institute. (մուտք՝ 25.11.2023).

49. Zviadadze S. and Jishkariani D., Identity Issues among Azerbaijani Population of Kvemo Kartli and Its Political and Social Dimensions, Center for the studies of Ethnicity and multiculturalism (CSEM) p.6 , (մուտք՝ 30.11.2023).



նացիոնալիստական գաղափարները, որտեղ գերակայ դիրք էին զբաղեցնում լեզուական, մշակութային եւ կրօնական ընդհանրութեան գաղափարները: Այն յատկապէս մեծ ալիք էր ստացել Զուլհադ Գամսախուրդիայի նախագահութեան օրոք: Տուեալ պարագայում միջ էթնիկա-

կան բախումներից զերծ չմնացին վրացիները եւ Վրաստանում ապրող ազրպէյճանցիները: Մասնատրապէս 1989-90թթ.. վրաց-ազրպէյճանական բախումներ տեղի ունեցան Քուեմօ Քարթլիում: Պէտք է նաեւ նշել, որ այդ ժամանակ աւելի էին կարծրացել անկախական գաղափարները Քուեմօ Քարթլիում<sup>50</sup>:

Յետագայում Վրաստանի իշխանութիւնները փորձեցին մեղմել միջէթնիկական խընդիրները, որի գլխաւոր միջոցը դարձաւ տեղի էթնիկ փոքրամասնութիւնների ինտեգրումը, սակայն մինչեւ այժմ էլ Վրաստանում այդ խնդիրը լուծում չի ստացել<sup>51</sup>: Ազրպէյճանցիների պարագայում այս խնդիրը նոյնպէս առարկայական է: Հիմնական պատճառը համարում է կրթական խնդիրը: Յատկապէս ուշադրութիւն է գրաւում այն փաստը, որ տեղի ազրպէյճանցիները վրացերենին չեն տիրապետում: Վրացական շրջանակներում տիրապետող է այն մօտեցումը, որ այս երեւոյթի գլխաւոր պատճառն է տեղի ազրպէյճանցիների վրացերէն սովորելու ցանկութեան բացակայութիւնը: Մինչդեռ հետագօտողները պնդում են, որ կառավարութիւնը չի կարողացել լուծել այդ խնդիրը: Համաձայն վրացի հետագօտողների, Վրաստանի ազրպէյճանցիները նաեւ ցածր քաղաքացիական եւ քաղաքական ակտիւութիւն ունեն: Հիմնականում չեն մասնակցում տեղական եւ համապետական ընտրութիւններին: Նաեւ շատ պետական պաշտօնների չեն հաւակնում<sup>52</sup>:

Ընտրութիւններին չմասնակցելու գլխաւոր պատճառներից մէկը համարում է ընտ-

50. Komakhia M., Georgia's Azerbaijanis: problems of civilian integration, Central Asia and the Caucasus ethnic relations and population migration, Tbilisi, No. 5(29), 2004.

51. Amirjanova S., Information vacuum – what are Georgian Azerbaijanis watching? JAMnews, Marneuli, 07.02.2021. (մուտք՝ 01.12.2023).

52. Zviadadze S. and Jishkariani D., Identity Issues among Azerbaijani Population of Kvemo Kartli and Its Political and Social Dimensions, նույն տեղում, p.10 (մուտք՝ 01.12.2023).

րուող պաշտօնեաների կողմից նախընտրական խոստումների չկատարումը<sup>53</sup>: Ժամանակի ընթացքում ազրայեյճանական քաղաքացիական ակտիւութիւնը եւ քաղաքական ներկայացուածութիւնը մեծացել է: Եթէ նորանկախ Վրաստանում չկային ազրայեյճանցի պատգամաւորներ խորհրդարանում, ապա 1999թ. խորհրդարանում կային 5 ազրայեյճանցի պատգամաւորներ, իսկ 2016թ.<sup>54</sup> 4: Սակայն, Վրաստանի ազրայեյճանցիների շրջանակներում կայ կարծիք, որ իրենք առնուազն 20-22 պատգամաւորով ներկայացուած լինեն խորհրդարանում<sup>54</sup>:

Ազրայեյճանցիները բաւականին ակտիւ աշխատում են հասարակական կազմակերպութիւնների մակարդակով: Առաջին հասարակական կազմակերպութիւնը ձեւաւորուել է դեռ 1990թ. Թբիլիսիում: Ազրայեյճանական հասարակական կազմակերպութիւնները սկզբնական հատուածում ունեցել են տարբերակուած մօտեցումներ Վրաստանի ազրայեյճանական համայնքի ապագայի վերաբերեալ: Օրինակ՝ «Վրաստանի ազրայեյճանցիների կոնգրեսը» իր գործունէութիւնը ծաւալել է տեղի ազրայեյճանցիների իրաւունքները պաշտպանելուն եւ վրաստանեան կեանքին ինտեգրելուն: Մինչդեռ «Վրաստանի ազրայեյճանցիների ազգային խորհուրդը» աջակցում է Վրաստանում կոնֆեդերացիայի ստեղծմանը եւ ազրայեյճաներէնին պաշտօնական լեզուի կարգավիճակ տալուն: 2009թ. կազմակերպութեան առաջնորդ Դաշգին Գուլմամադովը Բաքում ձերբակալուել է, որը ըստ բրիտանացի պատմաբան Ջոնաթան Ուիթլիի՝ Վրաստանի եւ Ազրայեյճանի իշխանութիւնների համագործակցութեան արդիւնք էր<sup>55</sup>:

Սակայն, Ազրայեյճանի ակտիւ աշխատանքը Վրաստանի ազրայեյճանական համայնքի հետ կասկածներ է առաջացնում Վրաստանի ներսում տարբեր քաղաքական ուժերի մօտ: Յատկապէս, աւելի տարածուած է այն մօտեցումը, որ ազրայեյճանական փոքրամասնութիւնը կամ չի մասնակցում ընտրութիւններին կամ քուէարկում է իշխանութեան օգտին: Այդ տեսանկիւնից ուշագրաւ էր 2019թ. ՏԻՄ ընտրութիւնները: Որից մի քանի օր առաջ Մառնեուլ էր ժամանել Վրաստանում Ազրայեյճանի դեսպանը, ով իր աջակցութիւնն էր յայտնել իշխող «Վրացական Երազանք» կուսակցութեան թեկնածուին: Այս քայլը ընդդիմադիր ուժերի կողմից որակուել էր որպէս Ազրայեյճանի կողմից Վրաստանի ներքին գործերին միջամտելու փորձ<sup>56</sup>:

---

53. Shiriyev Z., A move towards greater political participation among ethnic Azerbaijanis in Georgia? December 20th, 2016, The CACI, (մուտք՝ 01.12.2023).

54. Ахундова У., Проблемы азербайджанцев в Борчалы, Зеркало. – 2012. -12 января. (մուտք՝ 03.12.2023).

55. Hamid T., Discrimination against Azerbaijanis in Georgia, Aze.Media, April 23, 2021, (մուտք՝ 02.12.2023).

56. Natiqizli U., Georgians allege Azerbaijan interfering in their local elections, Eurasianet, May 15, 2019. (մուտք՝ 05.12.2023).



Քուեմո Քարթլիի ազրպեյճանցիների նկատմամբ միանշանակ չէ նաեւ վրաց ուղղափառ եկեղեցու վերաբերմունքը: Եկեղեցին իր ազդեցութիւնն է փորձում պահպանել Վրաստանի բոլոր մարզերում: Արդիւնքում Քուեմո Քարթլին, որը մասամբ մուսուլմանական բնակչութիւն ունի, եկեղեցու կողմից ներկայացւում է բացառապէս քրիստոնէական շրջան: Կատարուել են նաեւ մզկիթների գագաթներին խաչեր տեղադրելու փորձեր<sup>57</sup>:

Քուեմո Քարթլիի տեղական իշխանութիւնը նոյնպէս ոչ միանշանակ մօտեցում ունի տեղի ազրպեյճանցիների նկատմամբ: Մասնաւորապէս մեծ բողոքի ալիք բարձրացաւ, երբ 2018թ. Քուեմո Քարթլիի մասին պատմող տեսահոլովակում տեղ չէր գտել «ազրպեյճանական մշակութային ժառանգութիւնը», եւ ի պատասխան դրա ազրպեյճանցիները իրենց մշակութային ժառանգութիւնը ներկայացնող տեսահոլովակ էին նկարահանել<sup>58</sup>:

Արդիւնքում կարող ենք եզրակացնել, որ ազրպեյճանական համայնքի դերը Վրաստանի ներքին կեանքում եւ Վրաստան-Ազրպեյճան յարաբերութիւններում միանշանակ չէ: Ազրպեյճանական համայնքը շատ թոյլ ընտրական ակտիւութիւն ունի, սակայն ընտրական գործընթացում նրա դերը նոյնպէս դիտարկուում է: Նրանց դերը նաեւ դիտարկուում է որպէս միջոց Ազրպեյճանի կողմից Վրաստանի ներքին գործերին միջամտելու համար, սակայն այն նաեւ հնարաւորութիւն է տալիս Վրաստանի եւ Ազրպեյճանի կառավարութիւնների միջեւ համագործակցութիւնը խորացնելու համար: Ազրպեյճանական համայնքի նկատմամբ բաւականին դրական մօտեցումներ են ցուցաբերում հետազօտող շրջանակները, ովքեր առաջ են բերում ազրպեյճանցիների նկատմամբ «խտրական վերաբերմունքը» դադարեցնելու թեզը: Մինչդեռ վրաց եկեղեցին եւ պահպանողական շրջանակները ոչ դրական մօտեցում ունեն նրանց նկատմամբ:

## **5. Ազրպեյճանի նկատմամբ ձեւաւորուած մօտեցումները՝ վրացի ազդեցիկ անձանց (ինֆլուենսերների) շրջանում**

Ազրպեյճանի վերաբերեալ վրացական ընկալումների տեսանկիւնից կարելի է նաեւ Վրաստանի քաղաքական ասպարէզում ազդեցիկ անհատների (ինֆլուենսը) կարծիքների ուսումնասիրութիւնը: «Ինֆլուենսըները» ունենալով մեծ լսարան եւ հանդիսանալով «կարծիքի լիտըրներ» (opinion leaders) կարողանում են մեծ փոփոխութիւններ մտցնել հանրային ընդհանուր ընկալումներում՝ ուղղորդելով դրանք, նաեւ որոշ չափով կրում են տուեալ հանրութեան շրջանակներում արդէն ձեւաւորուած կարծրատիպային մօտեցումները:

---

57. ZviadadzeS. and JishkarianiD., Identity Issues among Azerbaijani Population of Kvemo Kartli and Its Political and Social Dimensions, նոյն տեղում, p.4, (մուտք՝ 30.11.2023).

58. NatiqizliU., Azerbaijani Georgians seek recognition of their culture, Eurasianet, Jun 25, 2021. (մուտք՝ 07.12.2023).

Վրացական քաղաքական «ինֆլիուենսների» մօտեցումները հասկանալու եւ վերլուծելու համար հարկաւոր է որոշ գաղափարական (պահպանողական եւ ազատական) բաժանումներ մտցնել: Պահպանողականները Վրաստանում հիմնականում կողմ են արտայայտում վրաց ուղղափառ եկեղեցու կողմից քարոզուող կրօնական արժէքների պահպանմանը եւ վրացական ինքնութիւնը օտարերկրեայ մշակութային ազդեցութիւնից զերծ պահելուն: Ազատական վրացիները գլխաւորապէս կողմ են արտայայտում արեւմտեան արժէքների եւ ստանդարտների հաստատմանը եւ Վրաստանը համարում են Եւրոպայի մաս կազմող ժողովրդավար երկիր<sup>59</sup>:

Պահպանողական վրացիները հիմնականում դրական վերաբերմունք ունեն Ազրպէյճանի նկատմամբ եւ ձգտում են դրական կարծիք յայտնել ալիեւեան ռեժիմի նկատմամբ, որը, իրենց կարծիքով ուժի կիրառմամբ հասաւ իրենց «տարածքային ամբողջականութեան վերականգնմանը»<sup>60</sup>: Պահպանողականները Ազրպէյճանի հետ գլխաւոր խնդիրը համարում են «Դաւիթ Գարեջիի» շուրջ ծագած իրավիճակը, որը իրենք գտնում են, որ պէտք է լուծել բանակցութիւնների միջոցով<sup>61</sup>: Ազատական վրացիները նոյնպէս դրական մօտեցում ունեն Ազրպէյճան պետութեան եւ ազրպէյճանական հասարակութեանը, սակայն բաւականին խնդրահարոյց են համարում Ալիեւի ատորիտար ռեժիմի գործելաճը եւ գործունէութիւնը: Շատերը՝ լինելով ընդդիմադիր, Վրաստանի ներկայիս իշխանութեանը թիրախաւորելու համար փորձում են վերջինիս վարչակարգը համեմատել Ազրպէյճանի ներկայիս վարչակարգի հետ<sup>62</sup>:

Գաղափարական բաժանումից զատ կարելի է իրականացնել նաեւ ոլորտային բաժանում. նախկին եւ ներկայ քաղաքական գործիչներ, լրագրողներ, քաղաքագէտներ, փորձագէտներ, քաղ-հասարակութեան անդամներ: Քաղաքական գործիչները եւ քաղաքագէտները ունեն բաւականին տարբերակուած մօտեցումներ Ազրպէյճանի նկատմամբ: Որոշ շրջանակներ քննադատական մօտեցումներ են արտայայտում Ազրպէյճանի նկատմամբ, եւ հիմնականում ակտիւութիւն են ցուցաբերում, երբ որեւէ միջադէպ է լինում երկու երկրների միջեւ յարաբերութիւններում<sup>63</sup>: Տուեալ փորձագէտները բարձրա-

---

59. Gegeshidze A., Thomas De Waal, Divided Georgia: A Hostage to Polarization, Carnegie Europe, December 08, 2021. (մուտք՝ 06.12.2023).

60. Брегадзе С.: «Интересно, почему Нателашвили вспомнил о Давид-Гареджи только сегодня?», politforumi.com, 06 февраля 2023. (մուտք՝ 04.12.2023).

61. «Վրացական քայլերթը» Ազրպէյճանին վերջնագիր է ներկայացրել, 1in.am, 10 Հոկտեմբեր, 2020. (մուտք՝ 05.12.2023).

62. Anti-Azerbaijani statements by Shalva Natelashvili - Yerevan reanimates a political corpse?! KavkazPlus, 08.06.20. , (մուտք՝ 07.12.2023).

63. Грузинский политик Саникидзе: Большевики создали Азербайджан, а теперь у них претензии на «самый древний» народ Кавказа, Инфотека24, 18 февраля 2020. , (մուտք՝ 04.12.2023).



ծայնում են այն փաստը, որ Ազրայեյճանը չի կարող համարուել հին քաղաքակրթութիւն ինչպէս Վրաստանը եւ Հայաստանը: Մասնաւորապէս, տուեալ փորձագէտները Ազրայեյճանի պատմական հաւակնութիւնները դիտարկում են որպէս սպառնալիք նաեւ վրացական պատմական ժառանգութեանը<sup>64</sup>:

Կան նաեւ պրո-ադրբեջանական հոետորաբանութիւն ունեցող քաղաքագէտներ եւ քաղաքական գործիչներ, որոնք առաջ են քաշում Վրաստան-Ազրայեյճան ընդհանուր շահի շուրջ ձեւաւորուած դաշինքի գաղափարը: Մասնաւորապէս տուեալ քաղաքագէտները Ազրայեյճանը եւ Վրաստանը ներկայացնում են, որպէս երկրներ, որոնք անկախութիւնից ի վեր խնդիր ունեն իրենց տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու: 2023թ. սեպտեմբերեան ագրեսիայից յետոյ տուեալ շրջանակները շնորհաւորեցին Ազրայեյճանի ժողովրդին իրենց տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու կապակցութեամբ<sup>65</sup>: Տուեալ մտեցումները առաջ քաշող քաղաքագէտները նաեւ ակտիւ

64. Elibekyan G., Pashinyan Was Right: Armenians and Georgians Are the Only Ancient Nations in the Region, Public Radio of Armenia, Tbilisi, 21 February 2020. (մուտք՝ 04.12.2023).

On July 22, 2023, an important event happened in a significant attempt to enhance the European Union's opinion of the country in question. Azerbaijan's Foreign Ministry conducted a news conference in partnership with the Media Development Agency and the news Council to announce a key decision. Azerbaijan agreed to remove 58 journalists off the persona non grata list, those who were previously accused of visiting Nagorno-Karabakh from Armenia. This action symbolizes a policy shift that now allows these journalists to enter the country as well<sup>61</sup>. While at the end of the article published by OC Media, some journalists claimed the allegation made by Azerbaijan to be false, this was considered a rather superficial and poor attempt to ease the pressure rising from the EU. In parallel, another educational trip was organized in the recently-occupied territories of Nagorno-Karabakh in July 2023<sup>62</sup>. In the past three years, there has been eight trips to the newly-occupied regions of Nagorno-Karabakh<sup>63</sup>. These trips have been growing ever since the end of war in 2020, The Azerbaijani government is strategically inviting social media influencers to visit both Azerbaijan and the Nagorno-Karabakh region. The main aim of this initiative is the careful construction of a story that promotes development, wealth, and stability in a region characterized by ongoing violence. This project takes on additional importance because of the unfavorable media coverage that the government of Azerbaijan has received for its treatment of Armenians. Acknowledging the powerful impact and wide-ranging appeal of social media influencers, the government is purposefully utilizing these platforms to shift global perspectives. By doing this, it aims to present a story that presents Azerbaijan in a more positive light while navigating the complex dynamics of the ongoing conflict. The main objective is to challenge the dominant narrative of negativity by highlighting positive features and encouraging a sophisticated comprehension of the complex problems at stake in the disputed territory.

---

59 "Statement by President von der Leyen with Azerbaijani President Aliyev", European Commission, 2022.

60 "Azerbaijan: Brutality, Corruption, and Yet a Thriving Oil Deal with the EU", D. Morisson, NYU Jordan Center for the Advanced Study of Russia, 2023.

61 "Azerbaijan removes 58 foreign journalists from blacklist", I. Aghayev, OC Media, 2023.

63 "Visit of foreign travelers to Azerbaijan's Shusha wraps up", Turkic World, 2023.

## Conclusion

This essay aims to give a thorough introduction to the idea of Caviar Diplomacy as it is applied by the state of Azerbaijan. We have examined its key characteristics, identified its main objectives, particularly in the European Union, and clarified its working techniques. According to the report, Azerbaijan's foreign policy environment is significantly shaped by Caviar Diplomacy, especially when it comes to efforts to rationalize and advance key initiatives related to the Southern Gas Corridor and the Nagorno-Karabakh conflict.

Caviar diplomacy's multidimensional influence is apparent in a number of ways. It plays a significant role in shaping attitudes, especially in powerful institutions where Azerbaijan frequently avoids punishment for suspected war crimes, as demonstrated by its involvement in the conflict and blockade of Nagorno-Karabakh between 2020 and 2023. Caviar diplomacy's "positive" effect, as seen in some cases, emphasizes how well it is at influencing viewpoints and reducing attention from other countries. This highlights how political conspiring, and the larger geopolitical context in which Azerbaijan functions interact in a complex way. It is reasonable to think that the apparent absence of responsibility for a number of alleged crimes by Azerbaijan can be viewed as the product of fortunate events rather than the intentional execution of Caviar Diplomacy throughout years. This raises the recommendation that a thorough investigation be carried out to determine the scope of Caviar Diplomacy's influence in such cases. A comprehensive investigation in this area would allow for a more nuanced understanding of whether Azerbaijan's diplomatic actions, especially those associated with caviar diplomacy, have actually had a significant effect on impacting global reactions and helping to avoid sanctions for claimed violations.

The breaking point of the Nagorno-Karabakh conflict was just sealed recently, when after a 10 month blockade, on September 19, Azerbaijan began its onslaught, launching drones and missiles toward Stepanakert, the capital of Nagorno-Karabakh Republic. This marked the beginning of the third war waged for control of the region after many decades. In just several days, eventually, the Azerbaijani army was able to advance into the territory, in parallel destroying villages and settlements on its way. Five days later, ethnic Armenians in Nagorno-Karabakh were forced to launch an enormous forced automobile exodus into Armenia<sup>64</sup>.

Following the aforementioned events, the EU parliament condemned Azerbaijan for its unprovoked attack on the peaceful population of Nagorno-Karabakh calling it "a gross violation of human rights and international law" and "unjustified military attack"<sup>65</sup>. In the same

---

64 "Nagorno-Karabakh's Armenians start to leave en masse for Armenia", Reuters, 2023.

65 "European Parliament condemns Azerbaijan and EU over Nagorno-Karabakh attack", E. Braun, Politico, 2023.

statement, the EU parliament also called to “adopt targeted sanctions against the individuals in the Azerbaijani Government responsible for multiple ceasefire violations and violations of human rights in Nagorno-Karabakh; calls for investigations into the abuses committed by Azerbaijani forces that could constitute war crimes”<sup>66</sup>. The EU Parliament’s bold move was indeed a positive development, but it was accompanied by the notable absence of sanctions against Azerbaijan. Some argue that this omission could be attributed to the EU’s strategic reliance on Azerbaijani gas, creating a degree of codependency. Another significant step made was the remark of PACE “It is not too late for Azerbaijan to redress the situation and prove its goodwill,”<sup>67</sup> on acknowledging Azerbaijan’s commitments to safeguard the rights and freedoms of Armenian residents and outlining its intentions regarding the reintegration of Armenian residents. On the one hand, there’s a perspective suggesting that the EU may be cautious about risking its energy source. However, some argue that this shows a lack of commitment on the part of the EU to the values it supports, suggesting that in its interactions with Azerbaijan, the EU may be neglecting some fundamentals. This debate underscores the complexity and multifaceted considerations that come into play when navigating the intersection of geopolitics, economic interests, and human rights violations. Concerns have been expressed about Azerbaijan’s commitment to European ideals, notably regarding human rights and international norms, as a result of its actions in Nagorno-Karabakh and domestically in Azerbaijan as well. It is unclear how far Azerbaijan will push the limits of European tolerance going forward, which has disappointed the European Parliament with its apparent disobedience, calling for the institution to “undertake a comprehensive review of its relations with Baku”<sup>68</sup>.

A thorough analysis of this phenomenon and its long term effects on the country’s international and internal dynamics may offer enlightening insights. Investigating the effects of Caviar Diplomacy on Azerbaijan’s relationships, both within its borders and on the international stage, may shed light on the complex interaction between economic interests, diplomatic strategies, and geopolitical positioning. Such a study could contribute significantly to understanding the evolving dynamics between Azerbaijan and the European Union, providing a nuanced analysis of the long-term consequences of this diplomatic approach on the perceptions and policies of all parties involved.

---

66 “European Parliament resolution of 5 October 2023 on the situation in Nagorno-Karabakh after Azerbaijan’s attack and the continuing threats against Armenia ()”, European Parliament, 2023.

67 “PACE calls on Azerbaijan to ‘prove its goodwill’ towards the Armenian population of Nagorno-Karabakh”, Council of Europe, 2023.

68 “Nagorno-Karabakh: MEPs demand review of EU relations with Azerbaijan”, Press Release, European Parliament, 2023.

**Narod H. Noramanian is a non-profit professional and researcher. She has two published papers within the scope of her graduate studies at Ghent University. Her area of expertise includes the complexities of collective memory and identity in regions affected by conflict, particularly focusing on Nagorno-Karabakh. Additionally, she explores the phenomenon of armenophobia and investigates the role of civil society in shaping Armenian society. Noramanian has also extensive experience working in the development sector in Armenia and is currently based in The Netherlands.**

**You can reach her at or +31 6 22 459386**

### **Ամփոփում**

Այս աշխատանքը՝ «Ազրայեյճանի քաղաքային դիմանադիտության ազդեցությունը Եւրոպական Միության մէջ» հակիրճ կը ներկայացնէ Ազրայեյճանի արտաքին քաղաքականութիւնը Եւրոպական Միության տարբեր կառոյցներուն մէջ տարիներու ընթացքին: Յօդուածին մէջ կ'անդրադառնանք «Քաղաքային Դիմանադիտութիւն» հասկացողութեան, որ կ'ենթադրէ Ազրայեյճանի կողմէ որդեգրուած քաղաքականութիւն՝ կաշառակերութեամբ եւ կորուսցիայի վրայ հիմնուած: Աշխատանքին մէջ ներկայացուած է Քաղաքային դիմանադիտութեան տարբեր ռազմավարութիւնները եւ նպատակները Եւրոխորհրդարանին եւ Եւրոխորհուրդին մէջ, նշելով քաղաքային դիմանադիտութեան ամենանշանաւոր բացայայտուած դէպքերը: Աշխատանքի ընդհանուր նպատակներէն էր նաեւ հասկնալ քաղաքային դիմանադիտութեան ազդեցությունը Արցախի հիմնախնդրի վրայ՝ մանաւանդ 2020թ. պատերազմէն ետք:

**Բանալի բառեր՝ Եւրոպական Միութիւն, Արցախ, քաղաքային դիմանադիտութիւն, Ազրայեյճան, քաղաքականութիւն**



# ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ, ասպիրանտ

Ձեռք՝ ՆԱԻԹԻ ԴԻՄԱՐ, ԹԵ՞ ԱԻԵԼԻՆ.  
ԱԶՐՊԵՅՓԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ԿԱՊԵՐԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Մրցանքին Երրորդ կրթաթոշակի արժանացած ուսանող ժաննա Վարդանեանի (ՀՀ) հետազոտությունը, նիւթ՝ «Ազրպէյճան եւ Իսրայէլ յարաբերութիւնները», խորհրդատու՝ Շահան Գանտահարեան, Պէյրութի Ազդակ օրաթերթի գլխաւոր խմբագիր, Լիբանան:

**ժաննա Վարդանեան.** Ուսման վայր՝ ՀՀ ԳԱԱ, Արեւելագիտութեան ինստիտուտ, ասպիրանտ, աշխատավայր՝ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիա:



Իսրայելը դե յուրե (ըստ օրենքի) Ազրայեյճանի դաշնակիցը չէ, նոյնիսկ երբեմն դաշնակցի հակառակորդն է, բայց այդ երկիրն Ազրայեյճանին զենքի ամենամեծ մատակարարներից մեկն է: Միաժամանակ Իսրայելն Ազրայեյճանական նաւթի խոշորագոյն սպառողներից է: Սրանք են երկու երկրների յարաբերութիւնները պահող երկու հիմնասիւնները:

Այս յարաբերութիւնները ստիպուած են իրենց վրայ կրել նաեւ այլ ազդեցութիւններ: Երկու երկրների կապերի վրայ ազդող արտաքին գործօնները երկուսն են՝ Իրան եւ Թուրքիա:

Առաջինի դէպքում պարզ է: Իրանն Իսրայելի թշնամին է, Ազրայեյճանի՝ անյարմար եւ երբեմն յարաբերութիւնները սրող հարեւանը: Երկրորդի՝ Թուրքիայի դէպքում իրավիճակն աւելի շատ սիրային եռանկիւնու է նմանում, երբ հերթական պատճառով սրում են Թուրքիա-Իսրայել յարաբերութիւնները, եւ Պաքուն ջանքեր է գործադրում դրանք հարթելու համար: Ազրայեյճանը մինչեւ այժմ որեւէ խնդրի առաջ չի կանգնել այսպիսի հանգամանքներում:

Այս յօդուածում անդրադառնում ենք Ազրայեյճան-Իսրայել յարաբերութիւնների հնարաւորինս շատ կողմերին՝ հաշուի առնելով Իսրայելի կարեւոր դերը մեր տարածաշրջանում, ու յատկապէս այդ երկրի վնասարար ազդեցութիւնը հայ-Ազրայեյճանական հակամարտութեան մէջ:

## **Դիւանագիտական յարաբերութիւնները**

Հարեւանների հետ մշտապէս հակամարտող Իսրայելի համար Ազրայեյճանը կարեւոր է երկու պատճառով՝ նաւթ եւ տեղադիրք (Իրանի հետ հարեւանութիւն): Առաջին վարչապետ Դաւիթ Բեն Գուրիոնի «Շրջագծի հայեցակարգով» երկիրը ջանացել է յարաբերութիւններ հաստատել մուսուլման, բայց ոչ արաբական երկրների հետ:

ԻՍՎՄ փլուզումից յետոյ Թել Աւիւը սկսեց յարաբերութիւններ հաստատել Կենտրոնական Ասիայի մուսուլմանական երկրների եւ Ազրայեյճանի հետ: Իսրայելը Պաքում դեսպանութիւն բացեց արդէն 1993 թուականին<sup>1</sup>: Իսկ Պաքուն այդ ժամանակ խուսափեց փոխադարձութեան սկզբունքով Թել Աւիւ դեսպանութիւն ուղարկելուց, քանի որ իսլամական երկրներն, այդ թւում՝ Իրանը կարող էին կտրուկ արձագանքել դրան:

Կողմերի միջեւ ամենաբարձր մակարդակով առաջին հանդիպումը եղաւ 1997-ին, երբ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանիահուն մեկնեց Պաքու<sup>2</sup>: Իսրայելի վարչապետ

---

1. Murinson A., The Ties between Israel and Azerbaijan, 2014, էջ 14:

2. Shaffer B., Israel's Role in the Second Armenia-Azerbaijan War and Its Implications for the Future, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, Joint Center, 2021, p 3.



տի Ազրպեյճան այց եղաւ նաեւ 2016 թուականին<sup>3</sup>: Յետագայ շարադրանքում կը տեսնենք, որ այս տարեթիւը առանցքային էր երկու երկրների յարաբերութիւններում:

Ազրպեյճանից արտգործնախարարի մակարդակով Իսրայէլ առաջին այցը եղել է 2013 թուականին: Այդ ժամանակ նախարարը յայտարարում է, որ Իսրայէլում Ազրպեյճանի դեսպանատուն բացելու համար բանակցութիւններ են ընթանում: Այնուամենայնիւ, դեսպանատունն այդ ժամանակ այդպէս էլ չբացուեց, փոխարէնը 2014-ին Իսրայէլի ԱԳ նախարարի՝ Պաքու այցի ընթացքում կողմերը ստորագրեցին ԱԳՆ-ների միջեւ մշտական դիւանագիտական խորհրդակցութիւններ անցկացնելու մասին փաստաթուղթ: Նոյն տարուան ընթացքում Ազրպեյճան այցելեց նաեւ Իսրայէլի պաշտպանութեան նախարարը<sup>4</sup>:

Իսկ Ազրպեյճանի պաշտպանութեան նախարարն առաջին անգամ Իսրայէլ մեկնեց 2017-ին<sup>5</sup>: Յաջորդ տարի՝ 2018-ին Երուսաղէմում անցկացուեց Իսրայէլ-Ազրպեյճան միջկառավարական յանձնաժողովի առաջին նիստը<sup>6</sup>:

2021-ին Իսրայէլում բացուեց Ազրպեյճանի տուրիզմի եւ առեւտրի զարգացման կենտրոնը<sup>7</sup>: Երկու երկրները մինչ այդ ստեղծել էին նաեւ մշակութային, հասարակական կառոյցներ՝ «Ազրպեյճանա-Իսրայէլական մշակութային կապերի կենտրոնը», «Ազրպեյճանա-Իսրայէլական բարեկամութեան միջազգային ասոցիացիան» եւ այլն:

Յարաբերութիւնների համար եւս մէկ շրջադարձ եղաւ 2022 թուականին, երբ Պաքուն որոշեց դեսպանատուն բացել Իսրայէլում, ինչն էլ իրականացուեց 2023-ի մարտին<sup>8</sup>: Այս հարցում նախկին զգուշաւորութեան կարիքը Պաքուն այլեւս չունէր, քանի որ դրան հակադրուող կողմերն այլեւս սպառնալիք չէին Ազրպեյճանի համար.

- Նախ Իրանի հետ յարաբերութիւններն այսպէս թէ այնպէս սրուած էին: Պաքուն իր քայլը պատճառաբանում էր նաեւ նրանով, որ Թեհրանը հիւպատոսութիւն էր բացել Հայաստանում՝ Կապանում, բայց սա, ի հարկէ, ընդամէնը պատրուակ էր:

---

3. Ilham Aliyev and Prime Minister of Israel Benjamin Netanyahu held one-on-one meeting, president.az, 13.12.2016, <https://president.az/en/articles/view/22032>, հասանելի է՝ 14.12.2023:

4. Murinson A., The Ties between Israel and Azerbaijan, 2014, էջ 18:

5. Azərbaycanın müdafiə nazirinin İsrailə rəsmi səfəri başlayıb, report.az, 11.09.2017, <https://report.az/herbi-xeberler/azerbaycanin-mudafie-nazirinin-i-sraile-resmi-seferi-baslayib/>, հասանելի է՝ 14.12.2023:

6. В Иерусалиме состоялось первое заседание межправительственной комиссии Азербайджан-Израиль, ednews.net, 16.05.2018, <https://ednews.net/ru/news/politics/281091-v-ierusalime-sostoyalos-pervoe-zasedanie-mejpravitelstvennoy-komissii-azerbaydjan-izrail>, հասանելի է՝ 14.12.2023:

7. İsraildə Azərbaycanın Ticarət və Turizm nümayəndəlikləri açılıb, taxes.gov.az, 29.06.2021, <https://www.taxes.gov.az/az/post/1490>, հասանելի է՝ 14.12.2023:


8. Azərbaycanın İsraildə səfirliyi açıldı, xalqxeber.az, 29.03.2023, <https://xalqxeber.az/agenda/90717-azerbaycanin-srailde-sefirliyi-achildi-tarixi-gun.html>, հասանելի է՝ 14.12.2023:

- Արաբական երկրներն էլ իրենք էին սկսել կապեր հաստատել Իսրայելի հետ: Միս կողմից էլ, 2020 թուականի պատերազմից յետոյ Ազրայելյանն արդեն այնքան էլ կարիք չունէր, որ արաբական երկրներն իրեն աջակցեն հակամարտութեան հարցում:

Դեսպանատան բացումից մէկ ամիս անց Պաքու մեկնեց Իսրայելի արտգործնախարարը՝ երկրների միջեւ երբեւէ փոխանակուած ամենամեծ պատուիրակութեամբ<sup>9</sup>: Յաջորդ ամսին էլ Պաքու այցելեց Իսրայելի նախագահը<sup>10</sup>:

## Տնտեսական համագործակցութիւն

Երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառութիւնը պտտում է երկու գործօնի շուրջ: Մի կողմից Ազրայելյանը նաւթ եւ նաւթամթերք է արտահանում Իսրայել: Միս կողմից Իսրայելը զէնք, զինամթերք եւ ռազմական տեխնիկա է մատակարարում Ազրայելյանին: Առեւտրի մասին տուեալներին յետադարձ հայեացք նետելով՝ նոյնիսկ կարելի է տեսնել, թէ երբ են երկու երկրները պատրաստուել մարտական գործողութիւնների կամ այլ ճրգնաժամերի:



*Գրաֆիկի ինտերակտիւ տարբերակը կարող էք տեսնել :*


9. Глава МИД Израиля отправился на переговоры в Азербайджан, interfax.az, 18.04.2023, <https://interfax.az/view/890458>, հասանելի է՝ 14.12.2023:

10. Azərbaycan və İsrail prezidentlərinin geniş tərkibdə görüşü keçirilib, president.az, 30.05.2023, <https://president.az/az/articles/view/6005>, հասանելի է՝ 14.12.2023:

Այսպես, Ազրայեյճանից Իսրայել արտահանումն իր պիկին հասել է 2008 թուականին՝ գերազանցելով 3,5 միլիարդ տոլարը: Առհասարակ, Ազրայեյճանից Իսրայել արտահանումը մշտապես եւ գրեթէ ամբողջութեամբ կազմուած է եղել նաւթից եւ փոքր քանակութեամբ նաւթամթերքից: Միւս ապրանքները չնչին տեղ ունեն արտահանման մէջ:

Այս պիկին յաջորդել է Իսրայելից Ազրայեյճան արտահանման պիկը՝ աւելի քան 260 միլիոն դոլարի ապրանք է մատակարարուել Պաքուին: Սրա մեծ մասն էլ կազմել են ռադիօ եւ նավիգացիոն սարքաւորումները, ավիացիոն սարքաւորումները, սպառազինութիւնը եւ զինամթերքը: Այս փուլը համընկել է Իրանի շուրջ լարուածութեան աճին, որին կ'անդրադառնանք նաեւ ռազմական համագործակցութեան մասին հատուածում:

Երկու երկրների միջեւ առեւտրի յաջորդ պիկը եղել է 2016 թուականին՝ համընկելով Ապրիլեան պատերազմի, դրանից յետոյ Ազրայեյճանի սպառազինման հետ: Այդ տարի Իսրայելը եւս 260 միլիոն տոլարի ապրանքներ է ուղարկել Ազրայեյճան. մեծ մասը՝ նորից սպառազինութիւն, ռազմական տեխնիկա, զինամթերք, սարքաւորումներ:




*Գրաֆիկի ինտերակտիւ տարբերակը կարող էք տեսնել :*

Այս փուլում Ազրայեյճանից Իսրայել արտահանումը այնքան էլ մեծ չի եղել, նոյնիսկ աւելի փոքր է եղել, քան նախորդ տարիներին:

Այստեղ հարկ ենք համարում շեշտել, որ երկրները կարող էին եւ վստահաբար թաքցըրել են իրենց առեւտրի որոշ տուեալներ: Տուեալները, որ վերցրել ենք ՄԱԿ-ին պատկանող ռեսուրսից՝ UN Comtrade հարթակից, հաւաքում են երկրների կողմից ինքնակամ զեկուցումների միջոցով եւ կարող են չարտայայտել ամբողջական պատկերը:

Միեւնոյն ժամանակ, այն, ինչ ցոյց են տալիս այս տուեալները, արդէն իսկ վտանգաւոր միտումներ է բացայայտում: 2022 թուականի տուեալներով՝ Իսրայելը կրկին Ազրայեյճան

ճանին մատակարարել է հիմնականում ռազմական նշանակութեան ապրանքատեսակներ, այդ թվում նաև՝ ԱԹՍ-ներ:



*Գրաֆիկի ինտերակտիվ տարբերակը կարող էք տեսնել: Դրանում կարող էք ուսումնասիրել նաև նախորդ տարիների տուեալները և այլն: Ազրայեճանից Իսրայել արտահանումների նոյնախի գրաֆիկը կարող էք տեսնել: Ֆունկցիաները նոյնն են:*

Սպառազինությունների մատակարարումների դիմաց Ազրայեճանը մշտապես վարձահատոյց է եղել ոչ միայն նախօր, այլև լրացուցիչ քաղաքական ու տնտեսական արտոնություններով:

Մասնաւորապէս, Իսրայէլն առաջին երկրներից էր, որ հնարաւորութիւն ստացաւ այսպէս կոչուած վերակառուցման աշխատանքներ իրականացնել 2020 թուականի Արցախեան պատերազմի հետեւանքով Ազրայեճանի օկուպացիայի տակ յայտնուած արցախեան տարածքներում: Իսրայէլական ընկերութիւնները օկուպացուած Կովսականում «խելացի գիւղի» կառուցման նախագծին ներգրաւուեցին<sup>11</sup>:

11. Qarabağda birinci “Ağilli kənd” layihəsinin təməli qoyuldu. “Ağilli kənd” nədir?, azerbaijan-news.az, 28.04.2021, <https://www.azerbaijan-news.az/posts/detail/qarabagda-birinci-agilli-kend-layihesinin-temeli-qoyuldu-agilli-kend-nedir-1619608871>, հասանելի է՝ 14.12.2023:

Դրանից բացի, Իսրայելական ընկերությունները յայտեր ներկայացրին նաև «կանաչ էներգիայի», գիղատնտեսության, հիանդանոցների կառուցման ոլորտներում գործունեության համար: Ըստ Պաքում Իսրայելի դեսպանի՝ Արցախից գրաւուած տարածքներում շինարարական աշխատանքներին մասնակցելու համար յայտ է ներկայացրել մի քանի տասնեակ Իսրայելական ընկերություն<sup>12</sup>:

Երկրները համագործակցում են նաև գիղատնտեսության ոլորտում: Օրինակ, 2022թ. համագործակցութիւն է հաստատուել Ազրայէճանի ագրարային համալսարանի եւ Իսրայելական «Արավա» գիղատնտեսական կրթութեան ուսումնական կենտրոնի միջեւ: Կողմերի միջեւ ստորագրուած յուշագրի համաձայն՝ Ազրայէճանցի 50 ուսանող վերապատրաստուելու է Իսրայելական նշուած կենտրոնում<sup>13</sup>:

2022-ին եւ 2023-ին Ազրայէճան է այցելել Իսրայելի գիղատնտեսութեան նախարարը: 2023-ի սեպտեմբերին երկու երկրների գիղատնտեսութեան նախարարութիւնները ստորագրել են ճանապարհային քարտէզ 2023-2025թթ. ոլորտում համագործակցութեան վերաբերեալ, ինչպէս նաև հռչակագիր «գիղատնտեսութեան ոլորտում համագործակցութեան մտադրութիւնների» մասին<sup>14</sup>: Գիղատնտեսութեան ոլորտում համագործակցութիւնը ներառում է նաև ոռոգման համակարգերի ներդրումը (Իսրայէլն այս ոլորտում համաշխարհային առաջատարներից է):

## **Ռազմական համագործակցութիւն**

2020 թուականի Արցախեան պատերազմում Ազրայէճանի համար առանցքային դեր են ունեցել Իսրայելական ռազմական անօդաչուները: Դրանց ձեռքբերումներն Ազրայէճանը սկսել էր դեռ 2000-ականների վերջին:

Այս շրջանում Ազրայէճանի ռազմական գնումները անհանգստացրել էին նաև Իրանին, քանի որ Իսրայելից գնումների մի մասը նաև ծովային զինատեսակներ էին, բազաւորուելու էին Կասպից ծովում եւ ակնյայտօրէն նախատեսուած չէին Արցախեան մարտական գործողութիւնների համար: Հենց այդ ժամանակն էր, որ համընկնում է Իրանի

---

12. Посол: Десятки израильских компаний обратились для участия в проектах в Карабахе, Caliber.az, 16.02.2022, <https://caliber.az/post/58782/>, հասանելի է՝ 14.12.2023:

13. В Израиле будут обучаться 50 азербайджанских студентов, 1news.az, 06.07.2022, <https://1news.az/news/20220706055519564-V-izraile-budut-obuchatsya-50-azerbaidzhanskikh-studentov>, հասանելի է՝ 14.12.2023:

14. Азербайджан и Израиль подписали дорожную карту по сотрудничеству в сфере сельского хозяйства, azertag.az, 11.09.2023, [https://azertag.az/ru/xeber/azerbaidzhan\\_i\\_izrai\\_l\\_podpisali\\_dorozhnyuyu\\_kartu\\_po\\_sotrudnichestvu\\_v\\_sfere\\_selskogo\\_hozyaistva-2748179](https://azertag.az/ru/xeber/azerbaidzhan_i_izrai_l_podpisali_dorozhnyuyu_kartu_po_sotrudnichestvu_v_sfere_selskogo_hozyaistva-2748179), հասանելի է՝ 14.12.2023:


շուրջ միջազգային լարուածութեանը, ինչին անդրադարձել ենք այլ յօդուածներում<sup>15</sup>:

Իսկ հայ-Ազրայէճանական համատեքստում 2015 թուականի առանձին մարտական գործողութիւնների ժամանակ եւ յատկապէս 2016 թուականի Ապրիլեան պատերազմի ժամանակ Ազրայէճանը կիրառեց այդ Իսրայէլական ԱԹՍ-ները եւ հետախուզական, եւ հարուածային գործողութիւնների ընթացքում:

2016-ի դեկտեմբերին Իլիամ Ալիեւը նոյնիսկ յայտարարեց, որ այդ պահի դրութեամբ Ազրայէճանը եւ Իսրայէլը ստորագրել են ռազմական տեխնիկայի գնման 4,58 մլրդ ԱՄՆ տոլարի պայմանագիր<sup>16</sup>: Սակայն բաց աղբիւրներում առկայ տեղեկութիւններով այս թիւը չէր հաստատում:

Միեւնոյն ժամանակ, Ազրայէճանին սպառազինելու հարցում Իսրայէլի դերը շատ մեծ է: Այս երկիրը երկրորդ տեղում է Ազրայէճանին վաճառուած սպառազինութիւնների ծաւալով եւ այդ ցուցանիշով զիջում է միայն Ռուսաստանին: Այդ սպառազինութիւնները յատկապէս մեծ կշիռ ունեն 2010-ականների կէսերի մատակարարումներում:

Այստեղ նոյնպէս պէտք է յիշատակել, որ տուեալները կարող են ամբողջական չլինել, քանի որ երկրները հակուած չեն զեկուցել իրենց ռազմական գնումների մասին: Այս ցուցանիշները վերցրել ենք SIPRI հետազօտական ինստիտուտի բազաներից, որոնք այս պահին առաւել հեղինակաւոր են համարում:



*Գրաֆիկի ինտերակտիւ փարբերակը կարող էք տեսնել:*

15. Վարդանեան Ժ., Իսրայէլ-ազրայէճան ական համագործակցութեան ազդեցութիւնը Իրան-Ազրայէճան յարաբերութիւնների վրայ, ՀՀ ԳԱԱ, Արեւելագիտութեան ինստիտուտ, Իրանագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան 2023:

16. İlham Əliyev və Baş nazir Benjamin Netanyahu mətbuata bəyanatlarla çıxış ediblər, president.az, 04.05.2019, <http://president.az/articles/22035>, հասանելի է՝ 14.12.2023:

Ռազմինֆո կայքի տուեալներով<sup>17</sup> 2020 թուականի դրությամբ Ազրայեյճանական զինուած ուժերի սպառազինութեան մէջ եղել են հետեւեալ Իսրայէլական ԱԹՍ-ները.

- հետախուզական՝ Orbiter-2, Orbiter-3, Heron, Hermes-900, Hermes-450, Aerostar, Thunder-B, Skylark,

- հարուածային եւ մահապարտ՝ Orbiter-1K, Harop (Harpy-2), Sky Striker:

Սրանց զգալի մասը, ըստ SIPRI-ի տուեալների, Իսրայէլն Ազրայեյճանին վաճառել է 2010-ականների երկրորդ կէսին: Աւելին, սրանցից առնուազն հետախուզական Orbiter-2 եւ Aerostar, ինչպէս նաեւ մահապարտ Orbiter-1K ԱԹՍ-ներն Իսրայէլական արտօնագրով արտադրուել են հենց Ազրայեյճանում՝ Իսրայէլից բերուած մասերով:

2020 թուականի պատերազմի ընթացքում Արցախի դէմ Ազրայեյճանը կիրառել է նաեւ Իսրայէլից գնած այլ սպառազինութիւն: Մասնաւորապէս յայտնի են Lora հեռահար հրթրթիռային համալիրի կիրառման դէպքը<sup>18</sup>. դրանով թիրախաւորուել էր Աղաւնոյի կամուրջը, որ կապում էր Հայաստանը եւ Արցախը: (Իսրայէլից Ազրայեյճանի ռազմական գնումների մասին SIPRI-ի միւս տուեալները տես յօդուածի յաւելումում):

Բայց բացի սեփական արտադրութեան զինատեսակներն Ազրայեյճանին մատակարարելուց, Իսրայէլը յայտնի նաեւ նրանով, որ ներգրաւուել է Չեխիայից և Սլովակիայից Ազրայեյճանին զինատեսակների ապօրինի մատակարարման գործարքում<sup>19</sup>: Մասնաւորապէս, Դանա հաուրիցները եւ RM-70 Ռապիրա ՀԿՌՀ-ները Ազրայեյճան են հասցուել Իսրայէլի օդանաւակայաններով՝ փոխադրման փաստը կոծկելու համար: Սրանք նոյնպէս յետագայում կիրառուել են 2020 թուականի Արցախեան պատերազմում:

Իսրայէլից Ազրայեյճան ռազմական մատակարարումները շարունակուում են նաեւ այսօր<sup>20</sup>:

Բացի զէնքի մատակարարումները, Իսրայէլն Ազրայեյճանի հետ համագործակցում է նաեւ ռազմական կրթութեան, արդիւնաբերութեան ոլորտներում: Օրինակ, Իսրայէլցի հրահանգիչները մասնակցել են Ազրայեյճանի ՁՈւ<sup>21</sup>, ինչպէս նաեւ յատուկ նշանակու-

---

17. Ազրայեյճանի ԱԹՍ-ների պարկն ու դրանց կիրառումը, razm.info, 20.01.2021, <https://razm.info/147895>, հասանելի է՝ 14.12.2023:

18. Azerbaijan uses Israeli LORA missile in conflict with Armenia - WATCH, The Jerusalem post, 03.10.2020, <https://www.jpost.com/israel-news/video-shows-azerbaijan-using-israeli-lora-missile-in-conflict-with-armenia-644327>, հասանելի է՝ 14.12.2023:

19. Խաչիկեան Հ., Ազրայեյճանը շարունակում է չեխական զէնք ստանալ Իսրայէլի միջոցով, razm.info, 18.04.2018, <https://razm.info/124918>, հասանելի է՝ 14.12.2023:

20. Азербайджанский перевозчик оружия "Silk Way" продолжает полеты на израильскую авиабазу Овда, Поствойна / Հետպատերազմ, 12.12.2023, [https://t.me/Arm\\_Aeternum7/551](https://t.me/Arm_Aeternum7/551), հասանելի է՝ 14.12.2023:

21. Վերանեան Կ., Ազրայեյճան-Իսրայէլ ռազմատեխնիկական համագործակցութեան շուրջ, noravank.am, 04.05.2019, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=14940](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14940), հասանելի է՝ 14.12.2023:

թեան ուժերի վերապատրաստմանը<sup>22</sup>: Իսրայելը զբաղուել է նաեւ Ազրայէյճանի բանակի տանկերի ու այլ զրահատեխնիկայի արդիականացմամբ<sup>23</sup>: Իսկ 2011թ. Ազրայէյճանում բացուել է համատեղ գործարան<sup>24</sup>, որը զբաղում է արդէն վերը յիշատակուած Aerostar, Orbiter տեսակի համատեղ ԱԹՍ-ների հաւաքմամբ:



### Կիբեր ոլորտում համագործակցութիւն

Երկու երկրները համագործակցում են նաեւ կիբեր ոլորտում: Թէեւ յիշատակում է կիբեր անվտանգութիւնը, բայց ակնյայտ է, որ կողմերի օրակարգում նաեւ կիբեր յարձակումներն են:

Մասնաւորապէս, հաւանական է համարում, որ հենց Ազրայէյճանն է կանգնած Իսրայէլական Pegasus վիրուսներով հայկական օգտատէրերի սարքերի վարակումների հետեւում: Իրենց սարքերի վրայ այդպիսի վարակումների յայտնաբերման մասին տարբեր ժամանակներում տեղեկացրել են Նիկոլ Փաշինեանը, Վահագն Խաչատուրեանը, Ալէն Սիմոնեանը, տարբեր պաշտօնեաներ, լրագրողներ, հասարակական գործիչներ:

Ոլորտի մասնագէտ Սամուէլ Մարտիրոսեանի կարծիքով՝ նոյնպիսի յարձակումներ եղել են նաեւ Արցախի պաշտօնեաների եւ գործիչների սարքերի վրայ: Յայտնի վարակումները եղել են 2020 թուականից սկսած եւ շարունակում են մինչեւ հիմա: Վարակումների թիւը, ըստ Մարտիրոսեանի, կարող է հազարներով հաշուրուել<sup>25</sup>:

22. Azerbaijan-Israel Military Partnership: Implications for Regional Security, Israeldefence.co.il,12.04.2017, <https://www.israeldefence.co.il/en/node/29230>, հասանելի է՝ 14.12.2023:

23. Վերանեան Կ., Ազրայէյճան-Իսրայէլ ռազմատեխնիկական համագործակցութեան շուրջ, noravank.am, 04.05.2019, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=14940](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14940), հասանելի է՝ 14.12.2023:

24. Президент Азербайджана принял участие в открытии ряда предприятий оборонной промышленности, news.day.az, 04.05.2019, <http://news.day.az/politics/256090.html>, հասանելի է՝ 14.12.2023:

25. Մարտիրոսեան Ս., Հայաստանի և Արցախի անվտանգութեանը Pegasus-ի հասցրած վնասը, media.am, 11.01.2023, <https://media.am/hy/critique/2023/11/01/36609/>, հասանելի է՝ 14.12.2023:





Այս ոլորտում Իսրայելի կողմից Ազրպեյճանին ուղղուած օժանդակութեան մասին եւ խօսում անուղղակի փաստերը: Օրինակ, 2022-ին Իսրայել է մեկնել Ազրպեյճանի թուային զարգացման եւ տրանսպորտի նախարարը, եւ այցի ընթացքում որոշուել է Ազրպեյճանում Իսրայելի աջակցութեամբ ստեղծել կիբերանվտանգութեան կենտրոն, որտեղ Իսրայելական Technion համալսարանի պրոֆեսորադասախօսական կազմը 3 տարում պէտք է պատրաստի 1000 մասնագէտի<sup>26</sup>:

2023-ի յունուարի վերջին քառօրեայ այցով Իսրայել է մեկնել նաեւ Ազրպեյճանի կիբերանվտանգութեան ընկերութիւնների ասոցիացիայի (ստեղծուել է 2022-ին) պատուիրակութիւնը: Իսրայելում պատուիրակութիւնը հանդիպել է գործընկեր կառոյցների հետ, քննարկել փորձի փոխանակման եւ այլ հարցեր<sup>27</sup>: 2023-ի ապրիլին Իսրայելի ԱԳ նախարարը յայտարարել է կիբերոլորտում նոր պայմանագրերի կնքման մասին՝ Ազրպեյճանին անուանելով ռազմավարական գործընկեր<sup>28</sup>:

Արդէն 2023-ի մայիսն Իսրայելի նախագահի հետ հանդիպումից յետոյ Իլիամ Ալիեւը կարեւորել է կիբեր ոլորտում ձեւաւորուող համագործակցութիւնը՝ յայտարարելով, որ կիբերանվտանգութիւնն ազգային անվտանգութեան մաս է, եւ ոլորտում Իսրայելական ընկերութիւնների ունեցած փորձը Ազրպեյճանի համար օգտակար կը լինի<sup>29</sup>:

Արդէն 2023-ի մայիսն Իսրայելի նախագահի հետ հանդիպումից յետոյ Իլիամ Ալիեւը կարեւորել է կիբեր ոլորտում ձեւաւորուող համագործակցութիւնը՝ յայտարարելով, որ կիբերանվտանգութիւնն ազգային անվտանգութեան մաս է, եւ ոլորտում Իսրայելական ընկերութիւնների ունեցած փորձը Ազրպեյճանի համար օգտակար կը լինի<sup>29</sup>:

---

26. Azərbaycanla İsrailin dəstəyi ilə Kibertəhlükəsizlik Mərkəzi yaradılır, report.az, 30.06.2022, <https://report.az/ikt/azerbaycanda-israilin-desteyi-ile-kibertehluksesizlik-merkezi-yaradilir/>, հասանելի է՝ 14.12.2023:

27. Изучается опыт Израиля в области кибербезопасности, azertag.az, 03.02.2023, [https://azertag.az/ru/xeber/izuchaetsya\\_opyt\\_izrailya\\_v\\_oblasti\\_kiberbezopasnosti-2474837](https://azertag.az/ru/xeber/izuchaetsya_opyt_izrailya_v_oblasti_kiberbezopasnosti-2474837), հասանելի է՝ 14.12.2023:

28. Азербайджан и Израиль подпишут новые соглашения в сферах инноваций, кибербезопасности и образования – Эли Коэн, Trend.az, 19.04.2023, <https://www.trend.az/business/economy/3737307.html>, հասանելի է՝ 14.12.2023:

29. Алиев: Азербайджан и Израиль активно взаимодействуют в сфере кибербезопасности, az.sputniknews.ru, 30.05.2023, <https://az.sputniknews.ru/20230530/aliev-azerbaydzhani-izrail-aktivno-vzaimod-eystvuyut-v-sfere-kiberbezopasnosti-455404356.html>, հասանելի է՝ 14.12.2023:

## Թուրքիայի եւ Իրանի գործոնները

Ինչպէս վերելում նշել ենք, Իսրայէլ-Ազրպէյճան յարաբերութիւնները վակուումի մէջ չեն, եւ դրանց վրայ ազդում են նաեւ հարեւան երկրները:

Թուրքիայի դէպքում այդ ազդեցութիւնն առանձնայատուկ է: Այդ երկիրը պարբերաբար հռետորական հակամարտութիւնների մէջ է մտնում Իսրայէլի հետ՝ փորձելով գրաւել իսլամական աշխարհի առաջնորդի դերը: Դրա նախկին օրինակներից մէկը Մավի Մարմարա նաւի ներգրամամբ միջադէպն էր, երբ Թուրքիան փորձել էր հումանիտար օգնութիւն ուղարկել Իսրայէլի կողմից շրջափակուած Գազայի հատուած<sup>30</sup>:

Իսրայէլ-Համաս հակամարտութեան ներկայ փուլում նոյնպէս Թուրքիան փորձում է առաջնորդի դեր ստանձնել՝ հակադրուելով Իսրայէլի գործողութիւններին: Հիմա Թուրքիան նոյնքան ակտիւ չէ, սակայն շարունակում է Իսրայէլի դէմ հռետորաբանութիւնը:

Այս հանգամանքներում հետաքրքիր է, որ հակաիսրայէլական հռետորաբանութիւնից այն կողմ, Թուրքիան որեւէ կերպ չի փորձում որպէս Իսրայէլի վրայ լծակ օգտագործել իր «փոքր եղբօր»՝ Ազրպէյճանի հետ այդ երկրի յարաբերութիւնները<sup>31</sup>: Աւելին, Պաքուն փորձել է միջնորդել եւ կարգաւորել երկու գործընկերների յարաբերութիւնները: Դրա համար եղել են նաեւ բարենպաստ գործոններ. թուրքական տարածքով է անցնում Ազրպէյճանից Իսրայէլ նաւթի մատակարարումն ապահովող Պաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը, որով նաւթի մատակարարումները երբեք չեն դադարել՝ անգամ Իսրայէլ-Թուրքիա յարաբերութիւնների ծայրահեղ լարուածութիւնների շրջանում:

Նոյն կերպ նաեւ հիմա. Թուրքիան որեւէ կերպ չի փորձում դադարեցնել նաւթի մատակարարումը Իսրայէլ, ինչի շուրջ իր հռետորաբանութիւնը կառուցում է Իրանը:

Թեհրանը բազմիցս յայտարարել ու կոչեր է արել իսլամական երկրներին, որ նրանք նաւթ չմատակարարեն Իսրայէլին: Թեհրանը նաեւ ուղիղ կոչեր է արել Անգարային՝ գործնական քայլեր ձեռնարկելու համար<sup>32</sup>: Այդպիսի քայլեր չեն եղել:

Իրանի համար Իսրայէլի հարցը առանցքային է, առնուազն հռետորաբանութեան մակարդակում: Եւ երբ Գազայի ներկայ իրավիճակի պայմաններում Ազրպէյճանը շարունակում է նաւթ մատակարարել Իսրայէլին, դա խորացնում է իրանական կողմի անվստահութիւնը Պաքուի նկատմամբ:

---

30. <https://az.sputniknews.ru/20230530/aliev-azerbaydzhan-i-izrail-aktivno-vzaimodeystvuyut-v-sfere-kiberbezopasnosti-455404356.html>,

31. Azerbaijan: Ready to host trilateral summit with Israel, Turkey, Israelhayom.com, 25.04.2021, <https://www.israelhayom.com/2021/04/25/azerbaijan-ready-to-host-trilateral-summit-with-israel-turkey/> հասանելի է՝ 14.12.2023:

32. مذاکره رئيسی واردوغان درباره فلسطين, Mehrnews.com, 09.11.2023, <https://www.mehrnews.com/news/5934648/>, հասանելի է՝ 14.12.2023:

Թեհրանում յայտարարում են, որ Իսրայելն Ազրայեյճանի հետ բարեկամություն է անում՝ այդ երկրի տարածքն Իրանի դեմ օգտագործելու համար: Եւ այս մեղադրանքները ունեն հիմքեր: Մասնաւորապէս, 2012 թուականին, երբ Իսրայելի յատուկ ծառայութիւնների ներկայացուցիչները սպաննեցին իրանցի միջուկային ֆիզիկոսների, Թեհրանը նաեւ Ազրայեյճանին մեղադրեց այդ գործողութեանն անուղղակի մասնակցելու մէջ<sup>33</sup>:

Նոյնպիսի մեղադրանքներ եղան, երբ 2014 թուականին Իրանի Նաթանզ միջուկային օբյեկտի մօտ խոցուեց Իսրայելական արտադրութեան Hermes-450 անօդաչու թռչող սարք: Թեհրանում յայտարարեցին, որ այն օդ էր բարձրացուել հենց Ազրայեյճանի տարածքից<sup>34</sup>:

Վերը նշուած երկու դէպքերը առանցքային, բայց էպիզոդիկ էին: 2010-ականներին Իրանի կողմից Ազրայեյճանին ուղղուած աւելի «կայուն» մեղադրանքներից մէկը վերաբերում է Իսրայելից ռազմական գնումներին, որոնց մասին արդէն նշել ենք: Բանն այն է, որ ներքեւում նշուած ցանկում կարող էք տեսնել զինատեսակներ եւ ռազմական տեխնիկա, որը նոյնիսկ մեծ ցանկութեան դէպքում Ազրայեյճանը չի կարող կիրառել որեւէ այլ տեղում, եթէ ոչ Կասպից ծովում եւ հենց Իրանի դէմ:

Կասպից ծովում Ազրայեյճանը չլուծուած սահմանային խնդիրներ ունի Իրանի հետ, եւ Իրանը նաեւ միակ երկիրն է, որի հետ Ազրայեյճանն ունակ է հակադրուել Կասպից ծովում: Իսկ Իսրայելից գնուած սպառազինութեան մէջ կան մոտորանաւակներ ու ծովային բազաւորման ռադարներ ու հրթիռային համակարգեր, որոնք ակնյայտօրէն ուղղուած են հենց Իրանի դէմ:

Սրա շուրջ երկու երկրները ունեցել են դիւանագիտական բանավէճեր: Մասնաւորապէս, 2012-ին, երբ յայտնի դարձաւ Իսրայել-Ազրայեյճան աւելի քան 1 մլր. տոլար արժողութեամբ սպառազինութեան գնումների պայմանագրի մասին, Թեհրանում Ազրայեյճանը դեսպանը հրաւիրուեց Իրանի ԱԳՆ: Ազրայեյճանից վստահեցրել էին, որ Իսրայելից գնուող սպառազինութեան թիրախն Արցախն է<sup>35</sup>:

2020 թուականի Արցախեան պատերազմից եւ Իրանին սահմանակից արցախեան տարածքների օկուպացիայից յետոյ Իրանի համար մտահոգութեան նոր պատճառներ են առաջ եկել: Ինչպէս նշեցինք, Իսրայելական ընկերութիւններն առաջիններից էին, որ Արցախից գրաւուած տարածքներում շինարարական նախագծեր իրականացնելու իրա-

---

33. احضار سفیر آذربایجان به وزارت خارجه , Dolat.ir, 11.02.2012, <https://dolat.ir/detail/211642> , հասանելի է 14.12.2023:

34. Министр обороны Ирана о России, Сирии, Турции, Азербайджане и Израиле, Iran.ru, 28.12.2016, [https://www.iran.ru/news/analytics/104040/Ministr\\_oborony\\_Irana\\_o\\_Rossii\\_Sirii\\_Turcii\\_Azerbaydzhane\\_i\\_Izraile](https://www.iran.ru/news/analytics/104040/Ministr_oborony_Irana_o_Rossii_Sirii_Turcii_Azerbaydzhane_i_Izraile), հասանելի է 01.08.2023:

35. هشدار وزارت خارجه به سفیر آذربایجان , Tabnak.ir, 29.02.2012, <https://www.tabnak.ir/fa/news/230028/>, հասանելի է 14.12.2023:

ունք են ստացել: Իրանի համար սա նշանակում է իր սահմանների մօտ Իսրայելի ներկայութեան եւս մէկ օճախ:

2021-ի աշնանը, երբ խիստ լարուել էին Պաքուի հետ յարաբերութիւնները, Թեհրանը յայտարարեց, որ Իսրայելն Ազրայէճանի սահմանների մօտ ներկայութիւն



ունի եւ լրտեսում է Իրանին, սակայն նրանց բազաների թուի մասին ստոյգ տեղեկութիւն չկայ<sup>36</sup>: Ազրայէճանի հակաիրանական գործողութիւնները Թեհրանում մեկնաբանում էին որպէս Իսրայելի հրահրման հետեւանք<sup>37</sup>:

2021-ին եւ 2022-ին Իրանի զինուած ուժերը Ազրայէճանի սահմանների մօտ նոյնիսկ զօրավարժութիւններ անցկացրին՝ նաեւ հակաիսրայէլական ուղերձներ յղելով: Ուշագըրաւ է, որ 2022-ի իրանական զօրավարժութիւնից առաջ Ազրայէճան էր այցելել Իսրայէլի պաշտպանութեան նախարարը, ինչն էլ Իրանում ընկալեցին որպէս իրենց դէմ ուղղուած քայլ<sup>38</sup>:

Իրանի կողմից նման հռետորաբանութեան եւս մէկ առիթ եղաւ, երբ Թել-Աւիում բացուեց Ազրայէճանի դեսպանութիւնը: Արարողութեան ժամանակ Իսրայելի ԱԳ նախարարը յայտարարեց, թէ Ազրայէճանի հետ Իրանի դէմ միասնական ճակատ են ստեղծելու: Պաշտօնական Թեհրանից արձագանքեցին, որ դա Ազրայէճանի տարածքն Իրանի դէմ օգտագործելու փորձ է եւ ապացոյց է առ այն, որ Իսրայէլը ցանկանում է Ազրայէճանի տարածքն Իրանի ազգային անվտանգութեան համար սպառնալիքի վերածել<sup>39</sup>:

Միաժամանակ քարոզչական մակարդում Իսրայէլը լայն աջակցութիւն է ցուցաբերում Ազրայէճանին Իրանի նկատմամբ տարածքային նկրտումներ ներկայացնող այսպէս կոչ-

36. افزایش<sup>۸</sup> برابری قاچاق خودروهای لوکس, Mehrnews.com, 08.10.2021, <https://www.mehrnews.com/news/5322478/>, հասանելի է 14.12.2023:

37. Վարդանեան ժ., Իրանի դիրքորոշումը Արցախեան երրորդ պատերազմի ընթացքում և յետոյ, Երևան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2022:

38. بررسی و تحلیل سفر مخفیانه وزیر جنگ اسرائیل به باکو, Iranpress.com, 05.10.2022, <https://shorturl.at/fpyFO>, հասանելի է 14.12.2023:

39. مقامات آذربایجان توضیح دهند, کنعانی, Isna.ir, 31.03.2023, <https://www.isna.ir/news/1402011104231/>, հասանելի է 14.12.2023:

ուած «Հարաւային Ազրպէյճանի» թեզի առաջնղման գործում<sup>40</sup>: Սրա կողքին Իրանում նաեւ այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցքի» առաջնային շահառուներից են համարում Իսրայէլին:

Այս ամենից ելնելով էլ՝ Իսրայէլ-Ազրպէյճան համագործակցութեան դէմ Իրանում պարբերաբար ցոյցեր են կազմակերպում Ազրպէյճանի դիւանագիտական ներկայացուցչութիւնների դիմաց<sup>41</sup>:

Հենց այս ֆոնին Ազրպէյճանը շարունակում է նաեւ մատակարարել Գազայում գործողութիւններ իրականացնող Իսրայէլին՝ չնայած Իրանի բազմաթիւ կոչերին<sup>42</sup>:

## Ամփոփում

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ չնայած արտաքին, մասնաւորապէս՝ Իրանի որոշակի դիմադրութեանը՝ Իսրայէլի եւ Ազրպէյճանի համագործակցութիւնը կայուն է, բազմաբովանդակ եւ երկկողմանի ձեռնտու: Այս իմաստով երկու կողմերին էլ կարելի է նախանձախնդիր եւ նախաձեռնող համարել այս յարաբերութիւնների մէջ:

Իսրայէլի համար Ազրպէյճանը յարմար եւ հարուստ առեւտրային գործընկեր է, որին կարելի է սեփական ռազմական արտադրանքը վաճառել: Այն նաեւ յարմար հարթակ է Իրանի դէմ փոքր մասշտաբի գործողութիւններ իրականացնելու եւ աւելի մեծ մասշտաբի նախագծեր մշակելու համար: Այս ամէնի դիմաց Իսրայէլը պատրաստ է նաեւ Ազրպէյճանին լրացուցիչ ծառայութիւններ մատուցել, ինչպէս օրինակ՝ Չեխիայից եւ Սլովակիայից զէնքի սկանդալային տրանզիտն էր:

Ազրպէյճանի համար նոյնպէս Իսրայէլը լաւ գործընկեր է, եւ հարցը միայն ու այդքան էլ նաեւ վաճառքը չէ: Ազրպէյճանն իր նաեւն ու գազը կարող է վաճառել նաեւ այլ շուկաներում, ինչպէս օրինակ՝ Եւրոպան: Պաքուի համար առաւել կարեւոր է ի դէմս Իսրայէլի ունենալ զէնքի մատակարարի, որը կարող է յաղթահարել խոչընդոտներ՝ այդ զէնքը հասցնելու համար:

Այս պայմաններում Ազրպէյճանն էլ իր հերթին պատրաստ է եւ փորձում է միջնորդ դառնալ, երբ սրում են իր դաշնակից Թուրքիայի եւ գործընկեր Իսրայէլի յարաբերու-

---

40. Վարդանեան Ժ., Իսրայէլ-ազրպէյճանական համագործակցութեան ազդեցութիւնը Իրան-Ազրպէյճան յարաբերութիւնների վրայ, ՀՀ ԳԱԱ, Արևելագիտութեան ինստիտուտ, Իրանագիտական ուսումնասիրութիւններ, Երևան 2023, էջ 196:

41. Իրանի Թարիզ քաղաքում Ազրպէյճանի Հանրապետութեան հիւպատոսութեան դիմաց Դիմադրութեան դրոշներ են տեղադրուել, parstoday.ir, 04.04.2023, <https://parstoday.ir/hy/news/iran-i196584>, հասանելի է 14.12.2023:

42. امام جمعه تبریز: صهیونیست ها در مدیریت افکار عمومی شکست خوردند, Irna.ir, 07.11.2023, <https://www.irna.ir/news/85279354/>, հասանելի է՝ 14.12.2023:

թիւնները: Միա կողմից, Իրանի հետ սրումների փուլերում Ազրայէճանի շահերը հաճունկնում են Իսրայէլի շահերի հետ: Թուրքիայի պէս դաշնակից ունենալուց բացի, Իրանի հետ լարուած յարաբերութիւններում Պաքուն ունենում է նաեւ Իսրայէլի լուրջ աջակցութիւնը:

Երկկողմ նպաստաւոր այս յարաբերութիւնները նաեւ անցել են որոշակի սպառնալից շրջաններ, ինչպիսիք են Թուրքիա-Իսրայէլ եւ Ազրայէճան-Իրան լարուածութիւնները: Ազրայէճան-Իսրայէլ յարաբերութիւնները դիմացել են այս ճնշումներին ու մարտահրաւերներին, ինչն այդ յարաբերութիւնները դարձնում է աւելի կայուն եւ դիմացկուն, սեպ խրելը՝ աւելի դժուար: Եթէ նոր գործօններ չաւելանան, այս յարաբերութիւններին առայժմ ոչինչ չի կարող սպառնալ:

### **Յաւելուած. Ազրայէճանի ռազմական գնումներն Իսրայէլից (SIPRI)**

<b>Անուանումը</b>	<b>Տեսակը</b>	<b>Պատուէրը</b>	<b>Մատակարարումը</b>
EXTRA	Կառավարուող հրթիռ	2005	2008-2009
Lynx	Ինքնագնաց հրթիռային կայան	2005	2006
Aerostar	ԱԹՍ	2007	2008
ATMOS-2000 155mm	Ինքնագնաց հրանօթ	2008	2010
CARDOM 120mm	Ինքնագնաց ականանետ	2008	2010-2011
Hermes-450	ԱԹՍ	2008	2011-2013
Spike-MR/LR	Հակատանկային հրթիռ	2008	2009-2010
Sufa	Զրահափոխադրիչ	2008	2009-2010
Aerostar	ԱԹՍ	2010	2011-2012
Barak-ER	ՀՕՊ հրթիռ	2011	2016
Barak-LRAD	ՀՕՊ հրթիռ	2011	2016
Barak-MX	ՀՕՊ հրթիռային կայան	2011	2016
Heron	ԱԹՍ	2011	2013
Searcher	ԱԹՍ	2011	2013
OPV-62	Ռազմական մոտորանաւակ	2013	2015-2018
LAHAT	Հակատանկային հրթիռ	2013	2015-2016
Shaldag	Ռազմական մոտորանաւակ	2013	2014-2015
Spike-NLOS	Հակատանկային հրթիռ	2013	2014-2018
EL/M-2288 AD-STAR	Ռատար	2014	2016

Harop		Մահապարտ ԱԹՍ	2014	2015-2018
SandCat		Զրահափոխադրիչ	2015	2016-2018
SandCat Spike-LR		Զրահափոխադրիչ՝ հրթիռով	2015	2016
Spike-MR/LR		Հակատանկային հրթիռ	2015	2016
Orbiter-1K		Մահապարտ ԱԹՍ	2016	2016-2020
Orbiter-3		ԱԹՍ	2016	2016-2017
SkyStriker		Մահապարտ ԱԹՍ	2016	2018-2020
Hermes-900		ԱԹՍ	2017	2017-2018
LORA		Հեռահար հրթիռ	2017	2018
LORA		Հեռահար հրթիռային համալիր	2017	2018
SandCat 120mm	SPEAR	Զրահափոխադրիչ՝ ականանետով	2017	2018
Spike-NLOS		Հակատանկային հրթիռ	2019	2019-2020

# ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակ

## «ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ»

ԹԵՄԱ՝ «ԱԶՐՊԷՅՋԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԷԹՆՈՑԻԴՆ  
(ՈՉՆՉԱՅՈՒՄԸ) ԱՐՑԱԽՈՒՄ»

Ուսանող՝ ԱրՊՀ ուսանող

**ՎԱՀԱԳՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ**

Ղեկավար՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային  
ժառանգութեան հարցերով գրասենեակի վարիչ

**Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

Երեւան – 2023



Արցախին գնահատանքի արժանացած ուսանող՝ Վահագն Խաչատրեանի (Արցախ) հե-տազօտութիւնը, նիւթ՝ «Արցախի հոգեւոր ժառանգութեան պաշտպանութեան հիմնախնդիրը», խորհրդատու՝ Հոգեշնորհ Տ. Գարեգին Վարդապետ Համբարձումեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի ղեկավար:

Վահագն Վարուժան Խաչատրեան, մագիստրոս, սովորել է Արցախի պետական համալսարանի Տինասներ եւ կառավարում բաժիններում: Աշխատել է որպէս հաշուապահ՝ Պարկ Հոթել Արցախ հիւրանոցում, լրագրող՝ «Ապարաժ» թերթում: Այժմ աշխատում է «Օփթիմայզ Քոնսալթինգ» ընկերութիւնում՝ որպէս ֆինանսական վերլուծաբան:



## Ներածություն

Մշակութային էթնոցիդը (ոչնչացումը) ներառում է մշակութային տարրերի, այդ թւում լեզուի, կրօնի, պատմութեան, արուեստի, մշակութային կոթողների, այսինքն մարդկանց որոշակի խմբի մշակոյթի մէջ ներառող ասպեկտների (հայեցակէտերու) համակարգուած եւ միտումնաւոր ոչնչացում կամ աղաւաղում: Գաղտնիք չէ, որ 1915թ. Օսմանեան կայսրութեան կողմից կազմակերպուած հայոց ցեղասպանութիւնը աւարտին հասցնելու համար նրանց կողմից ստեղծուած արհեստական պետականութեամբ անկախացած Ազրպէյճանը մշտապէս վարել է հակահայ պետական քաղաքականութիւն, որի հիմքում եղել եւ շարունակուած է մնալ հայկական մշակոյթի եւ ինքնութեան ոչնչացումը, տարածաշրջանից հայկական հետքի մաքրումը: Գիտակցելով, որ ժողովրդի հաւաքական կերպարի եւ յիշողութեան պահպանման համատեքստում իր ուրոյն դերակատարութիւնը ունի նիւթական (պատմական կոթողներ, դպրոցներ, թանգարաններ) եւ ոչ նիւթական (լեզու, գրականութիւն, սովորոյթներ, աւանդական արհեստներ) մշակութային ժառանգութեան պահպանումը, Ազրպէյճանը տարիներ ի վեր փորձել է դրանք խլել, խեղաթիւրել ու վերացնել, այդպիսով ոչնչացնելով նաեւ Արցախի ժողովրդի էթնոմշակութային (ազգային-մշակութային) ինքնութիւնը: Սովետական ժամանակաշրջանում պարբերաբար կոտորածներ կազմակերպելով, եկեղեցիներն ու պատմամշակութային կոթողները ւերելով, նպաստելով ԼՂԻՄ-ից հայ բնակչութեան արտագաղթին, իսկ այնուհետեւ արցախեան բոլոր պատերազմներում տեղահանելով, կոտորելով տեղի հայ բնակչութեանը եւ ւերելով հայկական բնակավայրերը, Ազրպէյճանը նպատակ էր հետապնդում Արցախեան լեռնաշխարհից մաքրել հայկական հետքը ու ոչնչացնել տարածաշրջանում հազարամեակներով ապրող Արցախի ժողովրդին՝ որպէս իր էթնոտեսակով (ազգային-տեսակով) եւ բնաւորութեամբ տարբերող ժողովրդի: Այս քաղաքականութիւնը սրուեց յատկապէս 2020թ. 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրան յաջորդած իրադարձութիւններից յետոյ:

Պատերազմի ընթացքում, Ազրպէյճանը հետապնդելով Արցախում էթնիկ (ազգային) զտումներ իրականացնելու քաղաքականութիւն, բռնի տեղահանել է Արցախի բռնազաւթուած շրջաններում ապրող ժողովրդին, միտումնաւոր հրետակոծել, պայթեցրել ու ւերել եկեղեցիները (այդ թւում ՀԱՍԵ Արցախի թեմի առաջնորդարան Շուշիի Ղազանչեցոց եւ Կանաչ ժամ եկեղեցիները): Բռնագրաւուած տարածքներում 3 տարի շարունակ Ազրպէյճանը հողին է հաւասարեցրել մի շարք գերեզմանատներ, խաչքարեր, յուշարձաններ, աղաւաղել հայկական եկեղեցիների ճարտարապետական տեսքը՝ վերանորոգելու քօղի տակ դրանք միջազգային հանրութեանը ներկայացնելով որպէս աղուանական կամ ուղիական: Այս ամէնն իրականացուել է միջազգային հանրութեան եւ իրաւապաշտպան կազմակերպութիւնների աչքի առաջ եւ նրանց համաձայնութեամբ, անտե-

սելով նաև Հաագայի եւ Ժնեւի, ինչպէս նաև ԵՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաները (պայմանագրերը)՝ պատերազմների ժամանակ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան մասին:

Ազրայէճանի կողմից սկսուած այդ գործընթացն ամբողջացաւ 2023թ. սեպտեմբերեան պատերազմից յետոյ, երբ կեանքի կոչուեց Ազրայէճանի կողմից Արցախում էթնիկ զտումների եւ ցեղասպանութեան ծրագիրը, եւ Արցախն ամբողջութեամբ հայաթափուեց:

Արցախն ամբողջութեամբ հայաթափուեց, Արցախի ողջ մշակութային ժառանգութիւնը վտանգուեց բարբարոսների տիրապետութեան տակ, իսկ ոչ մշակութային ժառանգութիւնը յայտնուեց կորսման եզրին: Սոյն յօդուածում փորձել ենք անելի մանրամասն եւ փաստացի ներկայացնել Արցախում հայկական մշակութային հազարամեայ հետքը, Ազրայէճանի կողմից իրականացուած եւ շարունակուող մշակութային ցեղասպանութիւնը՝ միջազգային հանրութեան թողտուութեամբ: Ուսումնասիրութեան էլ անելի արդիական է դարձել այս օրերին, երբ համայն հայութեան համար գերնպատակ պէտք է լինի Արցախի հայկական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնն ու պահպանումը, որն Արցախի ամբողջական հայաթափումից յետոյ Արցախի հայկականութեան գլխաւոր վկան է դարձել:



### **Արցախի պատմութիւնն ու մշակութային հետքերը**

Ազգային ինքնութեան եւ ազգի հաւաքական յիշողութեան ձեւաւորման աղբիւրը մշակութային ժառանգութիւնն է ամրապնդում: Հայ ժողովրդի հարուստ մշակութային ժառանգութիւնը, որը դարեր ի վեր սերունդէ սերունդ պահպանուելով հասցուել է մեր օրեր, հենց մեր ժողովրդի ինքնութեան լաւագոյն վկան է:

Հայկական լեռնաշխարհի Արցախեան հատուածում հնագիտական հետազոտութիւնների համաձայն ինն ժամանակներից սկսած ապրել եւ արարել է մարդը՝ ստեղծելով հարուստ մշակութային ժառանգութիւն: Հայ ժողովրդի ներկայութիւնն Արցախում շարունակուել է մինչեւ 2023թ. սեպտեմբերեան ցաւալի իրադարձութիւնները: Այն որ, Ար-

ցախում հնագոյն ժամանակներից ի վեր ապրում են հայեր, փաստում են Արցախի տարածքում առկայ բազմաթիւ պատմամշակութային յուշարձանները եւ պատմական իրադարձութիւնները: Արցախում մնացել են հնադարեան այլ քարանձաւներ, որոնք առ այսօր ուսումնասիրուած չեն:

Արցախ աշխարհի մասին առաջին գրաւոր տեղեկութիւնները հաղորդում է Մովսէս Կաղանկատուացին, որի «Պատմութիւն Աղուանից աշխարհի»<sup>\*</sup> երկը գլխաւոր սկզբնաղբիւրն է, իսկ նրա հեղինակը՝ Աղուանից երկրի առաջին պատմիչը:

Արցախը պատմական Հայաստանի 15 նահանգներից մէկն է եւ տեղակայուած է Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւելեան մասում, որը հիւսիսային սահմանը համարում է Կուր գետը, հարաւայինը՝ Արաքս գետը:<sup>1</sup> Արցախի արեւմտեան սահմանները հասնում են մինչեւ Սեւանայ լճի արեւելեան ափեր, արեւելքում՝ Մուխանքի դաշտաբերան<sup>2</sup>:

Հնագիտական հետազոտութիւնների արդիւնքում Արցախի Քոասնի եւ Աստղաշէն համայնքների տարածքներում յայտնաբերուել են բրածոյ կենդանիների եւ ծովային աստղերի մնացորդներ: Ազդիսի քարանձաւում գտնուած նմուշները մասնագէտների կարծիքով վկայում են վաղ պալեոլիթում (հնագոյն քարեդարեան ժամանակաշրջան) մարդու առաջացման մասին: Քարեդարեան մարդու գործունէութեան հետքեր յայտնաբերուել են նաեւ Թաղլար, Քարին տակ գիւղերի տարածքում: Արցախի հնավայրերը հարուստ են դամբարանաբլուրներով, մեգալիթեան (մեծաքար) յուշարձաններով, որոնք պատկանում են նեոլիթի (Neolithic կամ քարեդարի վերջին ժամանակաշրջանի), էնեոլիթի (Eneolithic կամ պղնձաքարային անցումային դարաշրջանի) , պրոնզէ եւ վաղ երկաթէ դարաշրջաններին: Ք.ա. III-II հազարամեակներին պատկանող բերդերի մնացորդներ են յայտնաբերուել Ակնայի (Աղտամ) մօտակայքում եւ Վարանդայի (Ֆիզուլի) շրջանում<sup>3</sup>:

Արցախի տարածքում Արցախի մասին յիշատակումներ առկայ են դեռեւս հին հայկական Ուրարտու պետութեան արձանագրութիւններում (մ.թ.ա. 8-5դդ.): Այդ ժամանակներում Արցախը յիշատակում է Ուրտեխինի անուամբ:

Ք.ա. I դարում Արցախ նահանգում՝ Շահբուլաղ ամրոցից հիւսիս-արեւելք, Վանքասարի ստորոտում, Թարնոյուտ (Թառնագիւտ) գիւղի կամ Գիավուրդալա քաղաքատեղիի տարածքում է Տիգրան Մեծի կողմից հիմնուել իր անունով կառուցած 4 Տիգրանակերտ քաղաքներից մէկը:

---

\* Ուտիք նահանգի հետ միասին Արցախը կոչուել է «Աղուանք», «Արեւելից կողմանք», «Խորին աշխարհն հայոց»:

1. «Արցախ», Մակար եպս. Բարխուդարեանց, 1895թ., 474 էջ:

2. «Արցախի Պատմութիւն: Հնադարից մինչեւ մեր օրեր», Վահրամ Բալայեան, Երեւան 2022թ., 407 էջ:

3. «Արցախի Պատմութիւն

Ինչպես հայ մեծ պատմիչ Մովսես Խորենացին է նշել, Մեսրոպ Մաշտոցը հայերեն այբուբենը ստեղծելուց յետոյ բոլոր գաւառներում դպրոցներ է հիմնում, այդ թւում նաեւ Արցախում: Ըստ պատմաբան Վ. Բալայեանի՝ Արցախ տեղափոխուելուց յետոյ Մաշտոցը Վ դարի սկզբներին Հաբանդ գաւառի Ամարաս Վանքում բացել է Արցախի առաջին դըպրոցը, որն իր ուրոյն նշանակութիւնն է ունեցել այդ տարածաշրջանում գրերի գիտի տարածման համար: Հայ պատմիչների վկայութեան համաձայն վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսաւորիչը, որի կառուցումը աւարտին է հասցրել իր թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը: Նրա ժամանակ էլ վանքը դառնում է եպիսկոպոսանիստ: Երբ 338թ. Գրիգորիսը քարոզչութեան ժամանակ նահատակուում է Դերբենդում, նրա աշակերտները եպիսկոպոսի մարմինը ամփոփում են Ամարասում: Վ դ. Վաչական Բարեպաշտը Գրիգորիսի գերեզմանի վրայ կառուցում է ստորգետնեայ մատուռ-դամբարան, որը գտնուում է եկեղեցու բեմի տակ: Ամարասի ներկայիս եռանաւ պազիլիք յօրինուածքով եկեղեցին հիմնովին վերաշինուել է 1858թ. շուշեցիների միջոցներով: Յատակագծային ու ծաւալատարածական յօրինուածքով եռանաւ պազիլիք եկեղեցին մեզ յուշում է հնամենի լինելու մասին: Մ. Հասրաթեանի կարծիքով եկեղեցին հիմնուած է եղել հեթանոսական տաճարի տեղում:

IV-VII դդ. կառոյցներ են համարում Գլխօ կամ Հոռեկա վանքը, Եղիշէ Առաքեալի վանքը, Վաչական Բարեպաշտի, Օխտը Դոնանիի, Խոժոռաբերդի, Խտուդրենք տաճարները, Մոխրենիսի, Սղնախի, Փափրեվենդի, Թազաքեանդի (Աղջաբեդու շրջան) եկեղեցիները<sup>4</sup>:

Արաբական արշաւանքների ժամանակաշրջանում մեծապէս տուժում է հայ ժողովրդի ոչ միայն նիւթական, այլեւ հոգեւոր մշակոյթը: 852թ. Արաբական բանակը թուրք զօրավար Բուղա ալ Քապիր աշ-Շարապիի գլխաւորութեամբ մտնում է Հայաստան: Արաբները, գրաւելով Վասպուրականը, Սինիքը, հասնում են երկրի հիւսիս-արեւելք՝ Արցախ, որտեղ նրանք անյաջողութեան են մատնուում: Նրանք չեն կարողանում գրաւել ներկայիս Ազրպէյճանի կողմից օկուպացուած (գրաւուած) Հադրութի շրջանում գրտնրող Գտիչ ամրոցը, որն արաբ մատենագիր Իպն Մասկաւան յիշատակում է Կպիշ անուանումով, իսկ Տապարին՝ Կազիշ: 10-րդ դարում Քթիշի բերդի վրայ մեծ բանակով յարձակուել է նաեւ արաբ Աշին ոստիկանը, սակայն պարտուելով յետ է քաշուել Փայտակարան: Յետագայում Քթիշը եղել է Դիզակի մելիքութեան գլխաւոր բերդը եւ կոչուել Տող (Դող):<sup>5</sup> Այստեղ է գտնուում նաեւ Գտչավանքը, որը որպէս եպիսկոպոսանիստ յիշատակուում է վաղ միջնադարից:

4. «Արցախի Պատմութիւն: Հնադարից մինչեւ մեր օրեր», Վահրամ Բալայեան, Երեւան 2022թ., 407 էջ,

5. Քթիշ (բերդ) - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

Ըստ Մովսէս Կաղանկատուացու՝ Պարտալի եկեղեցական ժողովին մասնակցել է նաեւ Գոշավանքի ներկայացուցիչը: Վանքի պատերին պահպանուել էին 13-14-րդ դարերի արժէքաւոր արձանագրութիւններ, համաձայն որոնց վանքը կառուցել են Ամարաս վանքից այդտեղ տեղափոխուած Տէր Սարգիս եւ Վրթանէս եպիսկոպոսները: Շինարարութիւնը սկսուել է 1241թ. եւ աւարտուել 1248թ-ին:<sup>6</sup>

IX-XIII դարերում Արցախում ստեղծուել են ճարտարապետական մեծարժէք շինութիւններ. Վարանդայում՝ Կարմիր կոչուող (1221թ.), Գոշավանքի (1191- 1241թթ.), Դադի վանքի Կաթողիկէն (1214թ.), Գանձասարի Յովհաննէս Մկրտիչ (1216-1238թթ.) եկեղեցիները, որոնցից իւրաքանչիւրը ճարտարապետական իւրօրինակ հրաշագործութիւն է:

Գանձասարը միջնադարեան հայ ճարտարապետութեան գլուխ գործոցներից է: Գտնւում է Մարտակերտի շրջանի Վանք գիւղից հարաւ-արեւմուտք, անտառապատ գեղատեսիլ սարի գագաթին: Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գաւթից, միաբանական խցերից, տնտեսական շինութիւններից եւ երկյարկանի դպրոցական մի շէնքից: Այդ ամէնը շրջապատուած է պարիսպներով: Մատենագիտական տեղեկութիւնները վկայում են, որ IX-Xդդ. այստեղ եկեղեցի է եղել: Աւանդութիւնը պատմում է, որ Խաչենի գահերէց իշխան Հասան Զալալը Յովհաննէս Մկրտչի գլուխ-նշխարը ամփոփում է Գանձասարում՝ իրենց տոհմական գերեզմանատանը, որի վրայ էլ 1216-1238թթ. Կաթողիկէ եկեղեցի է կառուցում եւ այն կոչում սրբի անունով: Դարեր շարունակ տաճարը այդպէս էլ մնում է մի անգերազանցելի հրաշագործութիւն: Բիւզանդական ճարտարապետութեան պրոֆեսոր Շ. Դիլը համաշխարհային մշակոյթի գանձարան մտած հինգ շինութիւններից Աղթամարի սուրբ Խաչ եկեղեցուց, Էջմիածնի Հռիփսիմէ տաճարից յետոյ երրորդ տեղը վերապահել է Գանձասարին: Իսկ ռուս գիտնական Ա. Յակոբսոնը այն համարում է միջնադարեան ճարտարապետութեան «հանրագիտարան», «մարգարիտ»: Հմուտ ձեռագրագէտ Օ. Եկանեանը դրան աւելացնելով գրում է. «Որպէս կաթողիկոսական նստավայր եւ գրչութեան արուեստի կեդրոն, Գանձասարի վանքը ժամանակին ունեցել է նաեւ իր գրչատունն ու գրչակիր մատենաների հաւաքածուն»:

Իր նշանակութեամբ Արցախի երկրորդ նշանաւոր վանական համալիրը Դադի կամ Խութավանքն է: Հաթերքից վեր, Տրտու-Թառթառ գետի ձախ ափին, մի բլրակի կամ խութի (որից էլ ստացել է Խութա վանք) վրայ փռուած է վանական համալիրը: Աւանդութեան համաձայն, այն միաժամանակ Դադիվանք է կոչուել Թադէոս առաքեալի եօթանասուն աշակերտներից մէկի՝ Դադիի անունից, որի շիրիմի վրայ առաջին դարում եկեղեցի է շինուել: Վանքը, լինելով առաջնորդական կեդրոն, դրսեկ զաւթիչների համար աչքի փուշ է եղել եւ բազմաթիւ անգամ աւերուել է նրանց կողմից: Սակայն հայութեան հոգեւոր այս կեդրոնը ամէն անգամ էլ ժողովրդի ջանքերով նորից վեր է յանել: Յայսօր

---

6. Գոշավանք - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

պահպանուել է Դադի վանքի զանազան նշանակութեան 30 կառոյցներ: Համալիրի զարդն է համարում կաթողիկէ եկեղեցին: Այն հիմնադրուել է 1214թ. Հաթերքի իշխան Վախտանգի տիկնոջ՝ Արզու-Խաթունի ջանքերով: Վանքի շրջակայքում գտնուում են 5 մատուռներ, երկուսը կանգուն, իսկ երեքը՝ կիսաւեր:<sup>7</sup>

## Արցախը Աղուանից կաթողիկոսութեան կազմում

Ինչպէս վերը նշեցինք, Ազրայէճանը ներկայումս փորձում է Արցախի բնագաւառում տարածքներում գտնուող հայկական եկեղեցիները ներկայացնել որպէս աղուանական՝ ժխտելով դրա հայկականութիւնը, սակայն պատմական փաստերը վկայում են, որ ՀԱՍԵ կազմաւորման պահից ի վեր նրա անբաժան մաս է կազմել նաեւ Աղուանից հոգեւոր առաջնորդութիւնը, որի կազմում ժամանակին եղել է նաեւ Արցախը: Աղուանից կաթողիկոսութեան ժառանգութիւններից է Դադիվանքը:

Աղուանից առաջնորդարանի ստեղծումը կապուած է Արցախում եւ Ուտիքում քրիստոնէութեան տարածման հետ, որը տարածել են Թադէոսի 70 աշակերտներից Եղիշան եւ Դադին: Ըստ պատմաբան Մելանիա Պալայեանի՝ Քրիստոնէական եկեղեցու կազմաւորման ընթացքում ստեղծուել են նաեւ առանձին եպիսկոպոսութիւններ: Ըստ Բարգէն Յարութիւնեանի՝ Գրիգոր Լուսաւորիչը հիմնել է 36 եպիսկոպոսութիւններ, որոնցից էր նաեւ Ամարասի եպիսկոպոսութիւնը: Առաջին եպիսկոպոս է կարգուել Գ. Լուսաւորչի թոռ Գրիգորիսը: Վերջինս քրիստոնէութիւն է քարոզել, ինչպէս Հայոց արեւելից կողմում, այնպէս էլ բուն Աղուանքում, որտեղ ըստ մեզ հասած տուեալների 11 աղուանական ցեղեր եւս դարձել են հայ առաքելական եկեղեցու հետետորդներ, սակայն արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում նրանց մի մասն ընդունել է մահմետականութիւն եւ սկսել հանդէս գալ «լեզգիներ» անուամբ, իսկ ՀԱՍԵ հետետորդները՝ «ուդիներ»:<sup>8</sup>

Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգները պատմութեան մէջ յիշատակուում են նաեւ որպէս «Հայոց Արեւելից կողմեր», ինչը պայմանաւորուած է Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ Պարսկաստանի նոր վարչատարածքային բաժանմամբ: 462թ. նահանգները յայտնուել են Աղուանքի մարզպանութեան մէջ եւ կոչուել Աղուանք կամ Հայ Աղուանք: Ըստ Մակար Բարխուդարեանցի՝ Աղուանից Արշակունեաց թագաւորութեան ստեղծումից յետոյ առաջանում է սահմանների հակասութիւն Հայոց եւ Աղուանից թագաւորութիւնների միջեւ, իսկ 5-րդ դարում Արցախն ամբողջութեամբ ենթարկուում էր

7. «Արցախի Պատմութիւն: Հնադարից մինչեւ մեր օրեր», Վահրամ Բալայեան, Երեւան 2022թ., 407 էջ:

8. «Աղուանից կաթողիկոսութեան պատկանելիութիւնը», Մելանիա Բալայեանի հարցազրոյցը «Ապառաժ» թերթին, 2023 թ.:

Աղուանից թագաւորութեանը:<sup>9</sup> Արդիւնքում պատմութեան մէջ ի յայտ է եկել «Հայկական Աղուանք» հասկացութիւնը, որը յետագայում օգտագործուել է հոգեւոր առաջնորդութեան համար: Քրիստոնէութեան արմատաւորման արդիւնքում եպիսկոպոսական կեդրոններ են ստեղծուել բուն Աղուանքում: Աղուանից կաթողիկոսութեան հիմնումը պայմանաւորուած է եղել քաղաքական եւ դաւանաբանական տարբեր ազդեցութիւններով: Այն ստեղծուել է բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց եպիսկոպոսութիւնների միաւորման արդիւնքում, 552թ-ին Պարտաւում հայոց կաթողիկոսի նախաձեռնութեամբ գումարուած ժողովի որոշմամբ: Աղուանից կաթողիկոսութեան առաջին կաթողիկոս է ընտրուել Աբասը, իսկ առաջնորդարան է դարձել Մեծ Հայքի Ուտիք նահանգի Պարտաւ քաղաքը, որը սակայն տարբեր պատճառներով մի քանի անգամ տեղափոխուել է նախ Արցախի Ս. Յակոբավանք, ապա՝ Գանձասար: Այն, որ նորաստեղծ առաջնորդութեան պաշտօնական լեզուն հայերէնն էր, վկայում են Աղուանից հոգեւոր կեդրոններում ստեղծուած բազմաթիւ ձեռագրերն ու եկեղեցիներում արուած վիմագրերը:

15-րդ դարից սկսած Աղուանից կաթողիկոսութիւնը բաժանուում է երկու ճիւղերի՝ Ճալէթի եւ Գանձասարի: Ճալէթը, որպէս կաթողիկոսանիստ, գործեց 15-16-րդ դարերում, իսկ Գանձասարի աթոռը առաւել հիմնաւոր ու կենսունակ էր եւ գործեց մինչեւ 1815թ.: 1813թ. Գիւլիստանի Պայմանագրով Ղարաբաղի՝ ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ յայտնուելուց յետոյ Հայ Աղուանից եկեղեցու վերջին կաթողիկոս Սարգիս Հասան Ջալալեանցը 1815 թ. յայտարարում է Արցախի արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ: Աղուանից կաթողիկոսութեանը ենթակայ թեմերը միաւորում եւ կազմում են մետրոպոլիտութիւն՝ ի հոգեւորս ենթակայ մնալով Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը: 1836թ. մարտի 11-ի՝ Ռուսական կայսրութեան կողմից հաստատուած եկեղեցական նոր կանոնադրութեամբ Ղարաբաղի թեմակալ կեդրոնը տեղափոխուում է Շուշի:

1921թ. Արցախի՝ Ազրպէյճանին բռնակցումից յետոյ, 1933թ-ին Ազրպէյճանական իշխանութիւնները փակում են Արցախի հայոց թեմը, որը վերաբացում է 1989թ-ին՝ Արցախեան շարժման արդիւնքում: Թեմը վերաբացուել է երջանկայիշատակ Վազգէն Ա. կաթողիկոսի հայրապետական կոնդակով: Թեմակալ առաջնորդարանը սկզբում հաստատուեց Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում: 1992 թ. Շուշիի ազատագրումից յետոյ այն տեղափոխուեց ու վերստին վերահաստատուեց Շուշիում՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ Մայր տաճարում:<sup>10</sup>

---

9. «Արցախ», Մակար եպս. Բարխուդարեանց, Բաքու 1895թ., 474 էջ:

10. «Աղուանից կաթողիկոսութեան պատկանելիութիւնը», Մելանիա Բալայեանի հարցազրոյցը «Ապառաժ» թերթին, 2023թ.:



## Ազրայէճանի «Սպիտակ եղեռն»-ի քաղաքականութիւնը խորհրդային ժամանակաշրջանում եւ դրանից յետոյ

ԼՂԻՄ կազմաւորման հենց սկզբից Ազրայէճանի ղեկավարութիւնը սկսում է կոպտօրէն ոտնահարել ԼՂԻՄ հայ բնակչութեան իրաւունքները: Դա արտայայտուել է հայոց լեզուն եւ մշակոյթը սահմանափակելու, հայկական յուշարձանները եւ մշակութային արժէքները ոչնչացնելու եւ դրանք իւրացնելու փորձերով: Նպատակը՝ ԼՂ-ի լիովին կլանումն էր՝ արցախահայութեանը իր հոգեւոր-մշակութային արմատներից կտրելու ճանապարհով: Հենց այդ ժամանակներից սկսած, Ազրայէճանը առաջ է քաշում պատմական փաստարկներից զուրկ եւ յօրինուած աղուանական տեսութիւնը, որով արցախահայութեանը համարում են բռնութեամբ հայացուած աղուաններ, որոնց ազրայէճանցիները համարում են իրենց նախնիները, իսկ նրանց կողմից ստեղծուած ժառանգութիւնը՝ աղուանական, որը պատկանում է ազրայէճանի ժողովրդին: 1988թ. ապրիլի 27-ին Ադր. ԽՍՀ նախարարների խորհուրդն իր հ. 145 որոշմամբ աղուանական-ազրայէճանական է յայտարարում Արցախում, Նախիջեւանում եւ Ուտիքում գտնուող բոլոր յուշարձաններն ու կոթողները: Նոյնիսկ այս անհեթեթ տեսութիւնն առաջ տանելու պարագայում, ազրայէճանցիները հայկական մշակութային ժառանգութեան մէջ վտանգ տեսնելով, հիմնովին սկսում են աւերել այդ տարածքներում գտնուող հայկական եկեղեցիներն ու յուշարձանները: Այդ ամէնի նպատակը պատմութեան խեղաթիւրումն էր, պատմական կեղծ փաստերի ստեղծումը, որը կ'արդարացնէր Արցախի բռնակցումը Ազրայէճանին: Այս քաղաքականութեան արդիւնքում Նախիջեւանում ոչնչացուել է VII-XIX- դդ. 27 000 հայկական յուշարձան: 2005թ. ազրայէճանական բանակի կողմից ոչնչացուել է Նախիջեւանի տարածքում Ջուղա քաղաքի գերեզմանոցում գտնուող 2000 հայկական խաչքար: Տարածքում գտնուող 10 000 խաչքարերից միայն մէկն է յաջողուել փրկել. այն պահում է ՄԱԿ-ի գրասենեակում:

1921թ-ից ի վեր մինչ Արցախի ազատագրումն, ըստ պատմաբան Հրաչիկ Յարութիւնեանի, աւերուել եւ ամբողջովին ոչնչացուել է 167 եկեղեցի, 8 վանական համալիր, 123 հայկական գերեզմանոց, 2500 խաչքար, 10000-ից աւելի տապանաքար եւ 47 բնակավայր: Մասնաւորապէս 1937թ. աւերուել է 7-րդ դարի Դասնօ Կարմիր եղցի վանքը, 1970թ. աւերուել է Խաչբուլաղ գիւղի եկեղեցին, իսկ Ամրավար գիւղի գերեզմանոցի տապանաքարերը լցուել են գետը, 1983թ. Գետաբեկի շրջանում ամբողջութեամբ աւերուել է 9-րդ դարին պատկանող Յունիսավանք եկեղեցու գմէթը, 1987թ. Բանանց գիւղի եկեղեցին քանդուել եւ լցուել է ձորը: ԽՍՀՄ մարշալներ Յովհաննէս Բաղրամեանի եւ Համազասպ Բաբաջանեանի ծննդավայր Չարդախլու գիւղի բնակչութեանը 1988թ. բռնի տեղահանել են, Բաղրամեանի յուշարձանը պայթեցրել, իսկ մարշալների թանգարանները վերածել թէյարանների: Արցախեան I պատերազմի տարիներին Շուշիի Ղազան-

չեցոց եկեղեցին ազրայեճանցիները վերածել էին զինամթերքի պահեստի, որտեղից հրետակոծում էին Ստեփանակերտը: Պատերազմի ընթացքում ազրայեճանական զինուժը նպատակաուղղուած հարուածներ է հասցրել նաեւ Գանձասարի վանքին, որի պատերի մէջ կարելի էր տեսնել հրթիռների մնացորդներ:

Գանձակում գտնուող 6 հայկական եկեղեցիներից 2-ն Ազրայեճանը հիմնովին ւերել է, միւսները վերածել այլ նշանակութեան օբյեկտների (շինութիւնների)՝ մաքրելով դրանցից հայկական ճարտարապետութեան հետքերը: Ազրայեճանը 2007թ. ոչնչացրել է նաեւ Բաքուի ռուս-հայկական «Մոնտինօ» գերեզմանատունը:<sup>11</sup>

## **Ազրայեճանի մշակութային էթնոցիդը 44-օրեայ պատերազմից յետոյ Արցախի գրաւեալ տարածքներում**

Հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ վանդալիզմը (ոչնչացումը) Ազրայեճանում վեր է ածուել մոլուցքի: Ինչպէս տարիներ շարունակ, այնպէս էլ հիմա Ազրայեճանը շարունակում է պղծել, անուանափոխել, ւերել, ոչնչացնել, վերափոխել ու մաքրել հայկական ճարտարապետական հետքերը հայկական մշակութային օբյեկտներից (յուշարձաններից): Ազրայեճանը շարունակում է միջազգային հանրութեանը հրամցնել հայկական մշակութային ժառանգութեան «աղուանական», «ուղիական», «ալբանական» եւ «ուղղափառ» լինելու կեղծ թեզերը:

Ինչպէս Արցախեան I պատերազմում, այնպէս էլ 44-օրեայ պատերազմում ազրայեճանական զինուժի թիրախում էին յայտնուում նաեւ հայկական եկեղեցիներն ու յուշարձանները:

Արցախի մշակութային կեդրոն Շուշիում ռազմական գործողութիւնների ընթացքում մեծ վնասներ է կրել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Հոկտեմբերի 8-ին ազրայեճանական զինուժը երկու անգամ հրթիռակոծել էր եկեղեցին: Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը սա համարել էր հնարաւոր պատերազմական յանցագործութիւն: Շուշիի գրաւումից յետոյ եկեղեցին նաեւ պղծուել է: Ազրայեճանցի զինուորականները գրառումներ էին կատարել եկեղեցու պատերի վրայ: Պատերազմից ամիսներ անց յայտնի դարձաւ, որ ազրայեճանցիները «վերականգնում են» եկեղեցին, իսկ եկեղեցու գմբէթը հեռացուել է: Ազրայեճանական կողմը յայտնում է, որ վերանորոգումը վերադարձնելու է եկեղեցուն «սկզբնական» տեսքը՝ նկատի ունենալով 1920 թ. յետոյ Ղազանչեցոցի վիճակը, երբ գմբէթը հեռացուած էր:

---

11. «Ազրայեճանը ոչնչացնում է Հայկական մշակութային ժառանգութիւնը», «Ազատ Արցախ» թերթ, 2016թ.:



Սակայն այդ պնդումը կեղծ է, քանի որ մինչև 1920 թ. եկեղեցին ունեցել է գմբեթ: Ուշագրաւ է, որ Շուշի ժամանող միջազգային բոլոր պատուիրակութիւններին ի ցոյց են դնում Ղազանչեցոցի «վերականգնումը» որպէս կրօնական համերաշխութեան նշան: Ազրայեճանական մետիահարթակներում Ղազանչեցոցը ներկայացում է կամ որպէս ուղղափառ եկեղեցի, կամ որպէս ուղիական, որը հայացրել են հայերը՝ «քաղաքի գրաւումից յետոյ»:<sup>12</sup>

*Ղազանչեցոց եկեղեցին կառուցուել է 1868-1887 թթ.: Եկեղեցին զգալի փոժել էր 1920 թ. հայկական ջարդերի ժամանակ, իսկ գմբեթը աւերուել էր: Խորհրդային փարիներին այն օգտագործում էր որպէս պահեստ: Երբ հայկական ուժերը վերահսկողութիւն հաստատեցին Շուշիում 1992 թ., Ղազանչեցոց եկեղեցին վերանորոգուեց եւ վերաբացուեց:*

2020 թ. նոյեմբերին FIP.am-ը պարզել էր<sup>13</sup>, որ Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին մասամբ աւերուած է: 2021 թ. Google Earth-ի արբանեակային լուսանկարները ցոյց էին տուել, որ եկեղեցու վերին հատուածն ամբողջովին հարթեցուած է՝ թէ՛ զանգակատունը, թէ՛ գմբեթը վերացուած են: 2021 թ. յուլիսին Շուշիում ԲԵԿ-ի պատրաստած ռեպորտաժում երեւում է եկեղեցու քանդուած գմբեթը:

*Կանաչ ժամ՝ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին աւելի հին է, քան Ղազանչեցոց եկեղեցին: Այն կառուցուել է 1818 թուականին:*

12. «Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ տաճարի ազրայեճանական «վերականգնման» շուրջ», monumentwatch.org:

13. Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին մասամբ աւերուած է - fip.am.

2021 թ. մարտին BBC-ին յայտնեց<sup>14</sup>, որ ազրայեցիները հիմնադրատակ վերացրել են Ջեբրայիլ (Մեխակաուան) բնակավայրում Զորաւոր Սբ. Աստուածածին քրիստոնէական եկեղեցին, իսկ մինչ այդ տարածուած նիւթերից երեւում էր, որ ազրայեցիները հեռացրել են եկեղեցու խաչը եւ մահմետական աղօթք հնչեցրել:

*Եկեղեցին կառուցուել էր 2017 թուականին:*

Հայկական եկեղեցիների աղուանաազրայեցիական ներկայացման քաղաքականութեան շրջանակում, 2021թ. մայիսին Ազրայեցիների նախագահ Իլիամ Ալիեւը Հադրութի շրջանի Ծակուռի գիւղում յայտարարեց, թէ տեղի Սուրբ Աստուածածին եկեղեցին աղուանական է. «Սա մեր հինաւորաց պատմական յուշարձանն է, մեր եղբայր ուղիների տաճարը... նրանք կը գան այստեղ: Ինչպէս հայերը պղծեցին մեր մզկիթները, այնպէս էլ նրանք պղծեցին աղուանական հին տաճարը, բայց մենք այն կը վերականգնենք: Բոլոր այս կեղծուած արձանագրութիւնները (մատուցուող ցոյց է տալիս արեւմտեան բարաւորի շինարարական արձանագրութիւնը եւ խաչը) վերագրուել են ւաւերի ուշ»: Ալիեւի խօսքերից պարզ է դառնում, որ վերանորոգումից յետոյ հայկական արձանագրութիւնները ջրնջուելու են:

*Ծակուռու Սուրբ Աստուածածին եկեղեցին կառուցուել է 12-րդ դարում եւ նախկին Ծաղկեվանք վանական համալիրի մաս է կազմել:*

Caucasus Heritage Watch-ը յայտնաբերել էր, որ ապրիլից յուլիսն ընկած ժամանակահատուածում ազրայեցիները քանդել են Հադրութի շրջանի Մեծ Թաղերի գիւղի կամուրջը՝ ճանապարհաշինարարական աշխատանքների պատճառով:

*Մակուն կոչուող կամուրջը կառուցուել էր 1890 թուականին:*

Ոչնչացուել է նաեւ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գիւղի գերեզմանոցը, որը հիմնուել էր 19-րդ դարի սկզբին:

Դիզափայտ լեռը, որի գագաթին գտնուում է Կատարոյի վանքը, 44-օրեայ պատերազմի արդիւնքում մնում էր հայկական ուժերի վերահսկողութեան ներքոյ: Սակայն դեկտեմբերի 12-ին ազրայեցիական զօրքերը, խախտելով նոյեմբերի 9-ի պայմանաւորուածութիւնը, յարձակում սկսեցին Հին Թաղեր եւ Խճաբերդ գիւղերի ուղղութեամբ: Գործողութեան հետեւանքով գիւղերը, ինչպէս նաեւ Դիզափայտը, օկուպացուեցին (գրաւուեցան): 2021 թ. մարտի 29-ին տեղադրուել է տեսանիւթ, որտեղ երեւում է, որ եկեղեցին օգտագործուում է ռազմական նպատակով. ազրայեցի զինուորներն ապրում են հենց եկեղեցու ներսում: Նկարահանման պահին զինուորները սնում են, կադրերում երեւում է անկողին եւ այլ նմանատիպ պարագաներ:

*Սրբավայրի վաղ կառոյցները պարբերաբար ւաւերուել են, ներկայ եկեղեցին կառուցուել է 1870 թուականին:*

---

14. Nagorno-Karabakh: The mystery of the missing church - BBC News.

Պատերազմի ասարտից յետոյ ազրպէյճանական ուժերը ոչնչացրել են մի քանի գերեզմանոցներ, որոնք ունէին հարիրամեակների պատմութիւն:

2020 թ. հոկտեմբերի 27-ին ազրպէյճանական զինուժը գրաւել է Ասկերանի շրջանի Աւետարանոց գիւղը: Այն Արցախի հին բնակավայրերից է եւ հարուստ է յուշարձաններով: Տարբեր տուեալներով՝ բնակավայրում 53-83 յուշարձան է եղել:<sup>15</sup>

Յունիսին պարզուել էր, որ ազրպէյճանցիները քանդել են գիւղի գերեզմանոցը: Արցախի քննչական կոմիտէն վարոյթ է ընդունել Աւետարանոցում ազրպէյճանցիների կողմից գերեզմանները ոչնչացնելու դէպքի առթիւ հարուցուած գործը:

Ասկերանի շրջանի Սղնախ գիւղը ազրպէյճանական զինուժի վերահսկողութեան տակ է անցել 2020 թ. հոկտեմբերի 28-ին: Մայիսին յայտնի դարձաւ, որ ազրպէյճանցիները հողին են հաւասարեցրել <sup>16</sup> գիւղի գերեզմանոցը, որը թուագրում 18-րդ դարից:

Ազրպէյճանի կողմից օկուպացուած տարածքներում ազրպէյճանցիները վանդալիզմի են ենթարկում յատկապէս արցախեան պատերազմին նուիրուած յուշակոթողներն ու տապանաքարերը: Շուշիում քանդուել է հայոց ցեղասպանութեան զոհերին նուիրուած յուշակոթողը:

ԱՀ տարածքում գտնուող յուշարձանների պաշտօնական ցանկը ընդգրկում է ւելի քան 4000 յուշարձան:<sup>17</sup> 2023թ. սեպտեմբերից յետոյ այն ամբողջութեամբ անցել է Ազրպէյճանի վերահսկողութեան տակ: Ազրպէյճանը արդէն իսկ հասցրել է ւելրել եւ ոչնչացնել նաեւ 2023թ. սեպտեմբերից իր վերահսկողութեան տակ անցած տարածքների յուշարձանները: Մասնաւորապէս տարածուած նկարները եւ տեսանիւթերը փաստում են, որ ազրպէյճանցի զինուորականները Մարտակերտ-Քարվաճառ մայրուղուց ուղիղ նշանառութեամբ կրակ են բացել Թարթառի վերնահովտի նշանաւոր հոգեւոր կեդրոններից մէկի՝ Չարեքտար վանքի ուղղութեամբ<sup>18</sup>, տապալել Ստեփանակերտի 50 մեթրանոց խաչը<sup>19</sup>, քանդել Վանք գիւղի ավտոմեքենաների (ինքնաշարժների) համարանիշների պատը<sup>20</sup>, վանդալիզմի ենթարկել Ստեփանակերտում գտնուող Ստեփան Շահումեանի արձանը:<sup>21</sup>

---

15. Արցախի կորսուած յուշարձանները՝ շարունակուող վանդալիզմ. FIP - Aniarc.

16. «Սղնախի գերեզմանոցի ւելրումը (Թարմացում)», monumentwatch.org.

17. «Արցախի մշակութային ժառանգութիւնը յարձակումների թիրախում», Համլէտ Պետրոսեան, Հայկուհի Մուրադեան, Երեւան 2022թ., 56 էջ:

18. «Չարեքտարի վանքն ազրպէյճանական վանդալիզմի թիրախ», monumentwatch.org.

19. «Ազրպէյճանը տապալել է Ստեփանակերտի խաչը», monumentwatch.org.

20. «Վանքի ավտոմեքենաների համարանիշների պատը քանդուել է Ազրպէյճանի նախագահի հրամանով», monumentwatch.org.

21. «Ազրպէյճանցիները Ստեփանակերտում վանդալիզմի են ենթարկել Ստեփան Շահումեանի արձանը», monumentwatch.org.

Վտանգի տակ է յայտնուել նաեւ Գանձասարի Վանական համալիրը: Հոկտեմբերի 3-ին Ազրայէճանի մշակոյթի նախարարութեան յուշարձանների պահպանութեան վարչութիւնը յայտարարութիւն տարածեց, ըստ որի հայկական կողմն «օկուպացիայի ժամանակ» իբր վանդալիզմի է ենթարկել Գանձասարի վանքը՝ «անօրինական» վերականգնողական-վերանորոգման աշխատանքներ կատարելով, ինչն ըստ ազրայէճանական կողմի՝ հակասում է միջազգային իրաւունքների նորմերին եւ սկզբունքներին: Չբաւարարուելով այսքանով, ազրայէճանական կողմը պատմութեան կեղծարար Ռիզվան Հուսեյնովի կողմից 2023 թուականի հոկտեմբերի 4-ին տարածեց յայտարարութիւն, ըստ որի Գանձասարի վանքի եւ, մասնաւորապէս, Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու եւ գաւթի արձանագրութիւններն իբր կեղծուել, վերափոխուել են հայերի կողմից, ինչն իբր երեւում է արձանագրութիւնների հին ու նոր լուսանկարները համեմատելիս:<sup>22</sup>

Հետաքրքրական է հայկական մշակութային ժառանգութեան իւրացման հարցում նաեւ ռուս ուղղափառ եկեղեցու դիրքորոշումը եւ այս համատեքստում տեղի ունեցած որոշ իրադարձութիւններ: Մասնաւորապէս, պատերազմից յետոյ Բաքում ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսիյ Նիկանորովն իր առաջին հարցազրոյցներից մէկում անդրադարձել էր ոչ թէ Ազրայէճանում ռուս ուղղափառների խնդիրներին, այլ Աղուանական եկեղեցու եւ Հայ առաքելական եկեղեցու կապին: Ա. Նիկանորովը ծնուել ու մեծացել է Ազրայէճանում եւ զբաղուել է Ազրայէճանում քրիստոնէութեան հարցերի ուսումնասիրմամբ: 2004թ. Մոսկուայի հոգեւոր ակադեմիայում պաշտպանել է «Քրիստոնէութիւնը Կովկասեան Ալբանիայում» թեմայով ատենախօսութիւն, որտեղ նա Ազրայէճանին ներկայացնում է որպէս հազարամեակներով քրիստոնէայ երկիր: 2020թ-ին «Независимая газета»-ի հետ հարցազրոյցի ժամանակ պնդել է, որ 428թ-ին հայկական պետութեան գոյութեան դադարումից յետոյ տարածաշրջանում ստեղծուած որեւէ կոթող չի կարող հայկական համարուել: Գրիգորիսին համարում է Ալբանական եկեղեցու առաջին արքեպիսկոպոս, իսկ Դադիվանքն ու Գանձասարը աղուանացի իշխանների եւ կաթողիկոսների ընտանեկան դամբարան: Իր տուած հարցազրոյցներից մէկում էլ նա հայերին անուանել է «Կովկասում յայտնուած տարրեր»: 2021թ-ին հեղինակել է «Կովկասեան Աղուանքի եկեղեցու պատմութիւնն ըստ Մովսէսի Կաղանկատուացու» գիրքը, որտեղ նա շարունակել է իր անհեթեթ մտքերը: Հետաքրքրականն այն է, որ Բաքում ռուս ուղղափառ եկեղեցու եւ պատրիարքի ներկայացուցիչը քննարկում է աղուանական եկեղեցու վերականգնման հարցում ուղիներին օգնելու անհրաժեշտութիւնը:<sup>23</sup>

---

22. «Գանձասարի բնախորհրդանշան սկսուած է», monumentwatch.org.

23. Игумен Алексей (Никоноров): Блестящие результаты деятельности Мехрибан Алиевой по укреплению взаимопонимания между культурами я видел своими глазами! / Культура / Независимая газета (ng.ru).

## Ուղիների կողմից հայկական մշակութային ժառանգության իրացումը

Արցախի մշակութային ժառանգության իրացման գործում ազդալեզմանական իշխանությունները օգտագործում են նաև ուղիներին, ովքեր պատանդ են դարձել Ազրայեյճանի ձեռքին՝ հայ ժողովրդի դեմ: Ուղիների անցեալը թելերով կապուած է հայ ժողովրդի հետ, որը ազրայեյճանի համար հնարաւորութիւն է ստեղծում ուղիացնել հայկական մշակութային ժառանգութիւնը: Աշխարհագրօրէն ուղիական-աղուանական մշակութային անցեալը տարածում է Շաքի-Կապաղակ գօտում, որտեղ էլ ձեւաւորուել է նրանց քրիստոնէական մշակոյթը: Ազրայեյճանի կողմից հայկական մշակութային ժառանգութիւնը ուղիական ներկայացնելու բեմադրութիւններ յաճախակի են կազմակերպում յատկապէս 44-օրեայ պատերազմից յետոյ: Այդ քաղաքականութեան շրջանակում 2008թ. ապրիլին Ազրայեյճանն ուղի Ռաֆիկ Դանաքարիին ուղարկում է Երուսաղէմ մկրտուելու, որով նա դառնում է մահտեսի, ապա վերադառնում եւ մահտեսու իրաւունքով, ինչպէս յայտարարել է Ազրայեյճանի ուղիական համայնքի ղեկավար Ռոբերտ Մոբիլին, «վկայական է ստացել Երուսաղէմի քրիստոնէական եկեղեցիների կողմից»՝ որպէս ձեռնադրուած հոգեւորական ծառայութիւններ մատուցելու Նիժ գիւղի աղուանական եկեղեցում: <sup>24</sup> Եւ ահա, երբ 2020թ. նոյեմբերի 9-ի փաստաթղթով Շահումեանի շրջանն անցաւ ազրայեյճանական վերահսկողութեան տակ, այդ թում՝ Դադիվանքի վանական համալիրը, սկսուեց համալիրի ուղիականացումը: Վանական համալիրում մշտապէս վանական առանձնութեան մէջ են ապրել հայ հոգեւորականները՝ ամէն օր աղօթք հնչեցնել եւ պատարագ մատուցել եկեղեցում՝ կանխելով դրա իրացումը: Սկզբնական շրջանում ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ թոյլատրում էր հայ ուխտաւորների եւ հոգեւորականների այցը վանական համալիր: Սակայն ամիսներ անց արդէն Ազրայեյճանն արգելեց հայ ուխտաւորների եւ հոգեւորականների մուտքը վանական համալիր: Դրան զուգահեռ Ազրայեյճանը կազմակերպում էր ուղիների այցելութիւն վանական համալիր՝ այն ներկայացնելով որպէս աղուանական: Դադիվանքում ուղիները պատարագ են մատուցել ի յիշատակ պատերազմի ընթացքում սպանուած ազրայեյճանցի զինուորների: Ըստ նրանց՝ հայկական տարրերը եկեղեցում աւելացուել են 1993 թուականից յետոյ, երբ ողջ շրջանն անցաւ հայկական վերահսկողութեան ներքոյ:

2022 թուականի ապրիլի 14-ին Ազրայեյճանի կրօնական կազմակերպութիւնների հետ տարուող աշխատանքի պետական կոմիտէի կողմից Սուրբ Յարութեան (Սուրբ Զատիկին) տօնին ընդառաջ կազմակերպուել էր Ազրայեյճանում գործող քրիստոնէական կրօ-

---

24. Ուղիները՝ որպէս Աղուանքի հետնորդներ | Aliq Media Armenia.

նական համայնքների՝ այդ թում ուս ուղղափառ եկեղեցու, քրիստոնեական տարաբնոյթ կազմակերպութիւնների կրօնական ներկայացուցիչների այցը օկուպացուած Հադրութի շրջանի Ծակուռու Սուրբ Աստուածածին եւ Տողի Սուրբ Յովհաննէս եկեղեցիներ, որոնք ես ներկայացում են որպէս ալբանա-ուդիական:»<sup>25</sup>



2021թ. նոյեմբերի 4-ին CBC TV Azerbaijan ալիքն իր եւութիւպեան բաժնում տեղադրեց «Ազրպէյճանի աղուանա-ուդիական քրիստոնեայ համայնքի անդամներն այցելել են Հադրութ» վերնագրով տեսանիւթը: Այս անգամ նրանք այցելել էին Հադրութի Սպիտակ Խաչ վանք: Մինչ ուդիական համայնքի ներկայացուցիչ Ռոբերտ Մոբիլին յայտարարում է, որ սա իրենց պատմական այցելութիւնն է դէպի իրենց եկեղեցի, տեսախցիկը յստակ ֆիքսում է հայերէն արձանագրութիւնները: Նկատենք, որ Սպիտակ Խաչ վանքն իր անունը ստացել է 1346 թուականին այստեղ կանգնեցուած որմնափակ խաչքարից, որի բարաւորի հայերէն արձանագրութիւնը յայտնում է «Ես Աջամի՝ որդի Իշխանայ, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Ասուդարայ: Որք կարդէք՝ յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր՝ աղաչեմ: Ի թուիս: ՉՂԵ:»<sup>26</sup>

Հայ Առաքելական եկեղեցու հոգեւոր ենթակայութեամբ վաղ միջնադարեան ժամանակներից ի վեր գործող Հայ Աղուանից կաթողիկոսութեան հոգեւոր կեդրոնների՝ Ծիծեռնավանքի, Սպիտակավանքի, Գտչավանքի, Դադիվանքի եւ բազում այլ եկեղեցիների պատերին առկայ հայերէն բազմահազար վիմագրերն ու նրանց ներկայացրած տեղեկատուութիւնն այլեւս ջնջելն անհնար է, իսկ դրանք ոչ հայկական ներկայացնելուն ուղղուած բեմադրութիւնները՝ անիմաստ ու անտրամաբանական:

25. «Ազրպէյճանական կրօնական եւ ազգային «հանդուրժողականութեան» հերթական դրսեւորումը Ծակուռի եւ Տողի եկեղեցիներում», monumentwatch.org.  
 26. «Հադրութի Վանք գիւղի Սուրբ Խաչ վանքն Ազրպէյճանի կողմից աղուանա-ուդիական հռչակելու մի նոր փորձի մասին», monumentwatch.org.



## Միջազգային հանրութեան լուծումը՝ Ազրայեյճանի կողմից մշակութային էթնոցիդի իրականացման պատճառ

Մշակութային ժառանգութեան ոչնչացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքակրթական աղէտ: Եթե Արցախում տեղի ունեցած ցեղասպանութիւնն ու էթնիկ զտումները նպատակ ունէին ֆիզիկապէս ոչնչացնել արցախահայութեանը, նրանց հայրենազրկել, ապա մշակութային ցեղասպանութեան նպատակը տարածաշրջանից հայկական հետքի մաքրումն է, արցախահայութեան պատմական յիշողութեան ջնջումը, նրանց՝ որպէս էթնիկ խմբի ոչնչացումն ու պատմական իրողութիւնների կեղծումը: Այդ գործողութիւնները մարտահրաւէր են միջազգային հանրութեան համար: Միջազգային հանրութեան լուծումը համաձայնութիւնը, անտարբերութիւնը եւ անգործութիւնը սպառնալիք է ամբողջ աշխարհի համար: Ազրայեյճանը գործում է այն նոյն ձեռագրով, ինչպիսին որ ունեն միջազգային ահաբեկչական կառոյցները, օրինակ՝ «Իսլամական պետութիւն» ահաբեկչական կազմակերպութեան զինեալների կողմից Սիրիայում եւ Իրաքում համաշխարհային մշակութային ժառանգութիւն հանդիսացող օբյեկտների ոչնչացումը:

ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Պան Գի Մունը մշակութային վայրերի ոչնչացումը ռազմական յանցագործութիւն է համարել<sup>27</sup>, իսկ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար Իրինա Բոկովան այն անուանել է «մշակութային զտում» տերմինով: Միջազգային հանրութիւնը վաղուց պէտք է տեսական դատողութիւններից անցնէր հասցէական դատապարտման ու Ազրայեյճանի նման քաղաքականութեան կասեցմանը: Ազրայեյճանի կողմից պատմամշակութային յուշարձանների զանգուածային ոչնչացումը խախտում է ռազմական հակամարտութիւնների սկսման դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին Կոնվենցիան՝ ընդունուած Հաագայում 1954 թ. մայիսի 14-ին, եւ Հաագայի Կոնվենցիայի երկրորդ արձանագրութիւնը՝ ընդունուած 1999 թ. մարտի 26-ին:

Թէեւ 2021թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանը «Ռասայական խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում քննուող Հայաստանն ընդդէմ Ազրայեյճանի գործի շրջանակներում պարտաւորեցրել է Ազրայեյճանին «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի ու պղծման գործողութիւնները՝ ուղղուած հայկական մշակութային ժառանգութեան, ներառեալ՝ եկեղեցիների եւ այլ պաշտամունքի վայրերի, յուշարձանների, տեսարժան վայրերի, գերեզմանատների եւ արտեֆակտների դէմ»<sup>28</sup>, սակայն ինչպէս միջազգային դատարանի միւս որոշումները, այնպէս էլ այս

27. ՄԱԿ գլխաւոր քարտուղար. ԻՊ կողմից մշակութային արժէքների ոչնչացումը ռազմական յանցագործութիւն է - PanARMENIAN.Net.

28. ՀՀ ԱԳՆ յայտարարութիւնը ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի կողմից հրապարակուած որոշումների վերաբերեալ - mfa.am

որոշումները ոչ միայն չի կատարել Ազրպեյճանը, այլ հակառակը՝ շարունակել է իր ահաբեկչական գործողությունները՝ ի ցոյց դնելով այն հանգամանքը, որ չի յարգում միջազգային հանրության կողմից ընդունուած համամարդկային արժէքներն ու այն կոնվենցիաները, որոնք ստորագրուած եւ ընդունուած են հենց Ազրպեյճանի կողմից: Այդ քայլով Ազրպեյճանը ցոյց տուեց նաեւ իր անհանդուրժողականութիւնը Արցախի՝ հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ:

Յաւօք, պէտք է արձանագրենք, որ միջազգային հանրութեան կոչերն ու ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի որոշումները չկանխեցին Ազրպեյճանի՝ Արցախում հայերի էթնիկ զտումների ու ցեղասպանութեան իրականացման պլանները: Միջազգային հանրութեան նմանօրինակ կեցուածքի պատճառով, այսօր վտանգուած է նաեւ Ազրպեյճանի կողմից բռնազաւթուած տարածքներում աւելի քան 4000 հայկական մշակութային կոթողների ճակատագիրը: Փորձելով գտնել միջազգային հանրութեան յանցաւոր լռութեան պատճառները, գալիս ենք այն եզրակացութեան, որ միջազգային դերակատար երկրները չեն ցանկանում սրել իրենց յարաբերութիւնները Ազրպեյճանի հետ, իսկ միւս կողմից այն պայմանաւորուած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւններով, որով նա փաստացի ճանաչել է Արցախը որպէս Ազրպեյճանի մաս, իսկ Ազրպեյճանի ահաբեկչական գործողութիւնները որակել որպէս Արցախի խաղաղ բնակիչների կեանքին չսպառնացող:

Մեր կարծիքով, միջազգային հանրութիւնը Ազրպեյճանի հետ պատասխանատուութիւն է կրում ոչնչացուող մշակութային ժառանգութեան համար, նաեւ այն պատճառով, որ այդ ահաբեկչական պետութեանը 2023 թ-ի նոյեմբերի 7-ին Փարիզում կայացած ԵՈՒՆԵՍԿՕ-ի 42-րդ Գլխաւոր Կոնֆերանսում ընտրուած են փոխնախագահ՝ այդպիսով խրախուսելով նրա հակահայ գործողութիւնները:

Այժմ արդէն ԵՈՒՆԵՍԿՕ-ի փոխնախագահ պետութիւնը շարունակում է արգելափակել ԵՈՒՆԵՍԿՕ-ի առաքելութիւնը Լեռնային Ղարաբաղ ուղարկելու ՀՀ ԱԳՆ նախաձեռնութիւնը, որը խախտում է ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի 2021 թուականի դեկտեմբերի 7-ի որոշումը:

Այսպիսով պէտք է արձանագրենք, որ միջազգային հանրութիւնն այս պահին չունի այն գործիքակազմը, որը կը զսպի աշխարհում տեղի ունեցող մշակութային ցեղասպանութիւնները:

Ըստ այսմ, առաւել քան կարելի է դառնում մշակութային ցեղասպանութիւնը քրէականացնող նոր կոնվենցիայի ընդունումը:



**ԱՐՑԱԽԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՅԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ  
ԱՐՑԱԽԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱՅ**

Զեկուցող՝ Երեւանի «Գլաձոր» համալսարանի մագիստրանտ

**ՏԱԹԵԻԿ ԴԱԻԹԵԱՆ**

ՀՀ, Բ Երեւան

+37495936789

Խորհրդատու՝ Արցախի Հանրապետության Մարդու իրաւունքների պաշտպան

**ԳԵՂԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ**

Արցանքին գնահատանքի արժանացած ուսանող՝ Տաթևիկ Լ. Դալթեանի (ՀՀ) հետազոտությունը, նիւթ «Արցախից բռնի տեղահանության ազդեցությունը Արցախի երեխաների իրաւունքների վրայ», խորհրդատու՝ Գեղամ Ստեփանեան, Արցախի Հանրապետութեան Մարդու Իրաւունքներու Պաշտպան:

Իրաւագիտութեան մագիստրոս, տարբեր միջազգային եւ ներպետական գիտաժողովներին ներկայացել եւ զեկոյցներով, հետազոտման ուղղութիւնը Արցախահայութեան նկատմամբ իրականացուած ցեղասպանական գործողութիւնները:

Աշխատում եւ Հայաստանի Հանրապետութեան Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութիւնում:



*Բանալի բառեր*- Բռնի տեղահանություն, երեխաների իրաւունքներ, ռազմական գործողություն, Արցախի Հանրապետություն

*Աշխատանքի ամփոփագիր*- Սոյն աշխատանքում ներկայացւում է Ազրպէյճանի կողմից Արցախի Հանրապետութեան ինն ամսեայ շրջափակմանը յաջորդած ռազմական գործողութիւնների եւ դրա արդիւնքում Արցախի բնիկ հայ ժողովրդի բռնի տեղահանման արդիւնքում երեխաների խախտուած իրաւունքների մասին նկարագիր:

## **Նախաբան**

2023 թուականի սեպտեմբերի 19-ի կէսօրին Ազրպէյճանը լայնածաւալ ռազմական հրարձակում սկսեց Արցախի Հանրապետութեան դէմ: Իննամսեայ շրջափակմանը յաջորդած ռազմական գործողութիւնները սովի մատնուած ժողովրդի դէմ հետապնդում էր մի նպատակ՝ Արցախի հայաթափում: Խաղաղ բնակչութիւնը գտնուում էր կրակի տակ, թիրախաւորում էին քաղաքացիական նշանակութեան օբյեկտները՝ դպրոցները, եկեղեցիները, հիւանդանոցները: Ռազմական գործողութիւններին չմասնակցող երեխաների իրաւունքները զինուած հակամարտութեան կամ ռազմական իրավիճակում պիտի երաշխաւորուած լինեն, սակայն Ազրպէյճանի կողմից անտեսուում են մարդասիրական իրաւունքի բոլոր նորմերը: Սոյն զեկոյցը համապարփակ կերպով ներկայացնում է Ազրպէյճանի կողմից Արցախում էթնիկ (ազգային) զտումների հետեւանքով երեխաների իրաւունքների խախտումները:

## **Հիմնական բովանդակություն**

Հետազօտութեան հիմնական բովանդակութիւնը վերաբերում է Արցախի նկատմամբ Ազրպէյճանի կողմից 2023 թուականի սեպտեմբերի 19-24-ին իրականացուած ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման ընթացքում երեխաների իրաւունքների խախտումների, միջազգային բազմաթիւ կոնվենցիաներով (միջազգային պայմանագրերով) ամրագրուած՝ երեխաների իրաւունքների՝ ներառեալ կեանքի, կրթութեան, առողջութեան իրաւունքների խախտումներին:

## **Ներածություն**

*Թեմայի արդիականություն.* Արցախի հանրապետութեան հայաթափումը ուղիղ հարուած էր հայոց պետականութեանը: Արցախի Հանրապետութեան ժողովրդի ցեղասպանութիւնը Ազրպէյճանի կողմից կատարուել է միջազգային հանրութեան լուռ համաձայնութեամբ: Արցախի ամբողջական օկուպացիան (բռնագաւթում), պատերազմական



յանցագործությունները, որոնք Ազրայեյճանը կատարել է կատարում է պետք է համապատասխան արձագանքի արժանանան՝ ոչ միայն կոչերով, այլև յստակ քայլերով: Միջազգային հանրութեանն ու մարդու իրաւունքներով զբաղուող կառոյցները պետք է առերեսուեն այն ցեղասպան գործողութիւններին, որոնք կատարուել են Արցախում՝ հայտնացութեան եւ հայերի հանդէպ ատելութեան հիման վրայ: Արցախի ժողովրդին սեփական հայրենիքից ուժի սպառնալիքով բռնի տեղահանման տանելը չի կարող Արցախի հարցի կարգաւորման ճանապարհ լինել:

*Հիմնական նպատակները.* Պէտք է ուսումնասիրել եւ ներկայացնել Արցախից բռնի տեղահանուած շուրջ 30,000 երեխաների խախտուած իրաւունքները, որոնք ոտնահարուել են ինչպէս բռնագաղթի ճանապարհին, այնպէս էլ ռազմական գործողութիւնների ընթացքում:

Ռազմական գործողութիւններին չմասնակցող երեխաների իրաւունքները զինուած հակամարտութեան կամ ռազմական իրավիճակում երաշխաւորուած են «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանութեան մասին» 1949 թ. Ժնեւի կոնվենցիայով, ինչպէս նաեւ 1977 թուականի յունիսի 8-ի թիւ 1 լրացուցիչ արձանագրութեամբ:

ՄԱԿ Երեխայի իրաւունքների մասին կոնվենցիայի համաձայն իրաքանչիւր երեխայ ունի՝

1. Կեանքի իրաւունք
2. Անհրաժեշտ սննդի, հագուստի եւ անվտանգ վայրում ապրելու իրաւունք
3. Կրթութեան իրաւունք

4. Իրենց մայրենի լեզուով խօսելու, իրենց մշակույթն ու կրօնը պահպանելու իրաւունք
5. Աջակցութիւն ստանալու իրաւունք, եթէ նրանք վնասուածք են ստացել, անտեսուել են, վատ վերաբերմունքի են արժանացել կամ տուժել են պատերազմի հետեւանքով, որպէսզի կարողանան վերականգնել առողջութիւնն ու արժանապատուութիւնը
6. Պատերազմի ժամանակ ունեն պաշտպանուած լինելու իրաւունք:

2022 թուականի դեկտեմբերի 12-ին սկսուած եւ շուրջ 9 ամիս տեւող շրջափակմանը, որին անդրադարձ էր կատարել նաեւ Human Rights Watch-ը իր զեկոյցում նշելով՝ «...կարելի է եզրակացնել, որ դա միտումնաւոր փորձեր է էթնիկ հայերի կեանքը դարձնել այնպէս թշուառ, որ նրանք այլ ելք չեն ունենայ, քան հեռանալ»<sup>1</sup> յաջորդեց 2023 թուականի սեպտեմբերի 19-ին Ազրպէյճանի լայնածաւալ յարձակումը՝ Արցախի Հանրապետութեան դէմ աւելի տեսանելի դարձնելով Ազրպէյճանի յանցաւոր նկրտումների վերաբերեալ կանխատեսումները: Արցախի Հանրապետութեան խաղաղ բնակչութիւնը գտնուում էր հրետակոծութեան տակ, ըստ ԶԼՄ հետազօտութիւնների եւ ականտեսների Ազրպէյճանի ԶՈՒ-ն կիրառել է հրետանի եւ անօդաչու թռչող սարքեր: Դիտարկումներն ու անցկացուած հարցազրոյցները ցոյց են տուել, որ քաղաքացիական օբյեկտները այդ թում ուսումնական հաստատութիւնները դիտաւորեալ թիրախ են դարձել Ազրպէյճանական զինուժի կողմից 2023 թուականի սեպտեմբերեան ագրեսիայի ընթացքում: Արցախում բնակուող շուրջ 30,000 երեխաների իրաւունքներ խախտուած են եղել ինչպէս շրջափակման ընթացքում այնպէս էլ ռազմական գործողութիւնների սկսման եւ դրան յաջորդող՝ իրադարձութիւնների ընթացքում:

Դէպքերի իրադարձութիւնները յստակ ուսումնասիրելով կարող ենք եզրակացնել, որ Բաքուի կողմից նախապէս մտածուած է եղել Արցախի Հանրապետութեան դէմ ռազմական գործողութիւնների սկսման ժամը՝ այն սկսուել է ցերեկը՝ կէսօրից յետոյ՝ երբ երեխաներն ու ուսանողները դասի են եղել: Շարունակուող ռմբակոծութիւնները խաղաղ բնակչութեան նկատմամբ միտուած են եղել մեծացնելու խուճապը՝ երեխաների եւ ծնողների միջեւ կապի հաստատումն անհնար դարձնելով:

Մարդասիրական ճգնաժամի ընթացքում, ինչպիսին Արցախում տիրող իրավիճակն էր, երեխաները համարուում են ամենախոցելի խումբը: Ուստի նրանց շահերն ու հիմնարար իրաւունքները, ներառեալ նրանց կեանքի իրաւունքը, ընտանիքում եւ համայնքում ապրելու, առողջութեան իրաւունքը, անձնային զարգացման իրաւունքը, դաստիարակուելու եւ պաշտպանուելու իրաւունքը պահանջում են առաջնահերթ եւ կոնկրետ ուշադրութիւն:

---

1. Statement of the Human Rights Watch, “Azerbaijan: Ensure Civilians’ Rights in Nagorno-Karabakh”, 23.09.23  
// <https://www.hrw.org/news/2023/09/23/azerbaijanensure-civilians-rights-nagorno-karabakh>



Արցախի 30,000 երեխաներ տուժել են ենթարկուելով բռնի տեղահանման՝ մնալով բաց երկնքի տակ առանց սննդի ու հիգիենայի (hygiene) պարագաների:

Երեխաների իրաւունքների կոմիտէի, ՄԱԿ-ի Անվտագութեան խորհրդի, Գլխաւոր ասամբելայի, Եւրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունուած փաստաթղթերով կարելուել է ոչ միայն ռազմական գործողութիւնների ընթացքում երեխաների իրաւունքների խախտման անթոյլատրելի լինելը,

այլ նաեւ հետեւանքների կանխարգելման այն հրամայականը, որ անհրաժեշտ է երեխաների առօրեայ կեանքի, նրանց մտաւոր եւ ֆիզիկական զարգացման երաշխաւորման համար: Այս կառոյցների կողմից բազմիցս դատապարտուել է նաեւ ուսումնական հաստատութիւնների, երեխաների խնամք եւ պաշտպանութիւն իրականացնող հաստատութիւնների վրայ յարձակումն ու նրանց թիրախաւորումը:

ՄԱԿ-ի Երեխայի իրաւունքների մասին կոնվենցիայի (պայմանագրի) 38-րդ յօդուածի 1-ին կէտի համաձայն՝ մասնակից պետութիւնները պարտաւորուած են յարգել միջազգային մարդասիրական իրաւունքի նորմերը (օրէնքները), որոնք կիրառուած են զինուած ընդհարումների դէպքում եւ առնչուած են երեխաներին եւ ապահովել դրանց նկատմամբ յարգանքը:


Հաշուի առնելով վերոգրեալը, որ Ազրայէճանի կողմից իրականացուող ռազմական գործողութիւնները ուղղակիօրէն ազդում են երեխաների բնականոն կեանքի վրայ՝ խախտելով միջազգային իրաւունքով երաշխաւորուած հիմնարար իրաւունքները:

Ազրայէճանի կողմից ռազմական գործողութիւնների հետեւանքով կան արձանագրուած երեխաների սպանութեան դէպքեր, բազմաթիւ երեխաներ մնացել էին առանց հարազատների եւ առանց տարհանման հնարաւորութեան: Արցախում մարդիկ յուսահատ փորձում էին գտնել իրենց երեխաներին, որոնց հետ կապն ընդհատուել էր<sup>2</sup>: Սեպտեմ-



2. Արցախի Աժ պատգամաւոր Նելլա Գրիգորեան 23/09/2023 <https://news.am/arm/news/782874.html>

բերի 20-ի դրությամբ վիրաուր երեխաների թիւը եղել է 13: Արցախի Սառնաղբիւր գիւղում զոհուել է 5 խաղաղ բնակիչ որոնցից 3-ը երեխաներ են եղել, որոնք սպանուել են դպրոցում:



3

Ազրայէճանի կողմից խաղաղ բնակչության միտումնաւոր թիրախաւորման հետեւանքով, որոշ շրջաններում, որտեղ կապը կտրուած է եղել մայրաքաղաք Ստեփանակերտի հետ, որոշ բնակիչներ չեն կարողացել լքել բնակավայրը եւ պարզապէս թաքնուել են նկուղներում, եկեղեցիներում կամ դպրոցներում:

Որոշ դիտարկումների ընթացքում պարզ է դառնում, որ երեխաները բախուել են սնունդի սահմանափակումների, սանիտարական պայմանների եւ առողջապահական խնամքի անհասանելիութան՝ ինչպէս օրինակ, ռազմական գործողութեան ընթացքում երկու երեխայ ծնուել է նկուղում, իսկ յատկապէս Արցախի սահմանամերձ գիւղերից տարհանուած երեխաները, ովքեր ռազմական գործողութեան ամառուից յետոյ չէին կարող վերադառնալ իրենց տները եւ ստիպուած ապաստան էին գտել Ստեփանակերտի օդանաւակայանում՝ գիշերում էին դրսում, առանց սնունդի, հագուստի, հիգիենայի (hygiene) պարագաների:

Իսախտուել է նաեւ երեխաների հոգեկան առողջութեան իրաւունքը՝

Հանրութեան շրջանում տարածուած խուճապի պատճառով, երբ հարազատները չէին կարողանում գտնել, կապ հաստատել իրենց հարազատների հետ, փորձում էին որեւէ տեղեկատուութիւն ստանալ համացանցի միջոցով՝ տեղադրելով անհետ կորած կամ կապի բացակայութեան պատճառով կապի դուրս չեկած հարազատի լուսանկար-

3 Արցախի Հանրապետութեան ՄԻՊ աշխատակազմ:



ները, որոնք լայն տարածում էին գտնում ազրալեյճանական տելեգրամեան ալիքներում, որտեղ Ազրալեյճանցի օգտատերերը աստելութիւն էին տարածում խրախուսելով գտնել, սպանել, խոշտանգել ու բռնաբարել անհետ կորածներին՝ ներառեալ երեխաներին: Սա մեծապէս ազդում էր երեխաների հոգեկան ներաշխարհի վրայ, ուրախ ու սարսափ տարածելով, յատկապէս այն երեխաների շրջանում, ովքեր փնտրում էին իրենց հարազատներին:

2023 թուականի սեպտեմբերի 24-ին Արցախի բնակչութիւնը չունենալով այլընտրանք՝ Ազրալեյճանին ինտեգրուելու (միանալու) սպառնալիքի տակ ստիպուած է լինում լքել իր հայրենիքը:

Ազրալեյճանի ռազմատենչ գործողութիւնների արդիւնքում խախտուել է երեխաների՝ իրենց մայրենի լեզուով խօսելու, իրենց մշակոյթն ու կրօնը պահպանելու իրաւունքը: Արցախի բնակչութեանը բռնի հպատակեցման Ազրալեյճանի նպատակներից մէկն այն էր, որ բնակչութիւնն այլեւս կինտեգրուի Ազրալեյճանին եւ կը դառնայ Ազրալեյճանի քաղաքացի՝ կորցնելով իր մայրենի լեզուն, կրօնն ու մշակոյթը: Բռնի տեղահանման պարագայում, ցաօք, մասամբ եւս բախում ենք այս իրաւունքի խախտման դրսեւորումներին, քանի որ ՀՀ-ում Արցախից բռնի տեղահանուածների տեղաբաշխումը չի իրականացում ըստ համայնքային բաժանման, երեխաները կորցնում են իրենց Արցախեան մշակութային առանձնայատկութիւնների պահպանման ու արցախեան բարբառով խօսելու հնարաւորութիւնը:

Բռնի տեղահանման օրերին՝ Գորիս Ստեփանակերտ ճանապարհին անցնելը տեսում

էր տասնեակ ժամեր նոյնիսկ օրեր: Ինչպէս Արցախից բռնի տեղահանուածներն են ասում՝ այդ օրերին՝ Գորիս-Ստեփանակերտ կեանքի ճանապարհը դարձաւ գաղթի ու խոշտանգման ճանապարհ: Անցկացուած հարցազրոյցներից պարզ է դառնում, որ Ազրիպայէճանի կողմից ամիսներ առաջ Հակարիի կամրջին տեղադրուած ապօրինի անցակէտով հարկադրուած անցնելը էլ աւելի է խորացրել արցախահայերի բռնագաղթի ճանապարհի տառապանքները:

### Պատմութիւն 1

Յստակ մօտեցում չկար, իւրաքանչիւրի համար անցակէտում ստուգման մի մեթոդ էին օգտագործում: Երեխաներին, կանանց հայիոյում էին, տղամարդկանց ստիպում վազել մեքենայի հետեւից: Ամբողջ ճանապարհն անցնում էր «Վազգէն, Վազգէն» վանկարկումների ներքոյ»:

Յ.Գ. «Վազգէն» նկատի ունենալով Վազգէն Սարգսեանին խմբ.

### Պատմութիւն 2

Ազրպայէճանական անցակէտը վախի այլ տիրոյթ էր: Չգիտէիր արդե՞ք կը հասնես մինչ էնտեղ, իսկ հասնելուց արդե՞ք կ'անցնես: Ամէն տեսակ խօսակցութիւններ էինք լսում անցակէտի ստուգումների մասին, իսկ մենք արդէն շատ վատ վիճակում էինք: Երեխաները վախից չէին քնում, իսկ անցակէտի մօտ հասնելիս երեխաներին ծածկեցինք տաք հագուստով, ձեւացրին, թէ քնած են, վախենում էինք, որ չիջեցնենք մեքենայից, չվնասեն: Երեխաները հոգեբանական ծանր վիճակում են:

Հաշմանդամութիւն ունեցող երեխաները կրկնակի դժուարութիւնների են հանդիպել բռնի տեղահանման ժամանակ՝ կապուած հենաշարժողական խնդիրների հետ՝ ժամերով անշարժ մնալով մեքենայում կամ անհրաժեշտ օրթոպեդիկ պարագաները իրենց հետ վերցնելու անհարմարութեան վերաբերեալ: Բացի դա Արցախում հաշմանդամութիւն ունեցող երեխաների տունը (ինչպէս Լուսինէ Իսրայէլեանի դէպքում<sup>4</sup>) շատ դէպքերում յարմարեցուած էր երեխաների հենաշարժողական խնդիրներին, օրինակ գտնուում էր առաջին յարկում կամ մուտքի դիմաց ունէր թեքահարթակ իսկ ՀՀ տեղափոխուելով գտնել, վարձակալել այնպիսի բնակարան, որը յարմարեցուած կը լինի հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար շատ դէպքերում բարդ կամ նոյնիսկ ան-

---

4. Արցախից բռնի տեղահանման ճանապարհը՝ կրկնակի ցաւ հաշմանդամութիւն ունեցող անձանց համար <https://www.youtube.com/watch?v=ugmKnRoVsJM>

հնար է: Սրանից զատ, ինչպես օրեր առաջ ԱՍՀՆ նախարարը յայտարարեց Կառավարության նիստի ընթացքում, դեռևս կան տեխնիկական խնդիրներ, կապուած բազաներին տիրապետելու անհասանելիութան, տուեալները հաւաքագրելու առումով<sup>5</sup>, ինչի հետեւանքով էլ Արցախից բռնի տեղահանուած երեխաները չեն կարողանում ստանալ իրենց հաշմանդամութան նպաստները, եւ անհրաժեշտ օրթոպեդիկ պարագաները, կամ անցնել անհրաժեշտ բժշկասոցիալական փորձաքննութիւն, որի պատճառով աւելի է դժուարանում երեխաների առանց այդ էլ բարդ իրավիճակը՝ առաջացնելով տեղաշարժի, բնականոն կեանքին անցնելու լրացուցիչ խնդիրներ սրանով իսկ ազդելով երեխաների ազատ տեղաշարժի իրաւունքի իրացման վրայ:

Միջազգային իրաւունքի համաձայն՝ կրթութան իրաւունքը պէտք է ապահովուի եւ պաշտպանուի բոլոր յանգամանքներում, բոլոր իրավիճակներում, ներառեալ ճգնաժամերը եւ արտակարգ իրավիճակները, որոնք առաջանում են քաղաքացիական ընդհարումների եւ պատերազմների հետեւանքով:

Արցախում 2023 թուականի սեպտեմբերեան ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման ընթացքում խախտուել է 30 հազարից աւելի երեխաների կրթութան իրաւունք, որոնցից շուրջ 21 հազարը դպրոցահասակ: Արցախից բռնի տեղահանուած երեխաները ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման կազմակերպման ողջ ընթացքում զրկուած են եղել կրթութան իրաւունքի իւրացումից: Այս պահին էլ Արցախից բռնի տեղահանուած դպրոցահասակ 21 հազար երեխաներից ՀՀ մարզերի եւ Երեւանի դպրոցներում ընդգրկուել է դեռ 17 հազարը:

Կրթութան իրաւունքի խախտման դրսեւորումներն արտայայտուում են նաեւ ինչպէս Արցախի Հանրապետութեան բուհերի այնպէս էլ ՀՀ բուհերում սովորող ուսանողների դէպքում: Հաշուի առնելով, որ Արցախի Հանրապետութիւնում կրթութիւնն անվճար էր, Արցախի բուհերից տեղափոխուած ուսանողները բախուել են լրացուցիչ վարձավճարի հետ կապուած խնդիրների: Չնայած այս մասով ՀՀ Կառավարութիւնն իրականացնում է կրթութան ընդհատուած իրաւունքի վերականգնմանն ուղղուած աջակցութեան ծրագրեր թէ՛ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, թէ՛ քոլէճներում եւ ուսումնարաններում սովորող ուսանողների համար՝ կրթաթոշակային ծրագրի տեսքով, որով հնարաւոր է իրականացնել ուսման վարձի փոխհատուցում, սակայն կայ արցախցի ուսանողների մի խումբ, որոնք Հայաստանի բուհերում ուսանող են եղել բռնի տեղահանութիւնից առաջ, նրանք այս ժամանակահատուածում չեն տեղափոխուել Հայաստան եւ չեն ունեցել կրթութան ընդհատման խնդիր, բայց բռնի տեղահանման հետեւանքով անհնար է դարձել նրանց կրթութեան յետագայ ֆինանսաւորումը: Եթէ նախկին

---

5. Արցախից բռնի տեղահանուած թոշակառուներն ու նպաստառուները ՀՀ-ից կը ստանան յատկացումներ 28/09/2023 <https://armeniasputnik.am/20230928/arcakhic-brni-teghahanvats-tvoshakarunern-u-npastarunery-hhic-kstanan-hatkacumner-66594618.html>

նում այս ուսանողների ծնողները կամ Արցախի Հանրապետության կառավարութունը հոգում էին նրանց կրթության ֆինանսավորման հարցը, ապա այս պահին դա օբյեկտիվորեն հնարավոր չէ: Այդ ուսանողները չեն հանդիսանում ՀՀ կառավարության կողմից տրուող պետական կրթաթոշակային ծրագրի շահառու, սակայն ուսման շարունակության հետ կապուած ֆինանսական խնդրի պատճառով չեն կարող իրացնել իրենց կրթության իրաւունքը<sup>6</sup>:

Շուրջ 30,000 երեխաներ ինչպէս շրջափակման ընթացքում, այնպէս էլ ռազմական գործողութիւնների եւ բռնի տեղահանման ընթացքում ենթարկուել է հոգեբանական եւ ֆիզիկական բռնութեան, ու վախի: Տեսել ու զգացել կորուստ: Երեխաների կեանքին առնչուող գրեթէ բոլոր ոլորտներում Ազրաբէյճանի կողմից իրականացուած բռնի տեղահանումը իր ազդեցութիւն է ունեցել. երեխաները սպանուել են, վիրաւորուել, հարկադրուած են եղել լքել իրենց տներն ու հայրենիքը, զրկուել կրթութիւնից եւ անվտանգ ու ապահով միջավայրով պայմանաւորուած բոլոր առաւելութիւններից: Շատերը կորցրել են իրենց հայրերին ու եղբայրներին, որոշ դէպքերում նաեւ մայրերին կամ պապիկներին, ովքեր որպէս քաղաքացիական անձինք սպանուել են Ազրաբէյճանի ԶՈՒ անձնակազմի կողմից:

Տասնեակ գոհերի հարազատներ չէին կարողանում յուղարկաւորել իրենց հարազատներին՝ ոմանք հարազատների մարմիններն իրենց հետ տեղափոխել են ՀՀ, որպէսզի ազրաբէյճանական զինուած ստորաբաժանումները չպղծեն իրենց հարազատների շիրիմները, ինչպէս արուել է դա 2020 թուականից յետոյ Արցախի Հանրապետութեան օկուպացուած շրջանների դէպքում: Սա եւս հոգեբանական մեծ սթրես է եղել երեխաների համար, սակայն որոշ դէպքերում հարազատները յուղարկաւորել են իրենց հարազատների մարմինները չիմանալով, որ գիւղը ժամեր անց պիտի յանձնուի թշնամուն, ուստի այսօրինակ դէպքում երեխաները բախուել են մէկ այլ իրաւունքի խախտման եւ հոգեբանական սթրեսի՝ այլեւս իրենց հարազատների շիրիմներին այցելելու անհնարիւնութեան:

Արցախից բռնի տեղահանման արդիւնքում ընտանիքները կորցրել են ամէն ինչ, եւ յայտնուել եկամտի աղբիւրի բացակայութեան առջեւ, ինչը իր բացասական ազդեցութիւն է ունենում երեխաների եւ նրանց ընտանիքների բարեկեցութեան համար:

Պատերազմը, բռնի տեղահանումը իր կործանարար ազդեցութիւնն է թողնում նաեւ երեխաների հոգեկան առողջութեան եւ բարեկեցութեան վրայ: Շուրջ 30,000 երեխայ գտնուում է դէպրեսիայի, տագնապի եւ հոգեկան առողջութեան այլ խնդիրների վտանգի տակ՝ հնարաւոր երկարաժամկէտ հետեւանքներով եւ ազդեցութեամբ:

Չնայած ներկայում Արցախի Հանրապետութիւնում ստեղծուած իրավիճակը բաւա-

---

6. Քննարկուել է Արցախից բռնի տեղահանուած երեխաների եւ երիտասարդների կրթութեան կարիքներին վերաբերող հարցեր 03/11/2023 <https://hetq.am/hy/article/161733>

րար չէ անվտանգ վերադարձի համար, սակայն միջազգային իրաւունքի մեխանիզմները թոյլ են տալիս Արցախի Հանրապետութեան՝ իրենց տները քաճ բնակիչներին իրացնելու իրենց բնակավայր վերադառնալու իրաւունքը: Արցախի Հանրապետութեան բնակիչներն ունեն ներքին ինքնորոշման իրաւունք եւ համաձայն Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին միջազգային դաշնագրի՝ «Առանց արտաքին միջամտութեան ազատ որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը, տնտեսական, սոցիալական եւ մշակութային զարգացումը»:

## **Առաջարկութիւններ**

1. Արցախի Հանրապետութեան խորհրդարանի կողմից, որպէս Արցախի ժողովրդի կողմից ընտրուած օրինակ մարմին դիմել ՀՀ Կառավարութեանը Ազրպէյճանի հետ յետագայ բանակցութիւնների փաթեթում ներառել Արցախահայութեան վերադարձի եւ ինքնորոշման իրաւունքի հարցը: Ինչը թոյլ կը տայ Արցախի Հանրապետութեան ողջ բնակչութեանը՝ ներառեալ 30.000 երեխաներին վերականգնել իրենց խախտուած իրաւունքները՝ այդ թում ինքնորոշման իրաւունքը, կեանքի, ապահով միջավայր ունենալու իրաւունքը:
2. Արցախի Հանրապետութիւնից բռնի տեղահանուած անձանց կացարանային ապահովումը՝ տեղաբաշխումը կատարել ըստ համայնքային բաժանման, որպէսզի ունենանք հնարաւորութիւն վերականգնելու յատկապէս երեխաների՝ իրենց Արցախեան մշակութային առանձնայատկութիւնների պահպանման ու արցախեան բարբառով խօսելու հնարաւորութիւնը, իրաւունքը:
3. Արցախից բռնի տեղահանուած երեխաների ուսումնական հաստատութիւններում՝ երեխաների հետ աշխատանքում ներգրաւել Հոգեբանի, սոցիալական աշխատողի, լոգոպետի ծառայութիւն: Բռնի տեղահանման, ռազմական գործողութիւնների ընթացքում տուժած երեխաների հոգեկան առողջութեան իրաւունքի վերականգման ապահովման համար:
4. Արցախից բռնի տեղահանուած ուսանողներին ՀՀ ԲՈՒՀ-երում ներգրաւելու համար, կատարել օրէնսդրական փոփոխութիւն, որպէսզի այն ուսանողները, ովքեր մինչ սեպտեմբերի 19-ը ուսանելու նպատակով արդէն իսկ գտնուում էին ՀՀ-ում եւ ըստ այդմ չեն ունեցել կրթութեան ընդհատում, (նրանց ուսման վարձը փոխհատուցում էր կամ Արցախում ծնողների աշխատանքի միջոցով կամ Արցախի Հանրապետութեան կառավարութեան կողմից,) սակայն, բռնի տեղահանման հետեւանքով փաստացի անհնար է դարձել նրանց կրթութեան յետագայ ֆինանսաւորումը: Օրէնսադրական փոփոխութիւնը թոյլ կը տայ նշուած խմբի ուսանողներին եւս ներառելու ուսման վարձի փոխհատուցման ծրագրում:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՐԷ ՍԵԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ